

# ՄԱՐԶԻԿ

ՀԱՄԸՄ

مارزقك

مجلة رياضية شهيرة  
تصدرها جمعية الهومنتمن بيروت

38-րդ ՏԱՐԻ, 2019, ԹԻԻ 413 VOL. XXXVIII N° 413 السنة الثامنة والثلاثون - عدد رقم ٤١٣

**marzig**  
SPORTS MAGAZINE

Հ.Ս.Ը.Ս.Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ  
Ա. ՀԱՄԱԳՈՒՄԱՐ, ԱԹԷՆՔ





# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ Դ. ԼԻԱԳՈՒՄԱՐԻ

**Հ.**Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան քառամեայ նստաշրջանի (2015-2019) Դ. լիազումար նիստերը տեղի ունեցան 8 եւ 9 Մայիս 2019-ին, Աթէնքի մէջ, Յունաստան:

Լիազումարը ծանրացաւ միութեան 100-ամեակի կեդրոնական ձեռնարկներուն արժեւորման վրայ, շեշտելով իրագործուած ձեռնարկներուն պատմական տարողութիւնն ու ապագայի իմաստով փորագրուած դրոշմներուն իրողութիւնը: Արդարեւ, միութեան 100-ամեակի կեդրոնական ձեռնարկին զոյգ Վեհափառ Հայրապետներուն հովանաւորութիւնը եւ իրենց ներկայացուցիչներուն ներկայութիւնը, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան նախագահին շնորհած նախագահութիւնն ու իր եւ վարչապետին ներկայութիւնը մեծագոյն փաստերն էին 100-ամեայ միութեան հանդէպ իրենց ունեցած յարգանքին ու գիտակցութեան:

Կեդրոնական Վարչութիւնը ստացաւ նաեւ Հայաստանի Հանրապետութեան վարչապետին յղած շնորհակալագիրը՝ ուղղուած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, Հայաստան-Սփիւռք կապերու զարգացման գծով միութեան ունեցած մեծ ներդրման ու ազգանպաստ գործունէութեան, ինչպէս նաեւ միութեան 100-ամեակին վերաբերող:

Կեդրոնական Վարչութիւնը բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի Վարչութեան եւ անդամներուն



անսակարկ ու նուիրական աշխատանքը միութեան 100-ամեակի կեդրոնական ձեռնարկներու յաջողութեան, ինչպէս նաեւ՝ 100-ամեակին նուիրած Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ մարզախաղերուն եւ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ բանակումին յաջող աւարտը երաշխաւորող իրենց աշխատանքին ու գործակցութեան ուղղութեամբ: Լիազումարը շեշտեց նաեւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի Վարչութեան վերջին երկամեայ աշխատանքներուն թափն ու արձանագրած յաջողութիւնները, անդամարշաւի ու աշխատելաճծի ծիրերէն ներս:

Կեդրոնական Վարչութիւնը յատուկ շեշտը դրաւ միութեան 100-ամեակի ձեռնարկներուն յաջողութեան համար իրենց նիւթաբարոյական նպաստը սիրայօժար տրամադրած 10 կնքահայրներուն միութենական գիտակցութեան եւ ներդրումին,

որոնց շնորհիւ կարելի եղաւ իրագործել միութեան 100-ամեակի ձեռնարկները: Կեդրոնական Վարչութիւնը անդրադարձաւ նաեւ աշխարհասփիւռ Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւններուն նիւթաբարոյական աջակցութեան, որոնք յաւելեալ փայլք տուին 100-ամեակի ձեռնարկներուն յաջողութեան:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ  
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Շար.ը Գ. Կողք



## ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	
Նոր էջ	2-3
ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ	4-5
ՊԱՏԳԱՄ	6-7
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ Ա. ՋԱՍԱԳՈՒՄԱՐ	8-17
ԱՆԴՐԱԴԱՐՁ	18-21
ԱՐՁԱԳԱՆԳ	22-23
ԱԿՆԱՐԿ	24-28
ՈՂՋՈՅՆ	29-31
ՅՈՒՇԵՐ	32-33
ՄԱՍՆԱԾԻԴԷ ՄԱՍՆԱԾԻԴ	34-63
ՄԵՐ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԸ	64-72



**ՎՐԻՊԱՆ**  
Տպագրական վրիպակով մը, «Մարզիկ»ի անցեալ թիւին մէջ, Սելլա Թնճուկեանի «Հ.Մ.-Ը.Մ.ի 100-ամեակ» յօդուածին վերջին տողը լոյս չէր տեսած: Վրիպակին համար մեր ընթերցողներուն ներողամտութիւնը խնդրելով՝ յօդուածը կը վերահրատարակենք ամբողջութեամբ:



Marzig sports magazine is published by Homenetmen Central Committee-Sevan Building, Rue 77, Sector 4, Bourj Hammoud, Beirut, Lebanon. Tel: 961 1 248043, 961 1 260117, E-mail: marzig@Homenetmen.org, P.O.Box: 80486 Bourj Hammoud, Lebanon, www. Homenetmen.org

**Խմբագիր:** Վիգէն Աւագեան (vicken.avakian@homenetmen.org)

**Խմբագրական կազմ:** Գրիգորիս Պողարեան, Մարտ Բէշիշեան, Մեան Նազարեան, Տիրան Ծախինեան:

**Վարչական կազմ:** Պարթիկ Կիւլպէնկեան, Արտ Մոսիկեան, Սիլվա Սաղորեան, Յարութ Ալանանեան, Նազո Հասիպեան, Ռիթա Օղուլեան, Արլին Ծամնասեան:

**Էջադրում եւ ընդհանուր չեւառուում:** Արշո Պալեան, **Կողքի պատրաստութիւն:** Y Concept International, **Գրաշարութիւն:** Շողիկ Պոյանեան, **Տպագրութեան պատրաստութիւն:** Photogravure Paklayan, **Տպագրութիւն:** Համազգայինի «Վահէ Սէրեան» րպարան, Պէյրութ, Լիբանան:

**Քաժանորդագրութիւն:** «Մարզիկ» կը հասնի աշխարհի 25 երկիրներու քաժանորդներու: Տարեկան քաժանորդագրութեան սակ՝ ճշդութեամբ է՝ Լիբանան 25 \$, Միջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ 50 \$, Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 55 \$: Լիբանանի մէջ թերթին հարապաճառի սակն է 5000 Լ.Ո.: **Ցրում:** «Մարզիկ»ի ցրումը Լիբանանի մէջ կը կատարուի յարուկ ցրուիչով (հեռ. 71/239209): Թերթը կարելի է ստանալ նաեւ «Համազգային»ի գրասենտրէն: Լիբանանէն դուրս թերթը կը ստացուի «Liban post»-ի միջոցով:

# ՆՈՐ ԷՋ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ  
Ա. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԱՌԻԹՈՎ)



Ամեն ինչ սկիզբ ու վերջ ունի:  
Հ.Մ.Ը.Մ.Ի համար սկիզբը 1918 թուականն է: Վերջը... հեռաւո՛ր ապագայի հարց կը թուի ըլլալ, այնքան ատեն որ մարմնակրթական այս մեծ միութիւնը գիտէ ե՛րբ եւ ինչպէ՛ս ինքզինք վերանորոգել, թարմացնել ու կատարելագործել:

Միութեան 100-ամեակը կանխած համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերն ու բանակումը, իրենց մասնակիցներու թիւով եւ կազմակերպման յաջողութեամբ, փաստը տուի՞ն, որ ինչքա՛ն առողջ եւ կայտառ են Հ.Մ.Ը.Մ.ի մարզական թէ սկաւտական թետերը: Անոնք կը գործեն ժամանակի պահանջներով, տեսարար կը ձգտին լաւին ու լաւագոյնին, հետեւաբար անոնց շարքերը կը մնան ստուար ու խիտ:

Նորերը անդադար կու գան Հ.Մ.Ը.Մ.ի շարքեր, մինչ հիները բնական կարգով իրենց տեղերը կը զիջին նորերուն, բայց... հանգիստ չեն ճանչնար: Չեն կրնար ճանչնալ՝ Հ.Մ.Ը.Մ.ական իրենց դաստիարակութեամբ ու կազմաւորումով, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ականութիւնը միութեանականութիւն ըլլալէ առաջ կեանքի ձեւ է, ոճ է, առօրեայ ապրում եւ տազնապ է: Իսկ այդ բոլորը տարիք ու ժամանակ չեն ճանչնար, սկիզբ ու վերջ չունին:

Հետեւաբար, մարտահրաւիրը, գոր երկար ժամանակէ ի վեր կը ներկայանար միութեան դիմաց, այն էր թէ ի՞նչ ընել եւ ի՞նչպէս ընել, որ սկաւտական թէ մարզական շարքերուն հրաժեշտ տուող եւ աշխատանքի խանդ ու եռանդ ունեցող երիտասարդ-երիտասարդուհիները, մինչեւ անդամական-վարչական գործունէութեան ծաւալում, մնան միութեան մէջ, գործեն իրենց նմաններուն հետ եւ ազգային առողջ մթնոլորտի մէջ պատրաստուին վաղու մեր կեանքին:

Ստանդարտները նոր չէր, լուծումն էր նոր: Լուծումը եկաւ Հ.Մ.Ը.Մ.ի 10-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին, որ միութեան զարգացման ռազմավարական ծրագիրը մշակելով՝ առաջադրեց միութեան մէջ ստեղծուող երիտասարդական բաժանմունքի մը, որուն մաս կազմեն 18-30 տարեկան Հ.Մ.Ը.Մ.ական տղաք ու աղջիկներ: Հսկայական ներուժ, որ երբեմն պիտի չուզէր այլ միութիւններու անդամակցիլ, ջերմ համակիր մը մնալով հանդերձ այդ միութիւններուն:

Առաջադրանքը լայն հող գտաւ նախ Արեւմտեան Մ.

Նահանգներու մէջ, ուր ատեն մը փորձարկելէ ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կազմակերպեց Աթլետի երիտասարդական առաջին համագումարը՝ նպատակ ունենալով.-

- Երիտասարդական բաժանմունքի ըսկզբնական փորձառութիւնը գնահատել եւ որոշ պատշաճեցումներով այլ շրջաններուն օրինակ ծառայեցնել:

- Երիտասարդութիւնը յուզող օրուան հարցերուն եւ մտահոգութիւններուն շուրջ Հ.Մ.Ը.Մ.ական երկխօսութիւն ծաւալել:

- Հ.Մ.Ը.Մ.ի 12-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի նախօրեակին, երիտասարդութեան ձայնը երիտասարդներու՝ ճամբով միութեան գերագոյն ժողովին հասցնել:

Երիտասարդական համագումարը տեղի ունեցաւ միութեան 100-ամեակի տօնակատարութիւններէն անմիջապէս ետք եւ նշեց միութեան երկրորդ 100-ամեակի առաջին գործնական քայլը՝ աշխատանքի նոր հորիզոններ բանալու անոր 24 շրջաններուն դիմաց:

Համագումարը յաջողութեամբ պսակուեցաւ, որովհետեւ ան բաւարարեց տարիներու կարիք մը եւ նոր էջ բացաւ միութեան արդի պատմութեան մէջ՝ աշխատանքի յանելալ դաշտ մը ստեղծելով բոլորին համար:

Երիտասարդական Ա. համագումարին մասնակիցները առաջին անգամ ըլլալով քով-քովի եկան, իրարու փորձառութիւններ բաժնեկցեցան եւ ազգային թէ միութեանական հարցերու շուրջ տեսակէտներ փոխանակեցին: Այսպէս, աշխարհագրական, քաղաքակրթական եւ լեզուական պատարարները փուլ եկան եւ միութեանական միեւնոյն դրօշին տակ համախմբուած տղաք ու աղջիկներ, իրենց իրապատկութիւնները պահելով հանդերձ, մտածեցին, տազնապեցան ու արտայայտուեցան Հ.Մ.Ը.Մ.ական խոր համոզումներով եւ արդար սպասումներով: Անոնց ելոյթներէն ի յայտ եկաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ականութիւնը ժառանգական կապ մը չէ իրենց համար, ո՛չ ալ ծնողական կամ բարեկամական թելադրութեան մը արտայայտութիւնն է: Այդ բոլորէն առաջ ու վե՛ր, ան հաւատարմութիւն է մեր ինքնութեան, կապուածութիւն է այն բոլոր արժէքներուն, որոնք 100-ամեայ այս միութեան բարոյական անաղարտ դիմագիծը կը կազմեն եւ տիպար միութեանականի արժանիքները կը բնորոշեն:





Համագումարին մեծ եղաւ երիտասարդութեան սպասումը միութեան պատասխանատուներէն՝ աւելի հզօր, աւելի տարածուն եւ աւելի ժամանակակից Հ.Մ.Ը.Մ. մը ունենալու: Փոխադարձաբար, քիչ չեղան պատասխանատուներու ակնկալութիւնները երիտասարդներէն՝ մեր կեանքին մէջ աճող ներկայութիւն դառնալու, յատուկ դերակատարութիւն ստանձնելու եւ հայութեան հաւաքական երթին գործօն ու գիտակից մասնակցութիւն բերելու իմաստով:

Երիտասարդական առաջին համագումարը յաջողեցաւ միութեան երիտասարդ ներկայացուցիչները քանի մը օրով դուրս բերել իրենց համայնքներու տեղական-տեղայնական հոգերէն եւ անոնց դէմ պարզեց, իբրեւ հաւաքական մէկ ամբողջութիւն, համահայկական մտահոգութիւններով գործելու ուղին: Մէկ կողմէ ան սփիւռքեան զանազան միատրոներու միջեւ համագործակցութիւնը շեշտեց, իսկ միւս կողմէ՝ Սփիւռք-Հայաստան փորձառութիւններու փոխանակման պահանջը ներկայացուց:

Համագումարը միայն միութիւնը հետաքրքրող հարցեր չարծարծեց: Օրակարգի բազմակողմանի քննարկման նիւթ դարձուց մերօրեայ երիտասարդութիւնը յուզող բոլոր

հարցերը՝ տեսարար ընդգծելով ազգայինին կառչելու եւ միջազգայինին բացուելու անհրաժեշտութիւնը: Քննարկելեցան ազգային ինքնութեան տազնապն ու կրկնակ պատկանելիութեան հարցը, տեղեկատուական արհեստագիտութեան կապուած մտահոգութիւններն ու հայեցի դաստիարակութեան խնդիրները, հասնելու համար մինչեւ միութեան երկրորդ 100-ամեակի մարտահրաւերներուն եւ երիտասարդական աւելի լայն շրջանակներու բացուելու հրամայականին:



Իր տեսակին մէջ առաջինը ըլլալով հանդերձ, համագումարը երիտասարդական մթնոլորտի իր անկեղծութեամբ, անմիջականութեամբ եւ հարազատութեամբ ուսանելի բազմաթիւ դասեր փոխանցեց միութեան պատասխանատուներուն: Միաժամանակ, ան նորագոյն փաստը տուաւ Հ.Մ.Ը.Մ.ի կենսունակութեան: Անուրանալի ա՛յն իրականութեան, որ հակառակ 100-ամեայ իր տարիքին, այս միութիւնը զիտէ իր շարունակականութիւնը ապահովող ուժին ինչպէ՛ս գուրգուրալ: Գիտէ տեսարար վերանորոգուիլ ու զարգանալ՝ ապագայի իր քայլերը այժմէն առաջնորդելով դէպի նորանոր 100-ամեակներ:

**Հ.Մ.Ը.Մ.Ի 24 ՇՐՋԱՆՆԵՐ, 110 ՄԱՄՆԱԾԻՒՂԵՐ ԵՒ ՄԵԱՒՈՐՆԵՐ**

**Հայասրան:** Երեւան, Մալաթիա, Ջէթուն, Կոմիւրաս, Էրեբունի, Արուսեան, Չարենցաւան, Հրազդան, Արմաիր, Էջմիածին, Մարտունի, Կիւմրի, Վեպի. **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս. **Ռուսիա:** Մոսկուա. **Լիբանան:** Պէյրութ, Չաիլէ, Թրիփոլի, Պուրճ Համուր, Այնճար, Ծիւնի, Անթիլիաս, Ժըրէյրէ, Պաուշրիէ, Ռաուրա. **Սուրիա:** Հալէպ, Գամասկոս, Լաթաքիա, Գամիշլի, Էսասպ. **Յորդանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Աղէքսանդրիա. **Իրաք:** Պաղատա, Մուսուլ. **Քուէթ:** Բուէյթ. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Աթէնք, Գոքինիա, Սելանիկ. **Անգոլա:** Լոնդոն. **Ասորիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսէյ. **Հոլանդիա:** Ալմեյո, Ալքմար, Առնհեմ. **Գերմանիա:** Միւնիխ. **Շուէդ:** Սթոքհոլմ, Վեստերոս, Սուդերթելիա. **Պուլկարիա:** Սոֆիա, Ռուսէ, Փրովփիլ, Վառնա, Շումէն, Պուրկաս, Տուրիչ. **Գանատա:** Մոնթրէալ, Համիլթըն, Թորոնթօ, Էտմարթ, Մէք Գաթրինգ, Լաւալ, Վանքուվըր. **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելէս, Սան Գրանսիսքօ, Յրեզնօ, Մոնթրէալ, Փասսարիկա, Կլէմարէյ, Օրէնճ Զաւոնթի, Սան Ֆրանցիսկօ, Սան Տիէյո, Ինըրքր Էմիլայր, Սանթա Գլարա, Զրեւեթա Հոլիփ, Պրըպէնք, Լաս Վեկաս, Ֆինիքս, Ուոլնամ Բրիք, Նորթ Հոլիվուդ, Սաքրամենթօ, Սանթա Զլարիթա. **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինգթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Նիւ Երրզի, Շիքսօ, Ֆիլադելֆիա, Տիքոն, Փրովիդենս, Ֆլորիդա, Ալլընի, Շարլոթ, Մերիլէք Հոլիփ. **Հարաւային Ամերիկա:** Պուէնոս Այրէս, Գորրոպա, Մոնթեվիդէօ. **Ասորիա:** Սիւրնի («Անդրանիկ»), Սիւրնի («Արաքս»), Սիւրնի («Կամք»), Սիւրնի («Արարար»), Մելպուռն.



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՄՆԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ, ՎԱՐՉԱՊԵՏԻՆ, ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒՄ



Հ.Մ.Ը.Մ.Ի պատուիրակույթի ընդունելու միջոցով, բաղկացած Կեդրոնական Վարչութեան ատենապետ Գառնիկ Մկրտիչեանէ, Կեդրոնական Վարչութեան անդամ Բագրատ Եսայեանէ, Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի վարչութեան ատենապետ Դաւիթ Յակոբեանէ եւ վարչութեան անդամ Սանտրա Վարդանեանէ, Երկուշաբթի, 29 Ապրիլին, այցելեց Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեանին եւ ներկայացուց միութեան աշխատանքներն ու ապագայի ծրագիրները: Այս առիթով, նախագահ Սարգսեան հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ. միաւորելու, համախորհրդակցելու եւ կրթելու կարեւոր դեր ունի Սփիւռքի մէջ: Հարկ է, որ ան մեծ եռանդով շարունակէ ազգային ինքնութեան պահպանման եւ մայր հայրենիքի հետ կապերու ամրապնդման աշխատանքը:

Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակույթի ընդունելով, վարչապետ Փաշինեան զնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի դերը հայապահպանման գործին մէջ եւ կառավարութեան անունով պատրաստակամութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի զանազան նախաձեռնութիւններուն աջակցութեան:

Նախագահ Արմէն Սարգսեան Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութեան գործակցութեան իր պատրաստակամութիւնը յայտնելով, նշեց, թէ Սփիւռքի մէջ կարիքները շատ են: Անհրաժեշտութիւնը կայ նոր ժամանակներու նորահաս սերունդներու պահանջներուն եւ խնդիրներուն համահունչ նոր մօտեցումներու:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը վարչապետ Նիկոլ Փաշինեանին ներկայացուց միութեան ծրագիրները եւ յատկապէս Մայիսին, Յունաստանի մէջ տեղի ունենալիք Հ.Մ.Ը.Մ.ի երիտասարդական համագումարը:

Այցելութեան ընթացքին քննարկուեցան Հայաստանի, յատկապէս մարզերու մէջ սկսուող շարժման աշխուժացման վերաբերող զանազան հարցեր եւ նախաձեռնութիւններ:

Այցելութեան աւարտին, պատուիրակույթի ընդունելու նախագահ Արմէն Սարգսեանին փոխանցեց միութեան 100-ամեակին առիթով հրատարակուած յատուկ նամականիշը:

## ... ՆԱԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒՄ ՄՕՏ



### ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԻ ՄՕՏ

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակույթի ընդունելու այցելեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանին:





Հ.Մ.Ը.Մ-ի պատուիրակությունը այցելեց նաև Հայաստանի կրթության եւ գիտության նախարար Արայիկ Յարուսթիանեանին եւ Հայաստանի պաշտպանության նախարար Դաւիթ Տոնոյեանին:

Նախարար Արայիկ Յարուսթիանեանին հետ պատուիրակությունը քննարկեց նախարարության հետ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի կապերու սերտացման եւ համագործակցության կարելիությունները: Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչության ատենապետը նախարար Յարուսթիանեանին ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը եւ նշեց, որ այս տարի կ'ամբողջանայ Հայաստանի մէջ վերընծիւղման 30-ամեակը: Հ.Մ.Ը.Մ-ը ոչ-կառավարական կազմակերպություն է, որ 1997-էն ի վեր մաս կը կազմէ Համաշխարհային Սկաուտական Շարժումին: Ան մասնաճիւղեր ունի Երեւանի եւ Հայաստանի զանազան մարզերուն մէջ:

Իր կարգին, նախարար Արայիկ Յարուսթիանեան փափաք յայտնեց մօտէն ծանօթանալու Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի դաստիարակչական ծրագիրներուն եւ համապատասխան ձեւերով օգտագործելու զանոնք:

Ապա, պաշտպանության նախարար Դաւիթ Տոնոյեանին այցելելով, Հ.Մ.Ը.Մ-ի պատուիրակությունը շնորհակալութիւն յայտնեց միութեան 100-ամեակի տօնակատարութիւններուն անոր ցուցաբերած աջակցութեան եւ գործակցութեան համար: Պատուիրակությունը արծարծեց նաև պաշտպանության նախարարութիւն-Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ համագործակցութեան հեռանկարները:

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՆԵՐԿԱՅԱՏՈՒՑԻՉԻՆ ՄՕՏ**

Հ.Մ.Ը.Մ-ի պատուիրակությունը այցելեց նաև էջմիածին եւ տեսակցու-

**Հ.Մ.Ը.Մ-Ի ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՐՅԱԽԻ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԿՕ ՍԱՀԱԿԵԱՆԻ**

Երեքշաբթի, 30 Ապրիլին, Հ.Մ.Ը.Մ-ի պատուիրակությունը մը, բաղկացած՝ Կեդրոնական Վարչության ատենապետ Գառնիկ Մկրտչեանէ, Կեդրոնական Վարչության անդամ Բագրատ Եսայեանէ եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի ատենապետ Դաւիթ Յակոբեանէ, Ստեփանակերտի մէջ այցելեց Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակեանին: Այցելութեան ներկայ գտնուեցան Արցախի Ազգային Ժողովի նախագահի տեղակալ Վահրամ Բայայեան եւ պաշտօնատար այլ անձնակազմի անդամները:



Հ.Մ.Ը.Մ-ի պատուիրակությունը ընդունելով, նախագահ Բակո Սահակեան նկատել տուաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ի հետ համագործակցութիւնը պահանջուած է: Ան բարձր գնահատեց միութեան գործունէությունը հայրենիքի եւ Սփիւռքի նորահաս սերունդներու հայեցի դաստիարակութեան եւ մարմնակրթութեան մէջ:

Հ.Մ.Ը.Մ-ի պատուիրակությունը, իր կարգին, Արցախի նախագահին փոխանցեց միութեան մեծ ընտանիքին ողջոյնները եւ հաստատեց, որ Արցախը միշտ եղած է Հ.Մ.Ը.Մ-ականներու դաստիարակութեան, մտածումներուն եւ հոգիներուն մէջ: Հ.Մ.Ը.Մ-ականներ իրենց կեանքը զոհարեցին եւ Արցախի համար, որովհետեւ միշտ պատրաստ եղած են հայրենի հողի ամբողջականութեան եւ անվտանգութեան պահպանման համար:

Այս առիթով, պատուիրակությունը նախագահ Բակո Սահակեանին հետ քննեց նաև Արցախի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի գործունէությունը ծաւալելու ծրագիրները:

Թիւն մը ունեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ՝ Նաթան Արք. Յովհաննիսեանի հետ եւ միութեան շնորհակալութիւնը փոխանցեց 100-ամեակի տօնակատարութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսին յղած պատգամին եւ ներկայացուցիչին համար: Պատուիրակությունը քննեց Հ.Մ.Ը.Մ-ի հայաստանեան կառույցին հետ գործակցութեան կարելիությունները: Այս առիթով, պատուիրակությունը Նաթան Արք-ին յանձնեց Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսին փոխանցուելիք 100-ամեակի յուշանուէրը:





# ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԷՏՔ Է ԱՐԴԻԱԿԱՆԱՆԱԿ ԵՒ ԶՕՐԱՆԱԿ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԽՕՍԲԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ՄԻՈՒԹԵԱՆ Ա. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԲԱՑՄԱՆ)

**Հ**.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակի փառալուր տօնակատարութիւններէն ետք, այսօր, մեր միութիւնը երկրորդ 100-ամեակին առաջին քայլը կ'առնէ երիտասարդական այս աննախընթաց համագումարով:

Աննախընթաց կ'ըսենք, որովհետեւ առաջին անգամը ըլլալով նման համագումար մը տեղի կ'ունենայ միութեան պատմութեան մէջ: Գաղափարը թերազրուած է Հ.Մ.Ը.Մ.Ի 11-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովէն եւ կազմակերպումը որոշուած է այս քառամեակի Կեդրոնական Վարչութեան առաջին լիազորմար նիստերուն:

Ինչպէս գիտէք, մինչեւ օրս Հ.Մ.Ը.Մ. ունեցած է Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներ, միջ-դիւանական խորհրդակցութիւններ եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական համագումարներ: Երիտասարդական այս համագումարը կու գայ աւելնալու անոնց վրայ, իբրեւ նորութիւն եւ անհրաժեշտութիւն:

Ինչո՞ւ այս համագումարը:

Թէ՛ Հ.Մ.Ը.Մ.ի ռազմավարական ծրագրերը իր իններորդ կէտով, թէ՛ Հ.Մ.Ը.Մ.ի վերջին քանի մը Պատգամաւորական Ժողովները նկատեցին, որ մեր միութիւնը կը գործէ սկաւտական եւ մարզական թեւերով ու մեծաթիւ շարքերով: Սակայն, երբ այդ շարքերը հասնին երիտասարդութեան հանգրուանին, եւ աւելի ճիշդը՝ 18-30 տարեկանին, ինչ-ինչ պատճառներով անոնք աշխատանքի դաշտ չեն գտներ իրենց դիմաց, հետզհետէ կը հեռանան միութենէն եւ հետագային քիչերն են միայն, որոնք տարիներ ետք կը վերադառնան եւ վարչական պատասխանատուութիւններ կը ստանձնեն:

Հետեւաբար, առաջին հերթին անհրաժեշտութիւնը զգացուեցաւ ստեղծելու միջավայր մը, ուր երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ականներ կարենան իրենց գործունէութիւնը շարունակել, աշխատանքի կարելիութիւններ ստեղծել եւ իրենց կապուածութիւնը պահել միութեան հետ:



Համագումարին գաղափարը ծնաւ նաեւ այլ մտահոգութենէ մը, այն՝ որ մեր երիտասարդ տղաքն ու աղջիկները կանուխէն պատրաստել համա-Հ.Մ.Ը.Մ.ական հարցերու ծանօթացման եւ քննարկման: Ի վերջոյ, այսօրուան երիտասարդները վաղուան մեր պատասխանատուներն են եւ միութեան Պատգամաւորական Ժողովի մակարդակով արծարծուած խնդիրները քննելը, անոնց մասին կարծիք յայտնելը եւ ապա համագումարին ճամբով այդ կարծիքները մինչեւ Պատգամաւորական Ժողով հասցնելը, անկասկած, որ օգտակար փորձառութիւն է:

Երրորդ եւ հիմնական նպատակը այս համագումարին, օրուան հարցերը, մանաւանդ երիտասարդութիւնը յուզող հարցերը, նոյնինքն երիտասարդութեան ակնոցով քննելն է եւ այդ հարցերուն նոր

եւ արդիական լուծումներ գտնելն է:

Յարգելիներ,

Ընդունինք, որ աշխարհը այսօր տագնապահար է եւ երիտասարդութիւնը կը կրէ տեսակաւոր տագնապներու լուրջ հետեւանքները: Արեւելքը կ'ապրի կրօնական ծայրայեղութեան տագնապ, իսկ Արեւմուտքը կը դիմագրաւէ ծայրայեղ ազատամտութեան եւ աշխարհայնացման տագնապ: Արժէքներու բախում մը նկատելի է կրօնական, քաղաքակրթական եւ մշակութային բոլոր մակարդակներու վրայ:

Իսկ ո՞ւր է հայ երիտասարդութիւնը այս բոլորին մէջ: Մեր միութիւններուն մէջ՞ն է, շո՞ւրջն է, թէ... մեր կեանքին գլխաւոր բացակասն է:

Իսկ ի՞նչ կ'ընենք մենք, իբրեւ Հ.Մ.Ը.Մ., իբրեւ շրջաններու միաւորներ, գաղութներ, դպրոցներ եւ եկեղեցիներ, ազգ ու պետութիւն, հայ երիտասարդութիւնը հաւաքական մեր կեանքին մէջ ներգրաւելու համար:

Մինչեւ օրս մեր որդեգրած միջոցները սկսած են իրենք զիրենք սպառել: Նոր իրականութիւնները կը թերազրեն նոր մօ-





տեցումներ: Ազգային-միութենական մեր կառույցները կորսնցուցած են երբեմնի իրենց գրաւչութիւնը: Անցեալի գործունէութեան դրամազուլիւր սկսած է մաշիլ: Միութենականութիւնը դադարած է ժառանգական յատկանիշ մը ըլլալէ: Զաւակներ անպայման չեն հետեւիր իրենց ծնողներու օրինակին, որովհետեւ դաստիարակութիւն հասկացողութիւնը փոխուած է եւ հարցում մը սկսած է ինքզինք պարտադրել, թէ՛ աւանդական մեր արժէքները այլեւս որքանո՞վ կը համապատասխանեն նոր սերունդի մտահոգութիւններուն, պայմաններուն եւ սպասումներուն:

Այսօրուան երիտասարդութիւնը շատ աւելի բան գիտէ՝ քան իր ծնողներն ու պատասխանատուները: Ան կ'ապրի երէցներէն տարբեր վայրի մը մէջ, որ անիրական է, երեւակայական է: Համացանցի աշխարհն է այդ, ուր ան աւելի ժամանակ կ'անցընէ՝ քան իր հարազատ տան ու շրջանակին մէջ: Ի՞նչպէս հասնիլ այդ աշխարհը: Ի՞նչ լեզուով հաղորդակցիլ այդ տղոց ու աղջիկներուն հետ, որոնք օրէ օր կը տիրապետեն ընկերային հաղորդակցութեան այնպիսի միջոցներու, որոնք հարցականի կ'ենթարկեն անպայման քով-քովի դայու, միութենական ըլլալու, ժողով թէ սեմինար կատարելու անհրաժեշտութիւնը:

Երիտասարդութիւնը նորութիւն եւ արդիականութիւն կը փնտռէ իր շուրջ: Հետամուտ է լայն հորիզոններու: Չի փափաքիր կառուցային-կանոնադրային կաղապարներու ենթարկուիլ: Ան կը նախընտրէ միութենական աշխատանքի մը օժանդակել, բայց միութենական չըլլալ: Մնալ համակիր՝ քան յանձնառութիւն եւ պատասխանատուութիւն ստանձնել: Գործել առանձին նպատակի մը համար, բայց ոչ՝ միութենական պարտաւորութիւններու շարքի մը համար:

Նորերու հետաքրքրութիւնը շատ աւելի համամարդկային հարցերու շուրջ է՝ քան ազգային եւ միութենական մտահոգութիւններու, որովհետեւ առաջինին գործադաշտը անասման է, ըստ իրենց, մինչդեռ ազգայինն ու միութենականը դատապարտուած են մնալու սահմանափակ շրջանակի մէջ:

Այս բոլորը իրականութիւններ են, որոնց մասին անպայման պէտք է խօսիլ, ապա ծրագրել, որոշել եւ գործի՝ անցնիլ

նախկինէն աւելի արագ կ'ընդթով, դաստիարակութեան եւ քարոզչութեան արդի մօտեցումներով, տեղեկատուական արհեստագիտութեամբ, կառուցային ժամանակակից յարմարութիւններով եւ մեր շրջապատին աւելի լայնօրէն բացուելու քաղաքականութեամբ:

Պէտք է հասնիլ մեզմէ հեռու գտնուող երիտասարդութեան: Իսկ հասնելու համար պէտք է արդիականանալ եւ զօրանալ:

Պէտք է ներգրաւել երիտասարդութիւնը, բերել գալն մեր մօտ, իսկ բերելէն ետք պէտք է կարենալ պահել մեր մէջ, մեր կողքին:

Այս բոլորը համագումարին քննելի հարցեր են:

Պէտք է խօսիլ այս բոլորին մասին եւ երիտասարդութեան ձայնը հասցնել մինչեւ Պատգամաւորական Ընդհանուր Ժողով, ուր միութենական կարգով առաջարկները կ'ընան հաստատուիլ եւ որոշուի ուժ ստանալ:

**Յարգելիներ՝,**  
Միութեան երիտասարդական առաջին համագումարը Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութիւնն է, իսկ ան կը հիւրընկալուի Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Երջանային Վարչութեան կողմէ, որուն պէտք է շնորհակալ ըլլալ, որովհետեւ անցնող ամիսներուն Վարչութիւնը մեծ աշխատանք կատարեց այս համագումարին գործնական աշխատանքները հետապնդելու եւ անոր ամբողջական յաջողութիւնը ապահովելու համար:

Շնորհակալութեան խօսք համագումարի զեկուցաբերներուն, մասնակից շրջաններուն եւ ձեզի՝ սիրելի քոյրեր եւ եղբայրներ, որ ձեր աշխատանքները, համալսարանները ու գործերը զոհելով, աշխարհի չորս կողմերէն ժամանած էք Աթէնք՝ մասնակից դառնալու Հ.Մ.Ը.Մ.ական այս կարեւոր հանդիպումին:

Բարի եկած էք բոլորդ: Յաջողութիւն համագումարի աշխատանքներուն եւ բարի երթ Հ.Մ.Ը.Մ.ի երկրորդ 100-ամեակին:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐԿՐՈՐԴ 100-ԱՄԵԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՆՈՐՈՒԹԻՒՆԸ՝

# ԱԹԷՆՔԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԼՈՒՐՁ ԱԶԳԱՆՇԱՆԸ ԿՈՒ ՏԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ՍՏԵՂԾՄԱՆ



**Հ**Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Յունաստանի Շրջանային Վարչութեան հիւրընկալութեամբ, Ուրբաթ, 10 Մայիսի առաւօտեան ժամը 10-ին, Աթէնքի «Նովոթեյ» պանդոկի ժողովարահին մէջ ընթացք առաւ միութեան երիտասարդական առաջին համագումարը, մասնակցութեամբ միութեան 17 շրջաններէ 37 երիտասարդ-երիտասարդուհիներու, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան եւ Յունաստանի Շրջանային Վարչութեան անդամներու, ինչպէս նաեւ՝ համագումարին մասնակից վեց շրջաններու վարչական ներկայացուցիչներու՝ դէպի հանգամանքով:

### ԲԱՅՈՒՄԸ

Երկօրեայ համագումարին բացումը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի «Յառաջ նա-

հատակ» քայլերգով, որմէ ետք ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լռութեամբ յարգեցին Շուշիի ազատագրման կռիւներուն եւ ընդհանրապէս Արցախեան պայքարի ճակատներուն զոհուած ազատամարտիկներուն եւ հայկական բանակի զինուորներուն յիշատակը: Ապա, մասնակիցները ծանօթացուցին իրենք զիրենք, մինչ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան ծանօթացուց համագումարին ներկայ Կեդրոնական Վարչութեան 12 անդամները (բանաւոր կը բացակայէր Փարիզէն եղբ. Անդրանիկ Պահարեան), «Մարզիկ» խմբագիրն ու Կեդրոնական Վարչութեան գործավարը: Մանօթացումէն ի յայտ եկաւ, որ համագումարին Հ.Մ.Ը.Մ.Ի շրջանները ներկայ են հետեւեալ ներկայացուցիչներով:-  
Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ- Սեւակ Նազարեան, Նեյիի Ղազարեան, Դալար Մազլումեան:

Յունաստան- Արփի Փափագեան, Արա Ճանիկեան:  
Կիպրոս- Փանոս Մկրտիչեան:  
Լիբանան- Նժդէհ Մկրտիչեան, Սեւակ Քէթնճեան:  
Պաղտատ- Արա Եոնովիքեան: Վարչական ներկայացուցիչ՝ Վարդան Սարգիսեան:  
Գահիրէ- Կարին Կրպոյեան:  
Արեւմտեան Մ. Նահանգներ- Շահան Աթմաճեան, Զեփիւռ Աւաննէսեան, Սօսէ Խաչատուրեան: Վարչական ներկայացուցիչ՝ Սեւակ Կարապետեան:  
Արեւելեան Մ. Նահանգներ- Լոուի Փիլիպոսեան, Նանար Քէօրքիւնեան, Մկրտիչ Արսլանեան:  
Գանատա- Թինա Տարտարեան, Դալար Պալեոգեան, Դրո Աթոյիկեան: Վարչական ներկայացուցիչ՝ Լէոնի Սարմազեան:  
Հարաւային Ամերիկա- Միքայէլ Տէմիրճեան, Սիլվա Արսլանեան, Սոֆիա





Իր երկրորդ 100-ամեակի առաջին քայլով, Հ.Մ.Ը.Մ. կառուցային-կազմակերպական կարեւոր իրագործում մը կատարեց՝ սկստութեան եւ մարզական իր բաժանմունքներուն կողքին յառաջացնելով երիտասարդական բաժանմունք մը, որ մէկ կողմէ սկստութեան, մարզական շարքերը պիտի կանգնէ իր չափահաս անդամներու շարքերուն, իսկ միւս կողմէ՝ աշխատանքի նոր դաշտեր պիտի ստեղծէ 18-30 տարեկան անդամներու համար, որոնք բաւարար հեղափոխութիւնն ու յանձնառութիւնը ունին հայ կեանքին առնչակից մնալու:

Երիտասարդական բաժանմունքի մը յառաջացման գաղափարը ծնած է 2011-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Ժ. Պարգամաւորական Ընդհանուր Ժողովին որդեգրուած ռազմավարական ծրագիրէն (տեսնել էջ 12-13) եւ 2016-էն ի վեր փորձարկուած է Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանին մէջ:

- Քէչեան: Վարչական ներկայացուցիչ՝ Թամար Պլոյս Հոճաճանեան:
- Աւստրալիա- Անի Պօղոսեան, Նարինէ Աբրեւան, Կիմա Եկորեան, Մայքըլ Գորոզոսեան: Վարչական ներկայացուցիչ՝ Կարպիս Գորոզոսեան:
- Լոստոն- Թամար Աբրամեան, Անայի Օհանեան:
- Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս- Նենսի Գալոյեան, Կասիա Օսկանեան:
- Մարսէյ- Գայիանէ Տէր Պօղոսեան, Մելինէ Տէր Պօղոսեան:
- Ալմերո- Յակոբ Գասպարեան, Յովիկ Մովսէսեան: Վարչական ներկայացուցիչ՝ Բաֆֆի Թերզեան:
- Վիեննա- Յակոբ Սահակեան, Մարինա Փոսթաճեան:
- Պոլկարիա- Սրբուհի Գաբրիէլեան:
- Կազմուեցաւ համադրումարին դիւանը եւ համադրումարի աշխատանքները ընկերային ցանցերով ծանօթացնող յատուկ յանձնախումբը: Իբրեւ նախա-



գահներ, դիւանին մաս կազմեցին եղբայրներ Սեւակ Նազարեան (Հայաստան) եւ Նժդեհ Մկրտիչեան (Լիբանան): Իբրեւ քարտուղարներ անոնց միացան եղբայրներ Յակոբ Սահակեան (Վիեննայէն) եւ Շահան Աթմաճեան (Արեւմտեան Մ. Նահանգներէն): Ընկերային ցանցերով զբաղող եռանդամ յանձնախումբը բաղկացաւ հետեւեալներէն.- քոյրեր Դալար Մազլումեան (Հայաստան), Սիրվա Արսլանեան (Հարաւային Ամերիկա) եւ եղբ. Մայքըլ Գորոզոսեան (Աւստրալիա):





**Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
ԲԱՅՄԱՆ ԽՕՍԲԸ**

Բացման խօսքով հանդէս եկաւ հիւրընկալ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ Վարչութեան անդամ քոյր Մարլէն Տաքէսեան: Ան ողջունեց աշխարհի գանազան շրջաններէն Աթէնք ժամանած երիտասարդները եւ շնորհակալութիւններ արտայայտեց, որ Հ.Մ.Ը.Մ.Ի համար երիտասարդութիւնը եղած է ու կը մնայ մնայուն ու շարունակական առարկայ: Հ.Մ.Ը.Մ.Ի մէջ նկարագիր կը կերտուի, անհատականութիւն կը դարձնուի հաճելի եւ օգտակար մթնոլորտի մէջ:

Համագումարի աշխատանքներուն անդադաւանալով, քոյր Տաքէսեան յոյս



յայտնեց, որ երիտասարդներ իրենց քննարկումներով ու առաջարկներով նոր թարմութիւն եւ աշխուժութիւն կու տան միութեան համահայկական աշխատանքներուն:

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ  
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԲԸ**

Ապա, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակի փառաւոր սօնակատարութիւններէն ետք, միութիւնը երկրորդ 100-ամեակի իր առաջին քայլը կ'առնէ երիտասարդական անախրնթաց համագումարով: Մինչեւ օրս միութիւնը կը գործէ սկաւտական եւ

մարզական թեւերով ու մեծաթիւ շարքերով: Սակայն, երբ այդ շարքերը հասնին երիտասարդութեան հանգրուանին, եւ աւելի ճիշդը՝ 18-30 տարեկանին, ինչ-ինչ պատճառներով անոնք աշխատանքի դաշտ չեն գտներ իրենց դիմաց, հետզհետէ կը հեռանան միութենէն եւ հետագային քիչերն են միայն, որոնք տարիներ ետք կը վերադառնան եւ վարչական պատասխանատուութիւններ կը ստանձնեն: Հետեւաբար, - չեց ան, - անհրաժեշտութիւնը զգացուեցաւ ստեղծելու միջավայր մը, ուր երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ականներ կարենան իրենց գործունէութիւնը շարունակել, աշխատանքի կարելիութիւններ ստեղծել եւ իրենց կապաւորութիւնը պահել միութեան հետ:

Շարունակելով, եղբ. Գառնիկ Մկրտիչեան յայտնեց, որ համագումարին գաղափարը ծնաւ նաեւ այլ մտահոգութենէ մը՝ մեր երիտասարդ տղաքն ու աղջիկները կանուխէն պատրաստել համա-Հ.Մ.Ը.Մ.ական հարցերու ծանօթացման եւ քննարկման: Ի վերջոյ, այսօրուան երիտասարդները վաղուան մեր պատասխանատուներն են եւ միութեան Պատգամաւորական ժողովի մակարդակով արծարծուած խնդիրները քննելը, անոնց մասին կարծիք յայտնելը եւ ապա համագումարին ճամբով այդ կարծիքները մինչեւ Պատգամաւորական ժողով հասցնելը, անկասկած, որ օգտակար փորձառութիւն է:

Երրորդ եւ հիմնական նպատակը այս համագումարին, - շնորհակալութիւն եղբ.







Մկրտիչեան,- օրուան հարցերը, մանա-  
լա՛նդ երիտասարդութիւնը յուզող հար-  
ցերը, նոյնինքն երիտասարդութեան  
ակնոցով քննելն է եւ այդ հարցերուն նոր  
եւ արդիական յուժումներ գտնելն է:

Իր խօսքին մէջ, եղբ. Գառնիկ Մը-  
կրտիչեան հարց տուաւ, թէ ո՞ր է այ-  
սօր հայ երիտասարդութիւնը այս բոլո-  
րին մէջ: Մեր միութիւններուն մէջն է,  
չո՞ւրջն է, թէ մեր կեանքին գլխաւոր  
բացական է: Իսկ ի՞նչ կ'ընենք մենք, իբ-  
րեւ Հ.Մ.Ը.Մ., իրրեւ չըջաննորու միա-  
ւորներ, գաղութներ, դպրոցներ եւ եկե-  
ղեցիներ, ազգ ու պետութիւն, հայ երի-  
տասարդութիւնը հաւաքական մեր  
կեանքին մէջ ներգրաւելու համար:

Ապա, եղբ. Մկրտիչեան աւելցուց-

«Մինչեւ օրս մեր որդեգրած միջոցները  
սկսած են իրենք զիրենք սպառել: Նոր  
իրականութիւնները կը թելադրեն նոր  
մօտեցումներ: Ազգային-միութենական  
մեր կառույցները կորսնցուցած են եր-  
բեմնի իրենց գրաւչութիւնը: Անցեալի  
գործունէութեան դրամագլուխը ըս-  
կսած է մաշիլ: Միութենականութիւնը  
դադրած է ժառանգական յատկանիշ մը  
ըլլալէ: Չաւակներ անպայման չեն հե-  
տելիր իրենց ծնողներու օրինակին,  
որովհետեւ դաստիարակութիւն հաս-  
կացողութիւնը փոխուած է եւ հարցում  
մը սկսած է ինքզինք պարտադրել, թէ՛  
աւանդական մեր արժէքները այլեւս որ-  
քանո՞վ կը համապատասխանեն նոր սե-  
րունդի մտահոգութիւններուն, պայ-

մաններուն եւ սպասումներուն: Երի-  
տասարդութիւնը նորութիւն եւ արդի-  
ականութիւն կը փնտռէ իր շուրջ: Այս  
բոլորը իրականութիւններ են, որոնց  
մասին անպայման պէտք է խօսիլ, ապա  
ծրագրել, որոշել եւ գործի՛ անցնիլ նախ-  
կինէն աւելի արագ կշռոյթով, դաստիա-  
րակութեան եւ քարոզչութեան արդի  
մօտեցումներով, տեղեկատուական ար-  
հեստագիտութեամբ, կառուցային ժա-  
մանակակից յարմարութիւններով եւ  
մեր չըջապատին աւելի յանձնօրէն բաց-  
ւելլու քաղաքականութեամբ» (խօսքին  
ամբողջութիւնը տեսնել էջ 6-7):

**ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԱՌԱՋԻՆ  
ՕՐՈՒԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԸ**

Բացման պաշտօնական խօսքերէն եւ  
հիւրասիրութեան կարճ դադարէն ետք,  
համագումարը անցաւ զեկուցումներու  
ներկայացման եւ քննարկման:

Առաջին զեկուցումով հանդէս եկաւ  
Հ.Մ.Ը.Մ.-ի «Մարզիկ» պաշտօնաթերթի  
խմբագիր եղբ. Վիգէն Աւագեան: Ան  
ներկայացուց «Հ.Մ.Ը.Մ.-ի անդամակ-  
ցութիւնը եւ քարոզչութիւնը երիտա-  
սարդութեան մօտ» նիւթը:

Եղբ. Աւագեան իր զեկուցումին  
սկիզբը հարց տուաւ, որ մինչեւ հիմա  
երիտասարդները ուրիշ՞ կու գային  
Հ.Մ.Ը.Մ.: Իսկ եթէ այսօր չեն գար, ո՞ր  
կ'երթան եւ ի՞նչ կ'ընեն անոնք: Ապա,  
ներկայ երիտասարդութեան նկարագրի-  
րը ներկայացնելով, եղբ. Աւագեան բա-  
ցատրեց, որ ինչո՞ւ եւ ի՞նչպէս պէտք է







ներգրաւել երիտասարդութիւնը եւ ներգրաւելէ ետք՝ ի՞նչպէս պէտք է գայն պահել մեր մօտ:

**Եղբ. Աւագեան** ներկայացուց նաեւ քարոզչութեան աւանդական եւ նորարար ձևերը եւ շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը եղած է ու կը մնայ գրաւիչ միութիւն մը, որովհետեւ ան ունի 100-ամեայ աւանդ ու փորձառութիւն, յողթանակի

հպարտութիւն, ընկերային ապահով միջավայր, ազգային միջնորդ, բարոյական արժէքներ, համահայկական կառույց եւ համաշխարհային ճանաչում:

Կէսօրուան ճաշի դադարէն ետք, երկրորդ գեկուցումը՝ «Մարգարտեղբու դերը Հ.Մ.Ը.Մ.ի նպատակներու հետապնդման մէջ» նիւթը ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան

անդամ եղբ. Վիգէն Գորթեան:

**Եղբ. Գորթեան** խօսեցաւ այսօրուան մարզական աշխարհին բնորոշ երեւոյթներուն մասին, ապա ան ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի մարզական գլխաւոր ըսկզբունքները, որոնք մարզիկ մը կը դարձնեն տիպար, օրինակելի եւ կարգապահ:

**Եղբ. Գորթեան** անդրադարձաւ նա-

## ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԻՒՆԸ Հ.Մ.Ը.Մ.Ի ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԻՆ ՄԷՁ

**Երիտասարդութեան ներգրաւման եւ միութեան մէջ նոր գործադրաչափի ստեղծման հարցը կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.ի ռազմավարական ծրագիրին իններորդ կէտը, գոր կը ներկայացնենք ստորեւ:**

### ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԳ ԶՎՓԱՀՎՄՆԵՐՈՒ ԽՐԱՄՈՒՄԱՆՔ Հիմնաւորում եւ նպատակ

Մովորական խօսք դարձած է, որ երիտասարդութիւնը (երիտասարդի սահմանում 18-30 տարեկան) մեր ապագան է: Աշխարհը այսօր դարձած է յարստփոխ, ուժեղ եւ մեծապէս ազդուած է կախեալ է արհեստագորտական յառաջխաղացքներէ: Բնականաբար, հայ երիտասարդութիւնը եւ հայկական բոլոր կազմակերպութիւնները ենթակայ են այս փոփոխութիւններու ազդեցութեան: Հ.Մ.Ը.Մ.ի մարտահրաւիրը կը կայանայ երիտասարդութեան հեղափոխութիւնը գրաւելու եւ զայն միութեանէն ներս պահելու մէջ: Մեր ծրագիրները երիտասարդութեան կարիքներուն պարզաճեցնելու եւ համակենսակցութիւն եւ

համուծգնութիւն (synergy) սրբեղծելու՝ իրենց հայկական ինքնութեան եւ արհեստագորտութեան միջեւ: Ներկայիս, մեծագոյն մարտահրաւիրը, Սփիւռքի փարածքին որեւէ կազմակերպութեան չհասնուած հայ երիտասարդութիւնը յանձնառու դարձնելն է:

Մեր առաքելութիւնը երիտասարդութեան նկատմամբ պիտի ըլլայ պարզ եւ իրականանալի: Ազդեցիկ եւ յանձնառու դարձնել հայ երիտասարդը զաղոտի կեանքէն ներս: Երիտասարդներուն ստրվեցնել յաւելեալ ակնածանք եւ յարգանք քառնել ծնողներու եւ երեցներու հանդէպ, միացնել զանոնք բարեկամութեան, ընկերակցութեան եւ փոխադարձ հասկացողութեան կապերով, զարգացնել ընկերակցութեան զաղափարը եւ, վերջապէս, զարգացնել պարկանկիւրութեան եւ ազգային ինքնութեան զօրաւոր զգացումը:

### Առ այդ,

Նպատակակէտ 1.- Մշակել երիտասարդական նոր ծրագիր մը, որ փոխանցման շրջան մը կը հասարակ





եւ մարզիչներու դերակատարութեան եւ պատրաստութեան հարցին: Ան նշեց, որ մարզիչի մը անձնական օրինակը շատ կարեւոր է իր խումբի անդամներուն համար: Ան խօսեցաւ մարզական պատասխանատուներու եւ խորհուրդներու աշխատանքին մասին եւ հաստատեց, որ մարզական կեանքին յաջողութիւնը կախեալ է յիշեալ բոլոր ազդակ-

ներու յաջողութենէն եւ համագործակցութենէն:

Այնուհետեւ, երրորդ նիւթը՝ «Հայապահպանում»ը ներկայացուց Աթէնքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Հրայր Աւագ Քհնյ. Նիկոլեան:

Իր խօսքին սկիզբը Քահանայ Հայրը նկատել տուաւ, որ մեր վիզերէն կախ-

լած միութենական փողկապը սովորական կապ մը չէ, որովհետեւ ան մեզ կը կապէ հայրութեան եւ Հայաստանին: Այդ փողկապը կ'ենթադրէ յանձնառութիւն եւ ծառայելու պատրաստակամութիւն:

Հայապահպանման գլխաւոր դժուարութիւնը,- դիտել տուաւ ան,- մեր երկակենցաղ ըլլալն է՝ ծագումով հայ, սա-

սկաւորական եւ կամ կրօններ մարզիկներու շարքերէն չափահաս օժանդակ անդամներու շարքերը: Ասիկա նոր ծրրագիր մըն է, որ իբրեւ քիրախի պիպի ունենայ արդէն իսկ գոյութիւն ունեցող Հ.Մ.Ը.Մ.ի անդամները, անոնց հայրաքերով մասնակցութեան եւ աշխատանքի նոր դաշտ: Երիտասարդ չափահասներու անդամակցութիւնը միութեան պիպի արբունէ լեցրնելու բաց մը եւ մեր երիտասարդ անդամները պահելու Հ.Մ.Ը.Մ.ի մէջ:

Այս ծրագիրը պիպի գործադրուի հիմնուելով փորձառական շրջանի մը արդիւնքներուն վրայ:

Նպատակակէտ 2.- Հ.Մ.Ը.Մ. պիպի չգրի երիտասարդութիւնը ներգրաւել միութեան կառավարման գործընթացին մէջ: Այս շեւով երիտասարդներ գործունեայ պիպի դառնան ո՛չ միայն Հ.Մ.Ը.Մ.ի ժողովներուն մէջ, մասնաճիւղի թէ շրջանային մակարդակով, այլեւ՝ անոնց ներկայացուցիչները եւ երիտասարդականի առաջնորդները պիպի քաջալերուին ու մասնակցին Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի, Շրջանային եւ Պարզամատուրական ժողովներու: Հետեւաբար, երիտասարդութեան ներկայացուցիչները պիպի հրաւիրուին րեղական մասնաճիւղի, Շրջանային եւ Կեդրոնական մակարդակի ղեկավար մարմիններու մէջ ծառայելու իբրեւ զաղապարարու եւ խորհրդարու անշէր:

Նպատակակէտ 3.- Պարբերաբար կազմակերպել երիտասարդական ֆորումներ: Այս ֆորումները պիպի ներ-

գրաւեն 18-30 րարեկան երիտասարդներ, վերլուծելու համար հարցեր եւ մարտահրաւերներ՝ Հ.Մ.Ը.Մ.ի երիտասարդներուն եւ, առհասարակ, հայ երիտասարդներուն առնչուած, բանաշեւելու եւ րարածելու երիտասարդական հեռանկարներ, առանց կաշկանդումներու:

Նպատակակէտ 4.- USC-ի (University of South California) մէկ վիճակագրութեան համաշայն, Մ. Նահանգներու հայ երիտասարդութեան մեծ բաժինը (90%) անդամ չէ հայկական որեւէ կազմակերպութեան:

Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերն ու շրջանները պէտք է շեք երկարեն եւ հասնին հայ երիտասարդ համակիրներու, ոչ անդամներու աւելի լայն շրջանակի մը, ո՛չ անպայմանօրէն ջանալով զիրենք ներգրաւել իբրեւ անդամներ, այլ թոյլ կապ մը հաստատելով Հ.Մ.Ը.Մ.ի եւ անոնց միջեւ: Նպատակը հայկական զաղութներէն երիտասարդութեան հեռացման առաջը առնելն է, եւ նկարագիր կերպերը բարոյական զարգացման եւ մասնակցութեան ընդմէջէն:

Նպատակակէտ 5.- Երիտասարդական կազմակերպուած այլ շարժումներու հետ գործակցելու նպատակով, Հ.Մ.Ը.Մ.ի շրջաններու եւ մասնաճիւղերու երիտասարդները պիպի սրեղծեն աւելի ամուր կապեր եւ եռանդուն յարաբերութիւններ՝ րեղական համայնարաններու Հայ Ռեսանդական Ընկերակցութիւններու հետ:





կայն հպատակութեամբ այլ երկիրի քաղաքացի, ինչ որ մեզ կը դնէ կրկնակի պարտաւորութեան տակ:

Հ.Մ.Ը.Մ-ը հսկայական աշխատանք կը կատարէ հայապահպանման համար եւ այդ պատճառով ան հայ ժողովուրդի Սփիւռքի մեծագոյն նախարարութիւնն է իր մարզական, սկստակական, ընկերային եւ մշակութային գործունէութեամբ, հաստատեց ան եւ յորդորեց երբեք չյուսահատիլ եւ «Յարատեւ կուլ» ի տրամաբանութեամբ ընթանայ հոսանքն ի վեր, յաղթահարելով մեր դէմ ցցուած բոլոր դժուարութիւնները:

Համագումարին առաջին օրուան աշխատանքները վերջ գտան երեկոյեան ժամը 6.30-ին:

քաղաքական նպատակ, որովհետեւ մենք ունինք վերադարձի հարց, պահանջատիրութեան եւ Թուրքիայէն մեր իրաւունքներու հատուցման հարց, Արցախի եւ Հայաստանի հզօրացման հարց եւ, վերջապէս, ամբողջ հայութիւնը ամբողջական Հայաստանի մէջ համախորհելու տեսիլք ու նպատակ:

Մուրատ Փափագեան շեշտեց, որ հայ մնալու համար ունինք թիրախներ, միջոցներ եւ ռազմավարութիւն: Պէտք է անձնապէս պատրաստուիլ, որպէսզի մեզմէ իւրաքանչիւրը Հայ Դատի առաքեալ մը ըլլայ, ըսաւ ան եւ աւելցուց, որ Հ.Մ.Ը.Մ-ի դերը անփոխարինելի է, որովհետեւ ան կը համախմբէ մեր երիտասարդութիւնը, որ մեր ազգին խան-

դավաւութեան եւ ուժի ազդիւրն է:

«Երկրորդ հարիւրամեակին Հ.Մ.Ը.Մ-ի սկստուութեան դիմագրաւած մարտահրաւէրները» նիւթը ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Բագրատ Եսայեան:

Եղբ. Եսայեան նախ ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի սկստուութեան գլխաւոր արժէքները եւ հարց տուաւ, որ այսօր ի՞նչպէս կարելի է այդ արժէքները պահել ու զարգացնել համաշխարհայնացած մեր կեանքին մէջ: Այսօր աւելի շատ պէտք է կեդրոնանայ անձնական հմտութիւններու զարգացման եւ ո՛չ թէ գիտելիքներու փոխանցման վրայ, ըսաւ ան, որովհետեւ գիտելիքները այլեւս ձեռք կը բերուին համացանցէն եւ

**ԵՐԿՐՈՐԴ ՕՐՈՒԱՆ  
ՁԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԸ**

Շաբաթ, 11 Մայիսին, համագումարը իր աշխատանքները շարունակեց առաւօտեան եւ յետմիջօրէի երկուքական զեկուցումներով:

«Գաղութներէ ներս ազգային ինքնութեան պահպանման դժուարութիւններն ու առաջարկուած լուծումները» նիւթը ներկայացուց Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Մուրատ Փափագեան:

Իր նիւթին սկիզբը Մուրատ Փափագեան հարց տուաւ, որ ինչո՞ւ պէտք է հայ մնալ եւ մեր գաղութները պահել: Ան պատասխանեց ըսելով, որ մեր հայ մնալը եւ գաղութ պահելը կը հետապնդէ







տեղեկատուական զանազան աղբյուրների, մինչդեռ այսօրուան մարդը յաջողելու համար շատ աւելի պէտք ունի հմտութիւններու, անոնցմով աշխարհին բացուելու եւ իր ծնողներուն ու համայնքին օգտակար դառնալու համար:

Այս առիթով եղբ. Եսայեան հարց տուաւ, որ այսօր ի՞նչ որակի մարդ կը պատրաստենք արդեօք: Համամարդկային ի՞նչպիսի արժէքներ կը փոխանցենք եւ ի՞նչպէս հետաքրքրական կը դարձնենք միութենական աշխատանքն ու միութենականութիւնը:

Յետմիջօրէին, համագումարին մասնակիցները լսեցին եւ քննարկեցին երկու նոր զեկուցումներ: «Վաղուան կազմակերպութիւնը» նիւթը ներկայա-

ցուց Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Յովսէփ Տէր Գէորգեան:

Տէր Գէորգեան իր խօսքին սկիզբը մատնանշեց, որ որեւէ պատերազմ չահելու համար կարեւոր է չորս ազդակ-բանակին բարոյական վիճակը, կլիման, աշխարհագրութիւնը եւ կազմակերպուածութիւնը (դեկավարներու եւ զինւորներու մակարդակով): Ան ըսաւ, որ պէտք է յարմարիլ ստեղծուած անակնկալ կացութիւններու: Պէտք է տեւաբար փոխուիլ, յառաջդիմել ու զարգանալ:

Վաղուան կազմակերպութեան յաջողութեան համար Տէր Գէորգեան շեշտեց համակիրներու, երիտասարդներու, կիներու եւ արհեստագիտութեան

կարեւոր դերերը: Ան ըսաւ, որ պէտք է բազմանալ՝ արդիականութիւնը պահելով, պէտք է աշխարհին բացուիլ՝ ուրիշներուն եւս վստահելով: Արհեստավարժ մօտեցումը, ստեղծագործ ոգին եւ նիւթական միջոցները բանալիներ են վաղուան կազմակերպութեան յաջողութեան համար, եզրափակեց ան:

«Հայաստանի եւ զաղութներու մէջ Հ.Մ.Ը.Մ.ի դիմագրաւած դժուարութիւնները եւ անոնց յաղթահարման համար առաջարկուած լուծումները» նիւթով հանդէս եկաւ եղբ. Գէորգ Յակոբեան:

Եղբ. Յակոբեան հաստատեց, որ դժուարութիւններու լուծման համար հարկ է ախտաճանաչում կատարել, վերլուծել պատճառները, համապատասխան աշխատանք ծրագրել եւ ապա քննել, թէ որքանո՞վ մեր լուծումները իրենց նպատակին կը ծառայեն: Ան ըսաւ, որ այսօր ամէնուրեք նկատելի է որակի նահանջ եւ նոր բան սորվելու դժկամութիւն: Մենք մխրճուած ենք մեր անցեալին մէջ եւ կ'ապրինք տեւական ինքնաբաւարարման զգացում մը, որ հետզհետէ մեզ տեղբայրի ու ետբայրի կը մատնէ:

Եղբ. Յակոբեան խաղերով իր նիւթին վերաբերող կարգ մը տեսութիւններ փորձարկեց մասնակիցներու հետ եւ, աւարտին, դժուարութիւններու յաղթահարման համար թելադրեց միութեան տէրը զգալ, միշտ աշխոյժ ու գործունեակ ըլլալ եւ աւելի լաւ վաղուան մը յոյսն ու պատկերացումը ունենալ:







Ձեկուցումներու աւարտին, Հ.Մ.-Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Դաւթեան ներկայեցուն ծանօթացուց միութեան ռազմավարական ծրագիրին գլխաւոր բաժինները, որդեգրման ընթացքը եւ կիրարկման հանգրուանները:

**ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ՓԱԿՈՒՄԸ**

Համագումարը չփակուած, երեկոյեան ժամը 8-ին, Հ.Մ.Լ.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Հայկազ Տէօբմէճեանի ընկերակցութեամբ, ժողովականներուն այցելեց եւ հայրական իր ողջոյնները փոխանցեց Յունաստանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեան:

Գեղամ Սրբազան իր ուրախութիւնը յայտնեց Հ.Մ.Լ.Մ.ի մեծ ընտանիքի երիտասարդ ներկայացուցիչներուն մէջ գտնուելուն համար: Ան ըսաւ, որ Հ.Մ.-Լ.Մ.ը արժանի է բոլորին յարգանքին եւ գնահատանքին: Հ.Մ.Լ.Մ.ը սրտամօտ է բոլորին: Ուր որ Հ.Մ.Լ.Մ. կայ այնտեղ հայութիւն կայ: Հ.Մ.Լ.Մ.ը կը գտնուի հայ կեանքին կեդրոնը:





Ապա, իր խօսքը ժողովականներուն ուղղելով, Գեղամ Սրբազան նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի երիտասարդական համագումարին քննարկած նիւթերը՝ հայ երիտասարդութիւնը եւ հայապահպանումը կը տաքնապեցնեն բոլորը եւ, հետեւաբար, կարելի չէ չգնահատել նման համագումարի մը կազմակերպումը, որուն արդիւնքներէն պիտի օգտուին Հ.Մ.Ը.Մ.ը եւ Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով համայն հայութիւնը:

Գեղամ Սրբազանի այցելութենէն ետք, համագումարը առաւ կարճ դադար մը, որմէ ետք մասնակիցները իրենց կազմէն ընտրեցին երեք երիտասարդներ՝ խորհրդակցական ձայնով ներկայ գտնուելու Հ.Մ.Ը.Մ.ի 12-րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին (14-19 Հոկտեմբեր 2019, Հայաստան) եւ փոխանցելու համագումարին երիտասարդութեան կողմէ արտայայտուած միտքերը, մտահոգութիւններն ու առաջարկները: Ընտրուեցան եղբայրներ Սեւակ Քէթիճեան, Նժդէհ Մկրտիչեան եւ Շահան Աթմաճեան:

Հոսկ, երեկոյեան ժամը 7.30-ին, համագումարը փակուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի

Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի փակման խօսքով եւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

**ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ  
ԽՐԱԽՃԱՆՔԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆ  
ԵՐԵԿՈՅԵԱՆ, ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԿԱԳՄՐ  
ՆԵՐԿԱՅ ԳՏՆՈՒԵՑՄԱԸ Հ.Յ.Դ. ՅՈՒՆԱՍՏԱ-**

**ՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԱՅԻՍԵԱՆ յաղթանակներու ժողովրդային ճաշկերոյթ-խրախճանքին, որուն մասնակցեցան նաեւ նոյն օրը Աթէնքի մէջ ընթացք առած Հ.Յ.Դ. Եւրոպայի երիտասարդական միութիւններու խորհրդաժողովին մասնակիցները:**







## Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ՝ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԱՄՆԱԾԻՂԵՐՈՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՄԻԱԲՈՐՆԵՐՈՒ ՀԵՏ

### Թղթակից ԱԹԵՆՔ

**Հ**ՄԸՄԻ երիտասարդական Ա. համագումարի նախօրեակին, Չորեքշաբթի, 8 Մայիս 2019-ի երեկոյան, ՀՄԸՄԻ Կեդրոնական Վարչութիւնը Ֆիքսի «Արամ Մանուկեան» ակումբին մէջ հանդիպում մը ունեցաւ ՀՄԸՄԻ Յունաստանի Շրջանային Վարչութեան, մասնաճիւղերու վարչութիւններու եւ սկաուտական խմբապետական միաւորներուն հետ:


Հանդիպումին բացումը կատարեց Շրջանային Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Հայկազ Տէօքմէճեան: Ան բարի գալուստ մաղթեց Կեդրոնական Վարչութեան անդամներուն եւ մաղթեց, որ երիտասարդական համագումարը կարեւոր ազդակ մը ըլլայ միութեան յարատեւման եւ նորանոր նուաճումներուն համար՝ Հայաստանի եւ Սփիւռքի տարածքին: Եղբայրը իր խօսքին մէջ յիշեց շրջանին մեծ բացական՝

Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Եթիմեանը, որ առողջական բարդ կացութիւն մը դիմադրաւած ըլլալով այժմ կը բոլորէ ապաքինման շրջան:

Ապա, խօսք առաւ ՀՄԸՄԻ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ան խօսեցաւ ՀՄԸՄԻ առաքելութեան եւ վերջին շրջանի աշխատանքներուն մասին, լայնօրէն անդրադառնալով նաեւ երիտասարդական Ա. համագումարին կազմակերպման նպատակին: Եղբ. Մկրտիչ-








եան յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ-ի 12-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին առաջ գումարուող այս համագումարը կը ջանայ ստեղծել յաւելեալ կենսունակութիւն եւ կազմակերպչական հզօրացում, յատկապէս երիտասարդ Հ.Մ.Ը.Մ-ականները աւելի կապելով միութեան նպատակներուն, սատարելով Հայաստանի մէջ տիպար քաղաքացիներու պատրաստութեան, իսկ ըՄ-փիւռքի մէջ հայապահպանման աշխատանքներուն:

Այս առիթով, մասնաճիւղներու վարչութիւնները եւ սկստութեան միաւորները իրենց գործունէութեան մասին զեկուցումներ ներկայացուցին Կեդրոնական Վարչութեան, նշելով իրենց կարեւոր նուաճումները եւ ապագայի ծրագիրները՝ մարզական, սկստութեան եւ երիտասարդական բնագաւառներէն ներս:

Հանդիպումին աւարտին, Շրջանային Վարչութիւնը յուշանուէր մը յանձնեց Գոքինիոյ մասնաճիւղի խմբապետ եղբ. Վիգէն Մինասեանին, որ 2018-ին, այլ Հ.Մ.Ը.Մ-ականներու հետ, նուաճեց Արարատ լեռան գագաթը:

Հանդիպումին աւարտին, Շրջանային Վարչութիւնը յուշանուէր մը յանձնեց Գոքինիոյ մասնաճիւղի խմբապետ եղբ. Վիգէն Մինասեանին, որ 2018-ին, այլ Հ.Մ.Ը.Մ-ականներու հետ, նուաճեց Արարատ լեռան գագաթը:



**«ՄԱՐԶԻԿ»ԻՆ  
ԿԸ ՆՈՒԻՐԵՆ**

●Օտրէ Մարի Մոսիկեանի  
ծննդեան առիթով՝ Շիմշիրեան  
ընտանիք 100 \$





# ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԷՁ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊՈՒՆԱՏՈՒՆ...

**Հ**ՄԼՄ-ի երիտասարդական Ա. համագումարի մեկնարկէն օր մը առաջ, Հինգշաբթի, 9 Մայիս 2019-ի կէսօրին, ՀՄԼՄ-ի Կեդրոնական Վարչութիւնը, Շրջանային Վարչութեան ներկայացուցիչին ընկերակցութեամբ, այցելեց Յունաստանի մէջ Հայաստանի դեսպանատուն եւ հանդիպում մը ունեցաւ դեսպան Ֆաթէյ Չարչօղլեանին հետ:

Հանդիպումին ընթացքին ՀՄԼՄ-ի պատուիրակութիւնը շնորհակալութիւն յայտնեց դեսպան Չարչօղլեանին՝ միութեան տեւական աջակցութեան համար եւ այս առիթով անոր յանձնեց միութեան 100-ամեակի նամականիչը: Դեսպան Չարչօղլեան, իր կարգին, ողջունեց ՀՄԼՄ-ի աշխարհասփիւռ ընտանիքը եւ նորահաս սերունդներու դաստիարակութեան համար ի գործ դրած ճիգերը: Ան շեշտեց, որ ինք կը մնայ այս մեծ կազմակերպութեան կողքին, որովհետեւ կը հաւատայ անոր առաքելութեան եւ կը գնահատէ 100-ամեայ անոր վաստակը:

### ... ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Կիրակի, 12 Մայիսի կէսօրին, ՀՄԼՄ-ի Կեդրոնական Վարչութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, ՀՄ-



ԼՄ-ի Յունաստանի Շրջանային Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Հայկազ Տէօքմէճեանի ընկերակցութեամբ, այցելեց Յունաստանի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարան եւ հանդիպում մը ունեցաւ Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեանի եւ Ազգային Վարչութեան անդամներու հետ:

Պատուիրակութեան անունով խօսք առաւ ՀՄԼՄ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ան ներկայացուց Աթէնքի մէջ կազմակերպուած երիտասարդական առաջին համագումարին աշխատանքները եւ շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդին՝ համագումարի մասնակիցներուն այցելութեան եւ հայրական պատգամին համար: Ապա, Գեղամ Սրբազանին ՀՄԼՄ-ի հանդէպ տածած սիրոյն եւ յարգանքին անդրադառնալով, եղբ. Մկրտիչեան յիշեցուց, որ Գեղամ Արք. եղած է ու կը մնայ միութեան մնայուն աջակից մը: Ան արժանացած է միութեան «Արտակարգ» շքանշանին, հետեւաբար Կեդրոնական Վարչութիւնը զայն կը պատուէ ՀՄԼՄ-ի 100-ամեակի նամականիչով:



Ողջոյնի խօսքով նախ հանդէս եկաւ Ազգային Վարչութեան ատենապետ եղբ. Պողոս Չոլաքեան: Ան ըսաւ, որ ազգային ծառայութեան լծուած հայորդիներու մեծ մասը անցած է ՀՄԼՄ-ի «դպրոց»էն: ՀՄԼՄ կը սորվեցնէ ազգին ու ազգային կառուցներուն ծառայել անշահախնդրօրէն: ՀՄԼՄ-ական մարդը իր աշխա-





տասիրութեամբ եւ բժախնդրութեամբ օրինակ կը դառնայ բոլորին:

Աւարտին, խօսք առաւ Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեան եւ շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ին՝ ազգապահպանման այն հսկայ աշխատանքին համար, որ կը կատարէ աշխարհի չորս ծագերուն: 100-ամեայ Հ.Մ.Ը.Մ.ը միշտ կը մնայ երիտասարդ ու արի,- ըսաւ ան,- որովհետեւ ան միշտ կը գործէ երիտասարդներու հետ, երիտասարդական խանդով ու խանդավառութեամբ: Հ.Մ.Ը.Մ. յոգնութիւն չի ճանչնար: Ան

ամէն տեղ է: Ուր հայութիւն կայ հոն Հ.Մ.Ը.Մ. կայ: Հ.Մ.Ը.Մ. արժէքներու եւ արժանիքներու կազմակերպութիւն է: Պէտք է վստահիլ անոր, որովհետեւ անփոխարինելի է անոր դերը մարդակերտման ու հայակերտման աշխատանքներու մէջ:

Շարունակելով, Գեղամ Արք. շնորհակալութիւն յայտնեց 100-ամեակի նամականիչին յանձնումին համար եւ անխափան երթ ու նորանոր յաջողութիւններ մաղթեց միութեան երկրորդ 100-ամեակի աշխատանքներուն:

PINK  
Kimberley™  
AUSTRALIA

[PinkKimberley.com.au](http://PinkKimberley.com.au)



*Diamonds beyond rare*

Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.



# ՄԻ՛ ՄՏԱՀՈԳՈՒԻՒՔ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ Ա. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԱՌԻԹՈՎ)

Նժդեհ Սկրտիչեան  
ՊՈՒՐՑ ՅԱՍՈՒՏ

Կըսեն՝ փոխուած են ժամանակները. փոխուած են սերունդները, փոխուած են նաեւ աւանդութիւններն ու արժէքները:

Կըսեն՝ նոր սերունդը տարբեր է. տարբեր հետաքրքրութիւններ, տարբեր ըմբռնումներ եւ մտածողութիւն ունի:

Պատճառները բազմաթիւ են. համաշխարհայնացում, արհեստագիտութիւն, անտարբերութիւն, կեանքի ընթացք եւ այլն:

Եւ այս պատճառով մտահոգիչ կացութիւն մը կը ստեղծուի քիչ մը ամէն տեղ՝ դպրոց, միութիւն, կուսակցութիւն...:

100-ամեայ Հ.Մ.Ը.Մ.ին մէջ եւս կը տիրէ մտահոգիչ այս կացութիւնը: Աւագ սերունդի միութենականները, պատասխանատուները մտահոգ են այս փոփոխութիւններով եւ մանաւանդ՝ միութեան ապագայով, յատկապէս՝ 100-ամեակէն անդին:

Պէտք է ըսել, որ մտահոգութիւնը տեղին է: Եւ ես՝ հակառակ երիտասարդ սերունդին պատկանելուս, կը հաստատեմ այդ իրողութիւնը. կամ աւելի ճիշդ՝ կը հաստատէի:



Սակայն, երբ 10 Մայիսին Յունաստան կը գտնուէի՝ մասնակցելու համար Հ.Մ.Ը.Մ.ի երիտասարդական առաջին համագումարին, կարծիքս փոխեցի ամբողջութեամբ:

Հոն, 30-է աւելի երիտասարդներ (18-30 տարեկանի միջեւ), աշխարհի 17 տարբեր շրջաններէն եկած, հաւաքուեցանք եւ երկու օրուան վրայ միասնաբար քննեցինք հարցեր, փոխանակեցինք կարծիքներ, լսեցինք մտահոգութիւններ եւ կատարեցինք նոր առաջարկներ:

Երեւոյթը գեղեցիկ եւ հետաքրքրական էր, իսկ փորձառութիւնը՝ անկրկնելի:

Մեծամասնութեամբ ծանօթներ չէինք (կային ծանօթներ համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներէ եւ մարզախաղերէ), բայց քանի մը ժամուան ընթացքին այդ երեւոյթը փոխուեցաւ: Հ.Մ.Ը.Մ.ին յատուկ «բոյր-եղբօր» օգտագործումը արագացուց փոփոխութիւնը: Համագումարը ընթացք առաւ հարազատ ու մտերմիկ մթնոլորտի մէջ:

Բայց ի՞նչ է գաղտնիքը այս մթնոլորտին: Չէ՞ որ տարբեր միջավայրերու մէջ մեծցած ենք, տարբեր երկիրներ կ'ապրինք, տարբեր ձեւերով կը խօսինք ու կ'արտայայտուինք:

Պատասխանը Հ.Մ.Ը.Մ.ն է:

Բոլորս, հակառակ մեր բոլոր տարբե-







ըուծիւններուն, մէկ հասարակ յայտարար ունինք՝ Հ.Մ.-Լ.Մ.-ական ըլլալը:

Բան մը, որ չի սահմանափակուիր միայն միութեան անդամ ըլլալով կամ տարագը հագուելով, այլ՝ զայն զգալով, միշտ եւ ամէն տեղ:

Զգալ այս միութեան դժուարութիւնները եւ փորձել զանոնք յաղթահարել:

Զգալ այս միութեան հարցերը եւ փորձել զանոնք լուծել:

Զգալ այս միութեան յաջողութիւնները եւ փորձել զանոնք զարգացնել:

Զգալ այս միութեան իղձերը եւ փորձել զանոնք իրականացնել:

Հ.Մ.-Լ.Մ.-ական ըլլալ ու այս բոլորը զգալ եւ իրագործել կ'ենթադրէ գոհողութիւն:

Բայց երբ կը տեսնենք, որ այսքան երիտասարդ, ձգելով իրենց գործերն ու համալսարանի դասերը, հեռուոր Արժանութիւնէն, Գանատայէն, Աւստրալիայէն, Միացեալ Նահանգներէն եւ այլ երկիրներէ, ժամերով կը ճամբորդեն այս համա-

գումարին մասնակցելու համար, նոյնիսկ 2-3 օրուան համար, դալու եւ քննարկելու ծանր եւ պատասխանատու օրակարգ՝ յատկապէս դժուար փուլի մը մէջ, չենք կրնար շարունակել մտահոգուիլ:

Երբ կը տեսնենք, որ տակաւին մենք՝ երիտասարդութիւնս, կը մտածենք Հ.Մ.-Լ.Մ.-ին համար, կը փորձենք նոր ձեւեր գտնել՝ ներգրաւելու համար մեր տարեկիցները եւ շարունակելու այս միութեան առաքելութիւնը: Երբ կը տեսնենք, որ բոլորս ո՛չ մէկ ակնկալութիւն ունինք Հ.Մ.-Լ.Մ.-էն եւ կ'աշխատինք 100-ամեայ անոր երթը շարունակել եւ զարգացնել, չենք կրնար շարունակել մտահոգուիլ:

Եւ վերջապէս, երբ կը տեսնենք, որ մենք՝ մասնակիցներս, խումբ մըն ենք միայն այս միութեան հազարաւոր անդամներէն, որոնք մեզի պէս կը մտածեն ու կը զգան, չենք կրնար շարունակել մտահոգուիլ եւ իրաւունք կ'ունենանք հաստատելու եւ ըսելու. «Մի՛ մտահոգուիլ»:

Այս համագումարը առիթ մըն էր վերաքննութիւն կատարելու, եւ կը կարծեմ՝ յաջողութեամբ աւարտեցաւ ու մտահոգութիւնը մասամբ փարատեցաւ:

Վարձքը կատար Հ.Մ.-Լ.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան՝ այս համագումարին նախաձեռնութեան եւ կազմակերպման համար:

Շնորհակալութիւն Յունաստանի Շրջանային Վարչութեան՝ Հիւրընկալութեան համար:

Շնորհակալութիւն նաեւ բոլոր Շրջանային Վարչութիւններուն մեզի՝ մասնակիցներուս այս առիթին ընծայման համար:

Հ.Մ.-Լ.Մ.-ը շատ բան սորվեցուցած է մեզի, իսկ այս համագումարը շատ բան աւելցուց եւ յստակացուց:

Կը մնայ սկսած գործը շարունակել... առանց մտահոգուելու:





# Հ.Մ.Ը.Մ.Ը՝ ԱՆՑԵԱԼԷՆ ԱՊԱԳԱՅ

## ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՀԵՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Տոթք. Իշխան Եղիայեան  
ԱՆԹԻԼԻԱՍ

**Հ**անրածանօթ դէմքերու, աշխարհահռչակ անձերու, հերոսներու, պատմական փայլերու, թուականներու կամ մայրաքաղաքներու մասին կարելի է մեծաթիւ գրութիւններ, արձանագրութիւններ, յուշագրութիւններ եւ գիրքեր գտնել: Համացանցի վրայ նոյնիսակ աւելին կարելի է տեսնել:

Բայց քիչ են այն շարժումները, հասարակական կազմակերպութիւնները, կամաւորներու միութիւնները, որոնք Հ.Մ.Ը.Մ.ի չափ մեղան հոսեցնեն, անոր հմայքը ունենան, ժողովուրդի հետաքրքրութիւնը շարժեն, շարունակական աշխատանք ունենան եւ զրոյշմ ձգեն անցեալին ու ներկային վրայ:

Աւելին, Հ.Մ.Ը.Մ.ի հովանիին տակ 100 տարի շարունակ գործեցին համեստ միութենականներ եւ հանրածանօթ դէմքեր, աշխարհահռչակ անձնաւորութիւններ ու փայլուն մարզիկներ, երբեմն նոյնիսակ հերոսներ:

Ի տարբերութիւն հայկական կամ օտար այլ միութիւններու, Հ.Մ.Ը.Մ.ը գործած է գրեթէ բոլոր մայրաքաղաքներու եւ արուարձաններու մէջ, ուր որ հայ ընտանիքներ բոյն հաստատած են:



Ի վերջոյ, Հ.Մ.Ը.Մ. իր մարզական խումբերուն եւ պիտուեաններուն միջոցով բազմահազար երիտասարդներու երեւակայութեան եւ երազներու ճամբան բացած է, իսկ սկսուտական բանակումներու եւ արշաւներու ընդմէջէն անձանօթներ վերածած է եղբայրներու, ծանօթներ՝ հարազատներու:

Ի՞նչ է այս միութեան գաղտնիքը: Այն մղիչ ուժը, որ այսօր հզօր եղած է: Շատ հեղասահ կերպով ճեղքած է պատմութեան դաժան 100 տարիներ եւ կը պատրաստուի յաջորդ 100 տարիներու դուռը թակել՝ միշտ խրոխտ, ինքավստահ եւ հաստատ քայլերով:



Հասկնալու համար այս երեւոյթը, պէտք է քաջածանօթ ըլլալ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան եւ տեսնել, թէ այս միութիւնը տուած է այն, ինչ որ հայ ժողովուրդին հարկաւոր եղած է օրին:

Այսպէս, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան նախորդող տարիներուն, անոր հիմնադիրներուն տեսլականն էր մէկ դրօշի տակ միացնել Պոլսոյ հայկական սկսուտական եւ մարզական տարբերակումներն ու շարժումները՝ ունենալու համար կազմակերպուած, ամուր, ազգային դիմագիծով օրինակելի միութիւն մը, որ թէ՛ երիտասարդութեան աւելի լաւ պիտի ծառայէր եւ թէ՛ հա-



մայնքին մէջ ներդաշնակ ու կազմակերպ պիտի գործէր: Այդ օրերու միջավայրին մէջ կենսական եւ յանդուգն քայլ մըն էր ապագայ Հ.Մ.Ը.Մ.ին առաջադրանքը:

Ապա վրայ հասաւ Մեծ Եղեռնի արհաւիրքը: Սերունդ մը ամբողջ ոչնչացաւ, մաս մըն ալ որբացաւ ու անտէր դարձաւ: Այս հանգրուանին, ապագայի հիմնադիրները եւ իրենց գործակիցները անցան որբախնամի եւ երիտասարդ նոր սերունդի մը կերտման աշխատանքներուն՝ մարմնամարզական, սկստուական, դաստիարակչական թէ կազմակերպական մարզերով:

Շատ չանցած, 1918 Նոյեմբերին, Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնական հիմնադրութեան անմիջապէս ետք, միութեան կը վիճակուէր հայրենիք հաստատուել եւ հոն տանիլ մարմակրթական եւ կազմակերպական լայն աշխատանք, ընդհանրապէս երիտասարդներու եւ յատկապէս Եղեռնէն ճողոպրածներու մօտ:

1920-ական թուականներէն ետք Հ.Մ.Ը.Մ.ին վիճակուեցաւ ակամայ տարագրութեան ճամբան բռնել եւ հաստատուել Միջին Արեւելքի, Եւրոպայի եւ Ամերիկաներու մէջ: Այս չորրորդ հանգրուանը տեւեց բաւական երկար: Այս հանգրուանին տեղի ունեցաւ գաղութներու կազմակերպում եւ բարգաւաճում՝ մշակութային, ընկերային, մարմնամարզական, Հայ Դատի եւ այլեւայլ բնագաւառներու մէջ: Հ.Մ.Ը.Մ.ը միշտ ներկայ էր տարբեր գաղութներու վերելքին, իբրեւ հաստատու կուռն եւ անվերապահ մասնակից: Այս օրերուն է, որ կերտուեցան Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան պանծալի էջերը:

Յաջորդ հանգրուանը պէտք է նկատել Հ.Մ.Ը.Մ.ի վերադարձը Մայր Հայրենիք, 1989-էն սկսեալ: Շատ սպասուած այս վերընձիւղումը հայրենիքի մէջ նոր հորիզոններ բացաւ Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհատարած բոլոր անդամներուն: Եւ այսպէս, բանակումներն ու մարզախաղերը տեղի ունեցան մայր հողին վրայ, նախկինէն տարբեր «համով ու հոտով», շատ աւելի հայեցի միջնորդումով:

Եւ այսօր, ահա 100-ամեակ... 100 ձեռնարկ, 100 բանախօսութիւն, 100-է աւելի մասնաճիւղ ու տակաւին բաւարար չեն Հ.Մ.Ը.Մ.ի մասին ամէն ինչ ըսելու համար:

Հ.Մ.Ը.Մ. իր 100 տարուան պատմութեան ընթացքին եղաւ համախմբողի, որբախնամի, մարմնակրթանքի, կրթութեան, ազգային շահերը պահողի եւ դեռ ինչ-ինչ առաքելութիւններ ստանձնողի դերակատարութեան մէջ՝ ըստ հայու ընդհանրական շահերուն եւ պահանջներուն:

Հապա ապագան...

Անկասկած, յառաջիկայ տարիներուն Հ.Մ.Ը.Մ. ունի նոր



մարտահրաւէրներ՝ հայրենիքի եւ Սփիւռքի մէջ: Վերնագիրները շատ են՝ ազգային դիմագիծի պահպանում, այլասերումի դէմ պայքար, միջազգայնացումի վտանգներու չէզոքացում, կարգ մը նոր գաղութներու կազմութեան հետ քայլ պահելու աշխատանքներ եւ այլն:

Աւելին, յառաջիկայ շրջանին Հ.Մ.Ը.Մ. դէմ յանդիման կը գտնուի մերօրեայ կենցաղի ջլատիչ, ազգերը հիւժող եւ ինքնուրոյնութիւնը արհամարհող արդի դաստիարակութեան երեւոյթին:

Հաւանաբար Հ.Մ.Ը.Մ.ի ներկայ մարտահրաւէրը պիտի ըլլայ առաւելագոյն չափով հասնիլ հայ երիտասարդութեան, ուր ալ ըլլայ ան եւ ինչ ալ ըլլան անոր պայմանները: Պէտք է առիթը ստեղծել, որպէսզի ամէն հայ պատանի կամ երիտասարդ անպայման ժամանակ մը անցնի Հ.Մ.Ը.Մ.ի «դպրոցէն», մաս կազմէ մարզական խումբերէն մէկուն եւ մանաւանդ՝ սկստուական միակորներէն մէկուն: Պէտք է առիթը ստեղծել, որպէսզի ամէն հայ պատանի մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի մարզախաղերէն մէկուն եւ բանակումներէն քանի մը հատին: Չբաւարարուելի աւանդական քարոզչութեամբ եւ տանիլ աւելի «յարձակողական», գործնական քարոզարշաւներ՝ ծանօթացնելու համար մենք մեզի նոր սերունդին եւ հրաւիրելու համար զայն Հ.Մ.Ը.Մ.ի ազնիւ համակարգին անդամակցութեան: Եւ, ի վերջոյ, տեղ տալ երիտասարդութեան, որպէսզի աշխատի Հ.Մ.Ը.Մ.ի վարչամեքենային մէջ, սորվի աւանդութիւնները, պահէ զանոնք մասունքի նման, բայց չըլլայ աւանդապաշտ:

100-ամեայ փորձառութեամբ զինուած, Հ.Մ.Ը.Մ.ը անպայման ինքնավստահ պիտի դիմագրաւէ ապագան՝ շնորհիւ իր սկզբունքներուն, ազնիւ ու պարկեշտ ղեկավարներուն օրինակին եւ իր նշանաբանին՝ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»ին հաւատացողներուն:



# Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿ

Սեյլա Թնճուկեան  
ԼՈՆՏՈՆ

**28** Մայիս 1918. Երեւան, Հայաստանի անկախութեան հռչակում:

16 Նոյեմբեր 1918. Պոլիս, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան հիմնադրութիւն:

Ապրիլ 2018. Ժողովուրդի պահանջով՝ ազատ ու արդար Հայաստան ունենալու շարժում եւ նոր տեսլական:

Թուականներ, որոնք կը ներկայացնեն 100 տարուան պատմութիւն:

## Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՊԱՏԱԿ

Չարմանայի կը թուի, որ Յեղասպանութեան վայրագութիւններէ ճողոպրած անձինք, ամէն տեսակ կորուստի եւ մոխիրներու ականատեսը ըլլալով հանդերձ, պայծառ միտքը ունեցած են հիմնելու ո՛չ որբանոց, ո՛չ կրօնական կամ ուսումնական դպրոց, ո՛չ բարեսիրական հաստատութիւն, այլ՝ հակառակ այդ դժուարին պայմաններուն, նախապատուութիւնը տուած են այլ տեսակի միութեան մը, որն է մարմնակրթական, զայն կոչելով Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն, Հ.Մ.Ը.Մ. կրճատումով:

Հարց կու տանք, թէ ի՞նչպէս Քրիսեաններ, Յակոբեաններ եւ Հինդլեաններ այդքան արդիական մօտեցում եւ հեռատեսութիւն ունեցան: Թէ ի՞նչպէս որոշեցին ամէն գնով թօթափել յուսահատ ժողովուրդի հալածական հոգեբանութեան բարդոյթը՝ ներշնչելով յոյսի եւ պատկանելիութեան զգացում:

Անոնք հեռատեսներ էին ու համոզուած, որ «Առողջ միտքը առողջ մարմինի մէջ» նշանաբանը մարմնակրթութեան միջոցով ապագայ սերունդին պիտի տայ աննկուն կամք եւ դիմադրականութեան ոգի:

## ԲԱՐԳԱՒԱՃՈՒՄ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ

Այսօր, 100 տարի ետք, համաշխարհային տարածում ունեցող սկաուտական եւ մարզական այս միութիւնը կտրած է մղոններ:

Պոլիսէն ետք, Հ.Մ.Ը.Մ. Միջին Արեւելքի մէջ ունեցաւ բեղուն գործունէութիւն, մասնաւորապէս՝ Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, ուր կառուցուեցան ակումբներ, մարզադաշտեր եւ հաւաքատեղիներ: Տարիներու ընթացքին, հայութեան բարգաւաճման զուգահեռ, Հ.Մ.Ը.Մ. աւելի եւս ընդլայնեց իր գործունէութիւնը: Մարզական խումբերը բազմապատկուեցան, սկաուտական շարքերը խտացան, քաղաքական տեղաշարժերու պատճառով զանազան ցամաքամասերու վրայ նոր մասնաճիւղեր հիմնուեցան, եւ միութենական նոյն ոգին տի-



րեց Արեւելքէն Արեւմուտք:

Այսօր, իւրաքանչիւր մասնաճիւղ կը կազմակերպէ սկաուտական հաւաքներ, բանակումներ, տողանցքներ, բազմաթիւ մրցաշարքեր, դաստիարակչական հանդիպումներ եւ այլն: Մասնաւորապէս յիշատակելի են, Սփիւռքի մէջ, մինչեւ մեր մօտիկ անցեալի միջ-մասնաճիւղային խաղերը, որոնք տեղի կ'ունենային Հայէպի մէջ: Հ.Մ.Ը.Մ.ի անդամներու թիւի աճման եւ տարածման պատճառով, այսօր, իւրաքանչիւր շրջանի նախաձեռնութեամբ տեղի կ'ունենան առանձին մարզախաղեր Եւրոպայի եւ Մ. Նահանգներու մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ի անդամները ամէնուրեք, անոնք ըլլան վարչական, մարզիկ թէ սկաուտ, միաձուլուած՝ կը մասնակցին մրցաշարքերու եւ տողանցքներու, բազմահազար հայորդիներու ներկայութեան պարզելով Եռագոյն դրօշը եւ թնդացրներով Հայաստանի ու Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգները:

Այս միութիւնը այսօր ունի լայնատարած բնոյթ, կը գործէ 24 շրջաններու մէջ, 110 մասնաճիւղերով: Հ.Մ.Ը.Մ. լոկ մարմնակրթական միութիւն մը ըլլալէ անդին ու անոր հետ՝ առաջին իսկ օրէն հայակերտումի, հայրենասիրութեան, կարգապահութեան դարբնոց մը հանդիսացաւ՝ ըլլալով Եռագոյն դրօշի երդուեալ պահապանը եւ Հայաստանի քայլերգին շահակիրը:

Այստեղ կ'ուզեմ յիշել, որ 1990-ի Լոս Անճելըսի Նաւասարդեան խաղերուն բախտաւորութիւնը ունեցանք ամուսնոյս՝ Ատոմին հետ Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.ի առաջին սկաուտներուն կնքահայրութիւնը ստանձնելու:

Յուզիչ վայրկեաններ ապրեցանք, երբ Հայաստանի սկաուտները տուին երդում եւ ստացան իրենց փողկապները:

Այսօր այդ պատանիները արդէն պատասխանատուներ են եւ Հայաստանի սկաուտական շարքերը կազմաւորած՝ կը գործեն նոյն սկզբունքով, նոյն տեսլականով, կազմելով Սփիւռք-Հայաստան Հ.Մ.Ը.Մ.ական մէ'կ ընտանիք:



# Հ.Մ.Ը.Մ.Ը ՄԻ՛ՇՏ ԵՐԻՏԱՍԱՐԴ

## Գեորգ Պետիկեան ՄՈՆԹՐԵԱԼ

**Յ**որբեկենական թուականները մեր կողմէ գնահատանքի տուրքեր են, որոնք կը բխին մեր արեան կանչէն, մեր գիտակցութենէն, որովհետեւ իբրեւ ազգ, այս թուականները հպարտօրէն մեր ժողովուրդն է, որ ստեղծած է իր բազուկի ճամբով, իր մտքի թռիչքներով, եւ զանոնք ապրած ու անոնցմէ անցած է՝ ինքզինք ճանչնալու համար: Որովհետեւ ան կը հաւատայ, որ իւրաքանչիւր թուականի նշում իր մէջ ունի նաեւ իր կեանքը հունաւորելու զաղանի ու թաքնուած ձգտում մը:

Այս նշումներով մենք մեզ արժեւորած պիտի ըլլանք: Արդ, յորբեկենական մեծ ու հպարտալի թուականներէն մէկն է Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան հարիւրամեակը:

Հ.Մ.Ը.Մ.ի հարիւր տարեկան է, սակայն միշտ երիտասարդ: Հպարտօրէն կարելի է հաստատել, որ 1918-ին հիմնուած Հ.Մ.Ը.Մ.ը, իր ծննդեան օրէն իսկ, սփիւռքեան մեր ժողովուրդին ո՛չ միայն փառքն ու պատիւը եղաւ, այլ դարձաւ նաեւ անոր ուրախութիւնն ու հրճուանքը: Ուստի, ինծի համար խօսիլ, գրել կամ արտայայտուիլ Հ.Մ.Ը.Մ.ի մասին, կը նշա-



նակէ խօսիլ սփիւռքեան մեր հայոց պատմութեան մասին, ուր մեր նոր սերունդի ժառանգորդներուն մօտ տեսանելի է հայրենասիրութեան եւ հայապահպանման ոգին՝ պարտուած հայակերտումի իր մտասեւեռումներով, եւ այս բոլոր՝ մեր հայրենիքի ու անոր ազատութեան սիրով շողախուած եւ հայու օրինակելի մարտնչող կամքով գօտեպնդուած:

Օրին, տակաւին նախակրթարանի մեր վաղ տարիներուն, որպէսզի Սփիւռքի հայերս մնայինք աւելի հաստատ ու ամուր մեր հայկականութեան մէջ, նաեւ ըլլայինք տիպար քաղաքացի, սակայն հոգիով հայութեան կապուած, մեր ծնողները, պատիւ իրենց, հակառակ այդ օրերու կեանքի քաղաքացան դժուարութիւններուն, հայկական դպրոցի կողքին մեզ առաջնորդեցին նաեւ դէպի Հ.Մ.Ը.Մ.: Ծնողական մեծ պարտականութիւն մը կատարողի խանդավառութեամբ մեզ արձանագրեցին անոր շարքերը, իբրեւ փոքր անդամ՝ գայիկ անուան տակ: Ունեցանք մեր «Պալու»ն, մեր «Աքելա»ն եւ մեր «վոհմակր»: Ճանչցանք ու ծանօթացանք «Մոկլի»ին: Խաղացինք, ուրախացանք, երգեցինք ու բազմազան եւ միեւնոյն ատեն անհասկնալի կանչեր ստրվեցանք, ապա գանազան առիթներով մեր քաղաքի նեղ ու լայն փողոցներուն եւ նոյնիսկ հսկայ պետական մարզադաշտին վրայ տողանցեցինք՝ անխոնջ եւ փոքրերու ինքնածին հպարտանքով: Իսկ երբ քիչ մը





աւելի հասակ նետեցինք, մեզ սկսուտ անուանեցին, իսկ մեր խումբը՝ «Վագր»- հոն ակնածանքով եւ անսակարկ նուիրումի խոստումով երգում տուինք ծառայելու ազգին ու հայրենիքին: Հոն էր, որ մեր դպրոցէն բերած, սորված ու մեր միտքերուն մէջ դրոշմած Արարատի նկարն ու անոր վեհութիւնը մեր հոգիներուն մէջ ամուր պահեցինք: Սկսանք այս անգամ մեր դասագիրքերէն տարբեր դաստիարակուելու, հայ ժողովուրդի պատմութեան եւ հայ մարդու կեանքի ոգեղէն արժէքներուն այ ծանօթանալու: Աւելին, յաճախ գարնանային եւ ամառնային կիրակի առաւօտները, իբրեւ մարզանք ու խմբային քայլարշաւ-աշխատանք, մեզ քայլելով տարին Նոր Գիւղի այդ օրերու մեր միութեան միակ մարզադաշտը՝ «Նաւասարդեան» քարքարոտ դաշտը: Հոն, դաշտին մէկ ծայրը, մէկ շարք կազմած, անհատաբար կամ գոյգով, մեր ձեռքերը մէկկական դոյլեր բռնած՝ դէպի դաշտին միւս ծայրը կամաց-կամաց յառաջանալով՝ մեզի սորվեցուցին մեր ճամբուն վրայ հաւաքել մեր տեսած մանր քարերն ու խիճերը, որպէսզի ժամեր ետք, մեր միութեան մեծ տղոցմէ կազմուած Փութպոյի խումբերը իրենց խաղերուն ընթացքին գետին իյնալով ծանրօրէն չվիրաւորուէին:

Այդ օրերուն, դաշտը թիթեղապատ էր եւ իբրեւ թրիւպին թիթեղածածկ խեղճ ու փոքր բեմով մը «զարդարուն»: Գետիներ խոտ չկար, նոյնիսկ դաշտին մէջ խմելու ջուր չկար: Միայն խիճերով ծածկուած Փութպոյի դաշտի ձեւ առած երկու «կոլեր» ունեցող քարքարոտ տարածութիւն մըն էր, որուն վրայ, իբրեւ մեծ սեփականութիւն, հպարտանքով կը գուրգուրայինք՝ մեծով ու պզտիկով: Մենք յաճախակի մեր այս «աշխատանքը» սիրով եւ կամաւոր կը կատարէինք: Առանց տրտնջալու: Գոհունակ սրտով: Մեծ պարտականութիւն մը



կատարողի գոհունակութեամբ: Քանի մը ժամ ետք, դարձեալ քայլելով տուն կը վերադառնայինք՝ յոգնած ու ջարդուած, սակայն կրկին՝ գոհունակ սրտով:

Ահա՛ եւ այսպէս մեծցանք իր շունչին տակ: Ահա՛ այս միութեան՝ հայ մարդուն կեանքը իմաստաւորող եւ մանաւանդ ուսուցանող գաղտնիքը: Մեր այդ տարիքին արդէն դարձած էինք կամաւոր եւ անսակարկ զոհաբերող փոքր միութենականներ: Տարուէ տարի, կարգապահութիւն, յանձնառութիւն, պատասխանատուութիւն եւ նախանձելի ձգտումներ, «Առողջ միտք, առողջ մարմին» նշանախօսքին հետեւելով՝ մեր մտապաշարը հարստացուցինք ու մեր կամքը զօրացուցինք: Մեր կեանքը սկսաւ լեցուելու, լիցքաւորուելու ազգային, նոյնքան եւ մարդկային արժէքներով: Նոյնիսկ մեր յաճախած ազգային կամ պետական դպրոցներուն մէջ, Հ.Մ.-Ը.Մ.-ի սկսուտ ըլլալը կամ դառնալը, տեսակ մը աշակերտական կենսունակութիւն ներշնչող եւ աւանդող «բան» մըն էր: Արդէն գոց սորված էինք «Բարձրացի՛ր-բարձրացուր»-ն ու իր



իմաստը եւ անկէ ճառագայթող խտացուած ու լուսաւոր նշանակութիւնը, եւ կը զգայինք, թէ արդէն հաստատօրէն էինք հայ նահատակ ցեղի անմահներու շարքին: Նոյնիսկ մեր բնակած թաղին մէջ, ամէն անգամ երբ իբրեւ հսկայ նուիրումի կամաւոր բանակի անդամ՝ Հ.Մ.-Ը.Մ.-ի տարագով կ'անցնէինք, արդէն բաւարար էր մեծ հիացմունք կորզելը մեզ դիտող մեծ ու պզտիկ, հայ կամ տեղացի, դրացի կամ թաղեցի մարդոց աչքերէն: Աւելի ուշ, մեր պատանեկութեան տարիներուն, երբ խոր գիտակցութեամբ, նաեւ իբրեւ պարզ անդամ, մաս կազմած էինք այս սրբազան առաքելութիւնը ունեցող միութեան, մենք կը տեսնէինք անոր մեծութիւնը: Մեր մորթին վրայ կը կրէինք այդ շօշափելին: Ապա,



մեր ծննդավայրերէն երբ կամայ թէ ակամայ հեռացանք, իբրեւ սրբազան մասունք՝ «զայն» եւս օտար երկիրներու տակ մեզի հետ բերինք: Խնամքով ու մեր միտքերուն մէջ ամուր պահած՝ մեզի հետ պտտացուցինք իր խորհուրդը, իր դրօշը, իր շունչը, ու ամէն ճիգ թափեցինք, որպէսզի ինք մեր ստեղծած նոր կեդրոններէն ներս դարձեալ շնչէ, ապրի, ճառագայթէ, սերունդներ պատրաստէ: Մէկ խօսքով՝ վերակենդանանայ: Վերապրի:

Իսկ հիմա, Հ.Մ.Ը.Մ., կ'ըսենք. դուն այս տարիքիդ, մեր երիտասարդութեան նկատմամբ գուրգուրոտ խնամքովդ, հայ մարդ պատրաստելու չարքաշուկեամբդ եւ մանաւանդ՝ ազգային արժէքներ սնուցանելու առողջ ու կայտառ մարմին պահելու նախաձեռնութեամբդ, հակառակ մէկ դարու կեանքիդ՝ դարձեալ նշմարելի է յաղթական երթդ: Դարձեալ տեսանելի է նոյն սրբազան առաքելութեանդ եւ աւանդիդ շարունակութիւնը: Դարձեալ կառուցներուն մէջ խանդավառ է երկսեռ հայ նոր սերունդներու հպարտալի խմբաւորումը:

Պարզ նշումներ չեն այս բոլորը:  
Լաւատես երեւոյթ ըլլալէ աւելի՝ կենսախինդ ու խանդավառութիւն բուրոյ հաւաքականութիւնն էս դուն: Այսօր դարձեալ կանգունն էս եւ դիմադրաբար կը յառաջանաս՝ նուաճելով նոր յաղթանակներ, գալիք տեսիլքներու կամքը գորակոչելու միշտ ծաղկեալ, կենդանի, առողջ ու նախանձեղի վիճակով:

Հ.Մ.Ը.Մ., չորս գիրով դուն քեզ բացայայտող միութիւն: Դուն տակաւին երիտասարդ ես, որովհետեւ մէջդ խտացուած է հայ երիտասարդ սկառուտին եւ մարզիկին առողջ միտքով ու մարմինով կեանքի իմաստը: Դո՛ւնն էս ճշմարիտ ներկայացուցիչը հայ ոգիով թրծուած մեր նոր սերունդին, նաեւ ներկայացուցիչը՝ մեր ազգային ընտանիքին եւ մեր հաւաքական կեանքի բոլոր մաքուր ու վեհ գիծերուն, որոնց շնորհիւ կ'ամրապնդուին մեր ապագայի յոյսերը:

Ուստի, բարի եւ փայլուն երթ, միշտ երիտասարդ, թէ՛ հայրենիքի եւ թէ՛ Սփիւռքի տարածքներուն շնչող հայ ժողովուրդի Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն:

Կեցցե՛ս դուն:

**USUSԱՆՔ**  
1918-2019  
100 ՏԱՐՈՒՄՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ  
Հ.Մ.Ը.Մ. ՅՈՒՆԱՍԱՆ  
100ԱՄԵԱԿԻ ՅՈՒՇԱՍՏԵԱՆ  
Հրատարակութիւն Հ.Մ.Ը.Մ.ի  
Գանատայի շրջանի:

# Հ.Մ.Ը.Մ.Ը ԳԻՏԷ ՀԱՅՐԵՆԻՔ ՍԻՐԵԼ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔ ՇՆՉԵԼ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՄԲ

«Ասպարէզ»  
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

Միութեան մը յարատեւման գլխաւոր երաշխիքը իր առաքելութիւնն է եւ զայն իրականացնող նպատակը, այլապէս ան երկար կեանք չ'ունենար:

Հպարտ ենք, որ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրները այս հեռատեսութիւնը ունենալով Հ.Մ.Ը.Մ.ի համար որդեգրեցին յատակ նպատակներ, որոնց շնորհիւ ան գոյատեւեց ամբողջ մէկ դար:

Տնտեսական, ընկերային, քաղաքացիական պատերազմներու իբրեւ հետեւանք՝ հայու թափառական ճակատագրիին ենթարկուած եւ հետզհետէ հեռաւոր այս ամերուն վրայ բազմացած երիտասարդութիւնը Եռագոյն դրօշին տակ համախմբելու, անոր հայեցի դաստիարակութիւն տալու եւ մարդկային նկարագիր կերտելու անվիճելի իրողութեան անհրաժեշտութիւնը գգալով՝ Հ.Մ.Ը.Մ. դիմագրաւեց իր ճամբան խոչընդոտող բոլոր դժուարութիւնները: Եւ ահա, այսօր, 100 տարիներու փորձառութեամբ եւ հարուստ պատմութեամբ, ան հանրութեան կը ներկայանայ՝ անդրդուելի մնալով իր առաքելութեան մէջ:

Երբ մտածենք եւ հարց տանք, թէ ինչո՞ւ այս բոլոր գոհո-



ղութիւնները, ինչո՞ւ Հ.Մ.Ը.Մ. եւ ոչ այլ կազմակերպութիւն, կ'ընկալենք այս հսկայ կազմակերպութեան՝ առաքելութիւնը, «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանը, «Առողջ միտք, առողջ մարմին», «Միշտ պատրաստ», «Մեր լաւագոյնը» կարգախօսները, կը հասկնանք անոր անհրաժեշտութիւնը մեր կեանքին ու իրականութեան մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ը հաստատուն քայլերով ծնունդ առաւ Հայոց



Ցեղասպանությունը գործադրած պետություն մայրաքաղաք Պոլսոյ մէջ: Մեծ Եղեռնէն ետք, այս նախաձեռնությունը քաջարի քայլ մըն էր, որուն համար մեր հիմնադիրները միայն պատիւի արժանի են:

Հ.Մ.Ը.Մ.ը ենթարկուեցաւ հայու ճակատագիրին եւ անցաւ բազմաթիւ հանգրուաններէ, սակայն կանգուն մնաց, ծլեցաւ, ծաղկեցաւ եւ այսօր տիրական ներկայութիւն է արդէն աշխարհի տարածքին:

Երբ հպանցիկ ակնարկ մը նետենք Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան վրայ, ապա պիտի տեսնենք, թէ ան պատմական գեղեցիկ գուգադիպութեամբ մը ծնունդ առաւ մեր հայրենիքի առաջին Հանրապետութեան ստեղծման տարին՝ 1918-ին: Ան գործեց նաեւ մեր անկախ պետութեան մէջ: Սակայն, հազիւ չորս տարեկան, քաղաքական ծանօթ պատճառներով, ան պարտադրաբար լուծուեցաւ Պոլսոյ մէջ, իսկ Հայաստանի խորհրդայնացումով՝ անոր գործունէութիւնը վերջ գտաւ նաեւ հայրենիքի մէջ:

Գաղթական հայութեան հետ գաղթական դարձաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ը: Սակայն, չկորսուեցաւ: Կազմաւորուած իւրաքանչիւր հայկական գաղութի մէջ ան վերածաղկեցաւ եւ իր առաջնահերթ պարտականութիւնը դարձուց ապագայ իր դեկավարութիւնը պատրաստելը: Համախմբեց հայ պատանին եւ անոր տուաւ ազգային դիմագիծ, հայրենիքի հանդէպ սէր, պահանջատիրութեան ոգի, պատուախնդիր հայու նկարագիր, մասնաւոր պատկանելիութիւն եւ մասնաւորաբար՝ արժանապատուութեան գիտակցութիւն:

Մէկ խօսքով, Հ.Մ.Ը.Մ.ը, հաւատարիմ մնալով իր առաքելութեան՝ իր արդար բաժինը բերաւ սփիւռքահայութեան ազգային գոյատեւման ջանքերուն՝ ըլլայ Միջին Արեւելքի, Եւրոպայի թէ Ամերիկայի տարածքին: Սակայն, այս բոլորին առընթեր, հայրենիքի ծարաւը կը տանջէր սփիւռքահայութիւնը: Հ.Մ.Ը.Մ.ին այլ երազանքն էր Ազատ ու Անկախ հայրենիքի մէջ գործել, Արարատի լանջերուն բանակիլ եւ Հրազդան մարզաւանին վրայ մրցիլ:

1990-ին, այդ երազն այլ իրականացաւ, երբ Կեդրոնական Վարչութեան վստահութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ.Նահանգներու շրջանը հայրենիքի մէջ Հ.Մ.Ը.Մ.ը վերակազմակերպելու պատասխանատու պարտականութիւնը ստանձնեց: Մեր խմբապետ-խմբապետուհիները, ի գին մեծ զոհողութիւններու, հայրենի Հ.Մ.Ը.Մ.ի վերստեղծման մէջ իրենց օգտակար ներդրումը ունեցան եւ մինչեւ օրս նոյն ոգիով կը շարունակեն գործել:

Եւ դեռ աւելին. Հ.Մ.Ը.Մ.ը Հայաստանի մէջ պետական ճանաչում ստացաւ եւ դարձաւ Հայաստանի Ազգային Ընկառուտական Կազմակերպութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ., որ արդարացուց ինքզինք: Քարքարոտ մեր երկրին մէջ, Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի ցորենի հատիկները ուռճացան եւ հասկի վերածուեցան: 1997-էն ի վեր, միջազգային ճանաչման արժանացած է Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ը:

Սփիւռքահայութեան գուրգուրանքով պահպանուած Եռագոյնը այսօր ամէնուրեք կը ծածանի: Մեր սկստները չորս տարին անգամ մը կը բանակին իրենց իսկ սեփական բանակավայրին մէջ՝ Արագածի փէշերուն, Բիւրական: Մեր մարզական խումբերը հայրենիքի մէջ կը մասնակցին համահայկական մարզախաղերուն՝ միշտ պատուաբեր արդիւնքներ արձանագրելով: Միասնական աշխատանքը կը շարունակուի եւ անվերջ պիտի շարունակուի:

Հ.Մ.Ը.Մ.ականը, հայու անքակտելի կամքով, ո՛ւր այլ ապրի՝ իր տիպար քաղաքացիութեամբ կը հմայէ շրջապատը, բայց ան միշտ կապուած կը մնայ իր ազգին, որովհետեւ գիտէ ազգակիցը սիրել, հայրենիքը սիրել եւ հայրենիքը շնչել՝ իր գործունէութեամբ:

Թող անսպառ մնայ այդ շունչը, որ պէսզի անվերջ ապրին մեր ազգն ու հայրենիքը:

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՆՓՈՒՍԱՐԻՆԵԼԻ ԴԵՐՈ

## Խմբագրական «Գանձասար»-ի ՀԱՆՏԻՊ

Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեայ գործունէութեան վրայ նետուած ակնարկ մը կը վերահաստատէ այն համոզումը, որ հիմնադիրներուն իսկ տեսլականով Հ.Մ.Ը.Մ.ը եղած է շատ աւելին՝ քան սկստական կամ մարմնակրթական միութիւն մը:

Հ.Մ.Ը.Մ.ը սկստական շարժումի գաղափարները որդեգրելով, անոր մէկ թելը հանդիսանալով, այդ շարժումը հայկականացուցած է:

Ճիշդ է, անոր հիմնադիրները նախ մտադրած են այս միութեան ճամբով հայ երիտասարդութեան ֆիզիքական դաստիարակութեան որակն ու ճաշակը մշակել. հետամուտ ըլլալ, որ հայկական վարժարաններուն մէջ մարմնակրթութիւնը պարտաւորիչ դառնայ, մարմնամարզական ակումբ-

ներ յառաջանան, տարեկան հայկական ողիմպիական խաղեր կազմակերպուին ու այդ խաղերուն լաւագոյն մրցանակակիրները միջազգային ողիմպիական խաղերուն մասնակցին, այնուամենայնիւ, հիմնադիրները հայկականացնելով սկստական շարժումը, գայն դարձուցած են ազգային շարժում՝ երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ականներուն ազգային դաստիարակութիւն ջամբելու եւ Սփիւռքի մէջ տարտղնուած հայ երիտասարդութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարներուն շուրջ համախմբելու, հայ պահելու համար:

Պատահական չէ, որ սկստական «Միշտ պատրաստ» կարգախօսին կողքին որդեգրուած է «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»ը: Եթէ առաջինը ժիր ու առոյգ սկստտին կարգախօսն էր, երկրորդը՝ միտքով ու հոգիով բարձրանալու ու իրեն հետ ազգը բարձրացնելու հայ արիին՝ Հ.Մ.Ը.Մ.ականին կարգախօսն էր:

Միւս կողմէ, Հ.Մ.Ը.Մ.ի տարբերանշանին՝ Շուշանածա-



ղիկին կեդրոնը Արարատ լեռան պատկեր-  
րը պատահականորեն չէր դրուած, անոր  
գազաթին ճառագայթող արեւը իբրեւ  
գեղանկարչական մտայնացում տեղ չէր  
գտած: Արարատը մեր ազգային տեսլա-  
կանին՝ Ամբողջական Հայաստանին  
խորհրդանշան էր, իսկ արեւը՝ մեր ազգի  
պայծառ գալիքին նկատմամբ հաւատքի  
խորհրդանշանը: Այս տեսլականով դաստ-  
իարակուած է Հ.Մ.Լ.Մ. ականը:

Հ.Մ.Լ.Մ.ի խորհրդանշանին՝ վահա-  
նին կողմը գետեղուած աղաւնիի երկու  
թեւերը Հ.Մ.Լ.Մ. ականին միտքի թռիչքը  
կը խորհրդանշէին: Այս միութիւնը թեւեր  
կու տար հայ երիտասարդին՝ առողջ  
մարմինով, ազնիւ հոգիով եւ արթուն  
միտքով թեւածելու աշխարհի չորս ծագե-  
րը ու կամուրջներ հաստատելու աշխար-  
հացրիւ հայ երիտասարդներուն միջեւ:

Հ.Մ.Լ.Մ.ը տարիներու ընթացքին յաջողած է իր շուրջ հա-  
մախքով մարմնամարզով հետաքրքրուող հայ երիտասարդ-  
ներու հսկայ փաղանգ մը, առիթ ընծայած է անոնց մարզուե-  
լու, մրցելու, մրցակցութեան իրենց ոգին բարձր պահելու:  
Մոլութիւններ կուտակած, իր կիրքերուն գերին դարձած  
երիտասարդը, փաստօրէն, պիտի չկարենար կեանքի այլա-  
զան փորձութիւններուն դէմ դնել ու հայեցի իր դիմագիծը  
պահպանելով հայ կեանքին ներդրում բերել:

Հ.Մ.Լ.Մ.ը նաեւ ազնիւ հոգիով մկրտած է իր շարքերուն  
մաս կազմող երիտասարդը, որպէսզի ան հաւաքական աշխա-  
տանքին մաս կազմէ, ծառայէ, օգնէ իր նմանին ու բարձրա-  
նալով գինք եւս բարձրացնէ:

Եւ վերջապէս, Հ.Մ.Լ.Մ.ը եղած է այն միջավայրը, որ  
նպաստած է արթուն միտքի տէր երիտասարդութեան ձեւա-  
ւորումին: Հ.Մ.Լ.Մ.ի դաստիարակչական ձեռնարկները,  
հրատարակած պարբերականներն ու թերթերը միտքի պատ-



րաստութեան, մտաւորական խմորումներու հարթակ հան-  
դիսացած են տարիներ շարունակ:

Այս բոլորին հանրագումարն է Հ.Մ.Լ.Մ.ը, առանց որուն  
տարտղնուած, անկազմակերպ ու խոցելի կրնար մնալ աշ-  
խարհասփիւռ հայ երիտասարդութիւնը, յատկապէս Հայոց  
Ցեղասպանութեան յաջորդող տարիներուն:

Հ.Մ.Լ.Մ.ի հարիւրամեակին նուիրուած ձեռնարկներուն  
կազմակերպ ընթացքը վկայութիւնն է այս բոլորին:

Սուրբոյ մէջ 2018-ի առաջին օրերէն ընթացք առած Հ.Մ.-  
Լ.Մ.ի հարիւրամեակի ձեռնարկներուն, դաստիարակչական  
ծրագիրներուն, յատկապէս միջ-միութեանական գործունէու-  
թեանց ճամբով, երիտասարդութիւնը ի մի բերելու ճիգերը  
ողջունելի եւ օրինակելի էին: Պատերազմ ապրող երկրի մը  
մէջ միութիւնը աշխոյժ պահելու, ամէնէն վտանգաւոր տագ-  
նապները ապրող քաղաքներուն մէջ իսկ (Հալէպ, Գամիշլի,  
Քեսապ) երիտասարդները պատնէշի վրայ պահելու յանձնա-  
ռութիւնը ինքնին կը խօսի Հ.Մ.Լ.Մ.ի  
հարիւրամեակի երթին արդիւնաւորման  
եւ տարուած աշխատանքին կարեւորու-  
թեան մասին:

Հ.Մ.Լ.Մ.ի առաքելութեան ընդգր-  
ծումն ու արժեւորումը թելադրական  
կրնան ըլլալ նաեւ այսօրուան երիտա-  
սարդութեան՝ Հ.Մ.Լ.Մ.ի սկզբունքնե-  
րուն հարազատ թարգմանը հանդիսա-  
նալու, առողջ մարմինով, ազնիւ հոգիով  
ու արթուն միտքով դէպի նորանոր  
նուաճումներ առաջնորդելու մեր հաւա-  
քական կեանքը:

Հպարտ ու անկաշկանդ յառաջացէք,  
սիրելի Հ.Մ.Լ.Մ. ականներ:

Բարի երթ կը մաղթենք հսկայ նուիր-  
ման հրաթեւ տորմիղին, կամաւճճ բա-  
նակին:





# «ԲԱՐՉՐԱՅԻՐ-ԲԱՐՉՐԱՅՈՒՐ»

Պողոս Շահմելիքեան  
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

**Ա**մէն Կիրակի առաւօտ, մեր թաղեցի տղոց հետ՝ գայլիկութեան կանաչ շապիկները հագած, քայելով կ'ուղղուէինք «Ազատամարտ» ակումբ, որ մեր թաղէն բաւական հեռու կը գտնուէր:

Տարազներով մեր խմբովին քայելը, օտար անցորդներու ուշադրութիւնը կը գրաւէր: Տողանցքի մը տպաւորութիւնը կը ձգէր, մանաւանդ որ երբեմն խմբովին կ'երգէինք գայլիկութեան մեր սորված երգերէն:

«Մոկլին օր մը կ'արշաւէր, տեսաւ շատ շուներ»:

Հաճելի արշաւներու կը տանէին մեզ, իսկ տարին անգամ մը տեղի կ'ունենար ընդհանուր բանակում:

Հաճոյքի կողքին կար նաեւ դաստիարակչական բաժինը, երբ մեզի կը սորվեցնէին գործադրել Հ.Մ.Լ.Մ.ի «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանը:

Այնքա՛ն իմաստալից երկու բառեր, գորս տիպար Հ.Մ.Լ.Մ.ական մը պարտի գործադրել:

Բարձրանալ եւ բարձրացնել ուրիշը:

Ամէն տարի, Սուրբ Զատիկուան շրջանին, շաբթուան մը համար կը մեկնէինք Հալէպ՝ մասնակցելու «Նաւասարդեան» մարզախաղերուն, իսկ վերջին օրը տողանցքով մը կ'աւարտէին անմոռանալի շաբթուան մը հանդիսութիւնները:

Հալէպահայութեան փառքի տարիներն էին: Հալէպը կ'եռար:

Մեզ փոխադրող փոխադրակառքերը տակաւին Հ.Մ.Լ.Մ.ի ակումբ չհասած, խուռներամ բազմութիւն մը կը սպասէր: Եկած էին իրարմէ «գողնալու» գայլիկ մը կամ արենոյ մը, եւ շաբթուան մը համար տանելու իրենց տուները: Պանդոկներու մէջ՝ զետեղել Պէյրութէն ժամանած Հ.Մ.Լ.Մ.ականները: Հիւրասէր հալէպահայուն համար ամենամեծ ամօթն էր այդ մէկը:

Մանկութեանս երկչոտ եղած եմ (քիչ մըն ալ լալկան): Ծնողքս նախապէս այնպէս մը կը դասաւորէր, որ Նոր Գիւղ բնակող մեզի ծանօթ ընտանիքի մը մօտ մնալի այդ շաբաթ: Երկուքիս ընտանիքները իրարու մօտիկ էին: Ազգականներս կը կարծէին: Հաւանաբար հօրս կամ մօրս հայրենակիցներն էին, սակայն այդ տարիքին հայրենակից կամ խնամի մեզի համար ազգականի համազօր էր:



\*  
\* \*

Գայլիկութեան տարիներս, դժբախտաբար, շատ երկար չտեսցին: Փոխադրուեցանք հայահոծ Պուրճ Համուտ: Ծնողքիս պարտադրանքով, հոն եւս արձանագրուեցայ գայլիկ, սակայն երկչոտ բնաւորութեանս պատճառով չվարժուեցայ միջնորդութիւն: Նախապէս թաղեցիներով բոլորս միասին էինք, ներկայիս՝ չուրջս բոլորը անծանօթ դէմքեր էին:

Քանի մը շաբաթ մնալուն բացակայութիւնս պատճառ դարձաւ, որ ինքնաբերաբար հեռանամ Հ.Մ.Լ.Մ.ի շարքերէն:

Տարիները անցան: Պատանեկութեան տարիներս են: Մասնակութեանս երկչոտ բնաւորութեանս հակապատկերը դարձած եմ: Ընկերներուս հետ շուտ կը շաղուիմ: Կը սիրեմ ու կը յարգեմ բոլորը: Նաեւ սիրուած ու յարգուած եմ ամէնքէն:

Մաս կը կազմեմ Հ.Մ.Լ.Մ.ի Պուրճ Համուտի պասքեթպոլի երկրորդական խումբերէն մէկուն: «Կամք» էր մեր խումբին անունը, որուն անդամներուն մեծամասնութիւնը դասընկերներս էին, իսկ քանի մը հատը՝ մեր թաղի տղոցմէ:

Միջակ կարողութեամբ խաղացող էի: Շատ արագ կը վազէի, բայց շուտ կը յոգնէի:

Մեր մարզիչը նկատած էր այդ մէկը: Յանձնարարեց, որ մաս կազմեմ Հ.Մ.Լ.Մ.ի աթլետիկ մի խումբին, իբրեւ 100 կամ 200 մետր վազքի մասնակից:

Այդպէս ալ ըրի:

Ամէն Կիրակի առաւօտ կը հաւաքուէինք «Սարդարապատ» ակումբին առջեւ, ուրկէ փոխադրակառքերով մեզ կը տանէին «Քամիլ Շամուն» մարզաւանը, կատարելու մեր փորձերը:

Իբրեւ պասքեթպոլի մարզիկ միջակ խաղացող մըն էի, սակայն իբրեւ վազող, կրնամ վստահեցնել, որ բաւական լաւ արդիւնքներ տուած եմ:



Տարի մը Հայկալի փոխարէն պիտի մեկնէինք Գահիրէ, ուր տեղի պիտի ունենային մարզախաղեր: Ընտրեցին լաւագոյն մարզիկները, որոնց ցանկին մէջ էր անունս: Անձնաթուղթս յանձնեցի Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան, որպէսզի պէտք եղած թուղթի գործերը կատարեն, եւ շաբաթէ մը մեկնինք բուրգերու քաղաքը: Ուրախ էի, որ անձամբ պիտի տեսնեմ պատմութեան մէջ մեր սորված եգիպտական փառաւորներու պալատներն ու բուրգերը: Մրցումներէն աւելի պատմական վայրերով ոգեւորուած էի, սակայն մեր մեկնումի թուականէն քանի մը օր առաջ, աջ ոտքիս բթամատը, չես գիտեր ինչպէ՛ս, բորբոքեցաւ: Նոյնիսկ կօշիկ չէի կրնար հագնիլ, եւ այդպէսով մեկնումի երազներս ցնդեցան օդին մէջ:

Տարիներ ետք, երիտասարդութեանս տարիներուն, դարձեալ քանի մը անգամ առիթը ներկայացաւ այցելելու Եգիպտոս, իրեւ երաժիշտ, սակայն ամէն անգամ ալ, տարբեր պատճառներով չկարողացայ մեկնիլ եւ վայելել հնութիւններով լեցուն այդ քաղաքը: Քաղաք մը, որ Յեղասպանութենէն ետք երկար տարիներ եղած է Սփիւռքի ամէնէն բեղունը: Ունեցած ենք հայ մշակոյթ, հայ մամուլ եւ գրագէտներ, յայտնի կուսակցական գործիչներ: Հոն է, որ հիմնուած է Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւնը: Հ.Մ.Ը.Մ-ը հոն ունեցած է բազմաթիւ մասնաճիւղեր:

\*  
\* \*

Հայաստանի անդրանիկ հանրապետութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ-ը տարեկից են: 100 տարեկան:

1918-ի անկախութիւնը դժբախտաբար երկար կեանք չուներացաւ, սակայն Սփիւռքի մէջ ծնունդ առած ու հասակ առած Հ.Մ.Ը.Մ-ը մնաց միշտ ներկայութիւն: Բազմացան իր շարքերն ու մասնաճիւղերը: Տարիքի յառաջացումը աւելի երիտասարդացուց Հ.Մ.Ը.Մ-ը, իսկ երբ 1991-ին վերանկախացաւ մեր հայրենիքը, Հ.Մ.Ը.Մ-ը մուտք գործեց նաեւ մայր հող:

Իրարու յաջորդեցին Միջին Արեւելքի տարբեր երկիրներու քաղաքացիական պատերազմները: Մեծ թիւով հայեր ակամայ գաղթեցին արեւմտեան երկիրներ: Գաղթեցին, սակայն կառչած մնացին Հ.Մ.Ը.Մ-ին: Արեւմտեան երկիրներու մէջ ծնունդ առին Հ.Մ.Ը.Մ-ի նոր մասնաճիւղեր: Բազմացան իր շարքերը:

Ես ալ, իմ կարգիս, չդիմանալով Լիբանանի աւերիչ ռումբերուն, գաղթեցի Լոս Անճելըս, որ ներկայիս դարձած է Սփիւռքի հայկական մեծագոյն գաղութներէն մէկը:

Ամէն տարի, Միացեալ Նահանգներու անկախութեան տօնին, Յուլիս 4-ի շաբաթը, տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան կազմակերպած «Նաւասարդեան» շաբաթը, որ այնքան կը յիշեցնէ Հայկալի այդ երանելի օրերը, երբ բազմահարիւր Հ.Մ.Ը.Մ-ական գայիկներ, արեւոյշներ ու մարզիկներ կը հասնէին Հ.Մ.Ը.Մ-ի ակումբը:

Իրենց տան մէջ Հ.Մ.Ը.Մ-ական հիւր մը ունեցողներուն դրացիները «աչքի լոյս»ի կու գային, այնպէս ինչպէս երբ ընտանիք մը բախտաւորուէր նորածին զաւակով մը:

Գալիֆորնիոյ տարբեր վայրերէն Լոս Անճելըս կը ժամանեն մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ-ականներ, սակայն ո՛չ ոք «կ'որդեգ-



րէ» մարզիկ մը կամ գայիկ մը: Այդ մէկը Միջին Արեւելեան, յատկապէս հայկազայերու սովորութիւն էր:

Մարզիկի տարիներս շատոնց անցած են: Ինծի կը փոխարինէ տղաս, որ մաս կը կազմէ մեր շրջանի Հ.Մ.Ը.Մ-ի «Մասիս» մասնաճիւղի պատգէթի խումբերէն մէկուն, իսկ ծնողներէն շատերու նման, կինս ու ես փառատօնի շաբաթը մեր կամաւոր մասնակցութիւնը կը բերենք ուտեստեղէն ծախելով բազմահազար ներկաներուն, իսկ եկամուտով օգտակար կը հանդիսանանք մեր մասնաճիւղին նիւթական կարիքներուն:

Հ.Մ.Ը.Մ-ի հաւատացողին համար կամաւոր գործերը չեն պակսիր:

Գաղութի գրեթէ բոլոր հայ երգիչները սիրալոյս իրենց մասնակցութիւնը կը բերեն՝ խանդավառելով ներկաները: Անհաւատալի եռուզեռ: Հազարաւոր հայեր մէկտեղուած, եւ այս բոլորը՝ շնորհիւ Հ.Մ.Ը.Մ-ի նուիրեալներու ժրաջան աշխատանքին:

Երկրի մը սովորութիւնները անպայմանօրէն կ'ազդեն տեղւոյն բնակիչներու կենցաղին վրայ:

Հայկալի մէջ Լիբանանէն ժամանած Հ.Մ.Ը.Մ-ականները, անմիջապէս «կ'որդեգրուէին» հայ ընտանիքի մը կողմէ: Այդպէս էր հայկազայուն կենցաղը: Լոս Անճելըսի «Նաւասարդեան» փառատօնին շաբաթը, նմանապէս, մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ-ականներ կը ժամանեն Սան Ֆրանսիսքոյէն, Սէն Տիէ-կոյէն կամ մօտ ու հեռու քաղաքներէ, սակայն նման հիւրընկալութեան չենք հանդիպիր արեւմտեան որեւէ երկրի մէջ: Այդ մէկը իւրայատուկ է միջին արեւելքի հայուն, մասնաւորաբար՝ հայկազայուն:

Երկրի մը սովորութիւնները որքան ալ ազդեն մեր կենցաղին, Հ.Մ.Ը.Մ-ի նշանաբանը հայրենիքի թէ Սփիւռքի որեւէ երկրի մէջ կը մնայ անփոփոխ՝

«ԲԱՐՁՐԱՑԻՐ-ԲԱՐՁՐԱՑՈՒՐ»:





## ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՈՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԵԱՄԲ ՄԸ ԿԸ ՍՏԱՆՁՆԷ ՀՈՂԱՇԵՐՏԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՒ ԿԱՌՈՒՅՄԱՆ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆԸ

**Տ**անամեակներու եւ սերունդներ երազ մը իրականացաւ 17 Մայիս 2019-ին, երբ Փարիզի հարաւարեւմուտքը գտնուող Իսի Լէ Մուլինոյի քաղաքապետութիւնը Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան հետ կնքուած համաձայնութեամբ մը խոստացաւ միութեան տրամադրել հողա-

չերտ մը՝ բոլոր յարմարութիւններով օժտուած մարգագաշտ մը, ժողովասրահներ եւ արդիական դահլիճ մը կառուցելու ծրագիրով:  
Համաձայնութիւնը իր նախնական ձեւով կնքուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան ատենապետ եղբ. Արամ Սիսեւեանի եւ Իսի Լէ Մուլինոյի քաղաքապետ-երեսփոխան Անտրէ Սանթինիի

միջեւ, ներկայութեամբ քաղաքապետութեան աւագանիի անդամներու, Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Անդրանիկ Պահարեանի, Կեդրոնական Վարչութեան նախկին անդամներ՝ եղբայրներ Հրաչ Սիսեւեանի, Լեւոն Պաղտասարեան եւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչական եղբայրներու:  
Պաշտօնական համաձայնութիւնը,





որ պիտի ստորագրուի շուտով, կը նախատեսէ մինչեւ 2019-ի աւարտ ամբողջացնել ծրագիրին թղթաբանական բոլոր աշխատանքները եւ այնուհետեւ 2.5 տարուան մէջ կառուցել մարգալանր, ժողովարահներն ու արդիական դահլիճը՝ ծախսերուն քաղաքապետութեան աւելի քան երկու երրորդի մասնակցութեամբ:

Ըստ համաձայնութեան, հայահոծ շրջանի մէջ գտնուող Հ.Մ.Ը.Մ-ի մարգալանին հողաչերտը միութեան կը

տրուի 99 տարուան համար: Միութիւնը կը ստանձնէ ծախսերուն շուրջ մէկ երրորդը, որուն մէկ մասը կանխիկ կը վճարէ այս նպատակին համար տարիներ առաջ իր յառաջացուցած անձեռնմխելի գումարի ֆոնտէն, իսկ մնացեալ պակսող բաժինը կ'ամբողջացնէ 99 տարուան, ջնջին տոկոսով դրամատրնային վարկով:

Քաղաքապետութիւնը արդէն իսկ պատրաստած է մարգալանին կառուցման քարտէսները: Օրինական-պետա-

կան գործողութիւններու ամբողջացումէն ետք, շինարարական աշխատանքները ընթացք կ'առնեն դարձեալ քաղաքապետութեան հսկողութեամբ:

Յայտնենք, որ համաձայնագիրին մասին հանրութիւնը տեղեակ պահուեցաւ 8 օր ետք, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի տարեկան պարահանդէսին քաղաքապետ Անտրէ Սանթինիի արտասանած պաշտօնական խօսքով (Տեսնել յաջորդ էջը):

### Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ՝

# ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՈՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ-ԵՐԵՍՓՈՒՄԱՆ ԱՆՏՐԷ ՍԱՆԹԻՆԻ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ Հ.Մ.Ը.Մ.Ը ՕԺՏԵԼ ՍԵՓԱԿԱՆ ՄԱՐԶԱԲԱՆՈՎ

Սեւան Նազարեան  
ՓԱՐԻՉ

**Մ**այիսեան գարնանային երկինք եւ փարիզեան համայնապատկեր՝ դիտուած նաև: Երկուքը տարբեր հմայք կը ստանան, երբ շրջապատը նաև հարագատ դէմքեր են՝ Հ.Մ.Ը.Մ-ի անդամներ, բարեկամներ ու համակիրներ:

Այս տարի, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութիւնը իր տարեկան պարահանդէսը դուրս հանած էր պատերէն... որոշած էր լոյսերու փայլքերով, ծփալով, նաև վրայ միացնել իր ծանօթները ու միասնաբար, զօրակցութեամբ, խանդավառութեամբ, նոր եռանդով շարունակել միութենական կեանքը:

Շուրջ 300 հոգի արձագանդած էին Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի տա-



րեկան պարահանդէսին, որովհետեւ բոլորին համար մէկ բան յստակ էր՝ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի կազմակերպած ձեռնարկները ունէին իրենց որակը, պատահականութեան ձգուած ոչինչ կար, նախօրոք, երկար ժամերու կամաւոր աշխատանք խլող պահեր հասցուցած էին այդ իրիկուան: Ու անոնք սխալած չէին: Մանրամասնութիւնները յարգուած էին, ճաշակն ու որակը տուած էին սպասուած արդիւնքը:

Եւ 25 Մայիսի երեկոյեան, «Le Diamant Bleu» նաև դարձած էր բարեկամներու հանդիպման վայր: Ներկայ էին հայ թէ օտար պաշտօնական անձնակազմութիւններ, միութիւններու ներկայացուցիչներ ու հոգեւորականներ:

Երեկոյին բացման խօսքը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան ատենապետ եղբ. Արամ Միսեռեան, որ իր խնդակցութիւնը յայտնեց ներկաներուն ու մանաւանդ պատ-





ւոյ հիւր՝ Իսի Լէ Մուլինոյի քաղաքապետ-երեսփոխան Անտրէ Սանթինին, որ ճաշկերոյթին ներկայ էր իր աւագանիի անդամներուն եւ անոնց շարքին՝ քաղաքապետի հայ կցորդ Յարութ Խանճեանին հետ: Խանճեան մանկութեան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ-ի շարքերուն եւ մինչեւ օրս գալն կը նկատէ կարեւոր կրթարան:

Բնականաբար, խօսքը պիտի փոխանցուէր քաղաքապետ-երեսփոխան Սանթինին: Վերջինը ծանօթ է իր վարկանիշով, իր քաղաքին մէջ հայերու հանդէպ ունեցած մեծ յարգանքով ու նպաստով:

Սանթինի իր խօսքին մէջ մեծապէս գնահատեց միութեան աշխատանքը երիտասարդութեան դաստիարակութեան գործին մէջ եւ յայտարարեց, կարծէք, 100-ամեակի նուէրը... Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի երկար տարիներու երազը՝ միութիւնը օժ-



տելու ԻՐ մարգալանով: Քաղաքապետութիւնը իր պատրաստակամութիւնը յայտնեց Հ.Մ.Ը.Մ-ը հիւրընկալելու իր քաղաքին մէջ, անոր յատկացնելով հողատարածք մը, որուն վրայ պիտի կառուցուին մարգաղաշտ եւ սրահներ:

Անշուշտ, մեծ էր ուրախութիւնը Հ.Մ.Ը.Մ-ականներուն, որոնք ամէն ճիգ ի գործ դրած էին իրականացած տեսնելու համար այս ծրագիրը:

Այնուհետեւ ելոյթ ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Անդրանիկ Պահարեան, որ դրուատեց Սանթինին, անոր յիշեցնելով շուրջ տասնամեակ մը առաջ անոր կատարած մէկ խոստումը այս ուղղութեամբ, որ առանց մոռնալու հետապնդած էր ու այսօր կը դարձնէր իրականութիւն:

Պարահանդէսը ունէր իր գեղարուեստական բաժինը, գորապահոված էր Վրէժ Սահակեան իր նուագախումբով:

Կէս գիշերուան մօտ նաւը ձգեց քարափը եւ Սէնի վրայ, իսկապէս լոյսերու մէջ շողշողացող Փարիզի՝ լոյսերու քաղաքի գեղեցիկ կամուրջներէն անցնելով հրաշալի պտոյտ մը պարգեւեց ներկաներուն:

Պարահանդէսի տեւողութեան շատեր շահեցան արժէքաւոր նուէրներ, սակայն մեծագոյն տոմսը՝ վիճակահանութեան մեծագոյն նուէրը շահած էր Հ.Մ.Ը.Մ-ը:

Նոր հարիւրամեակի սեմին, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսը ապագայ սերունդին կը բանար նոր երազներու իրականացման ուղին՝ իր սեփական տան մէջ բարգաւաճելու կարելիութիւնը:







## Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ՝ ՄԻԲՆԻՆԻ ՄԷՁ

**Հ**ՄԸՄԻ Միևիսի մեկուսի շրջանի վարչութեան, խմբապետական կազմին եւ մշակութային յանձնախումբին կազմակերպութեամբ, Կիրակի, 19 Մայիս 2019-ի յետմիջօրէի ժամը 5-ին, «Anton-Fingerle-Bildungszentrum» սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութեան 100-ամեակի յորերեւական հանդիսութիւնը, ներկայութեամբ Պաւարիոյ հայ համայնքի հոգեւոր հովիւ Այգիլի Քհնյ. Յովհաննիսեանի, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ալէք Սաչատրեանի, Գերմանիոյ հայ համայնքի ազգային միութիւններու ներկայացուցիչներու, Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ հիւրերու:







## Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՒՐՈՊԱՅԻ ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐՈՒ ԶՈՐՐՈՐԴ ԺՈՂՈՎԸ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ

**Շ**աբաթ, 23 Մարտ 2019-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի «Նաւասարդ» կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Եւրոպայի մեկուսի շրջաններու ատենապետներու չորրորդ ժողովը, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի եւ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ալէք խաչատրեանի: Ժողովին իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի (Անգլիա), Փարիզի, Մարսէլի, Վալանսի (Ֆրանսա), Ալմերլի, Առնհեմի (Հոլանտա), Վիեննայի (Աւստրիա),

Սթոքհոլմի, Սոտերթեյիոյ (Շուէտ), Միւնիխի (Գերմանիա), Պուլկարիոյ եւ Երուսաղէմի ներկայացուցիչները:

Ժողովը նախ գեկուցում մը լսեց վերջին մէկ տարուան ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ունեցած գլխաւոր աշխատանքներուն մասին (100-ամեակի տօնակատարութիւններ, համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակում), որմէ ետք շրջաններու ներկայացուցիչները ներկայացուցին իրենց մասնաճիւղերուն աշխատանքները եւ դիմագրաւած դժուարութիւնները:

Ժողովը լայնօրէն քննեց միութեան

Եւրոպայի գործունէութեան աշխատելու լաոճը, շեշտելով որ այդ ոճը կը տարբերի այլ շրջաններու աշխատելու լաոճէն՝ նկատի ունենալով եւրոպական երկիրներու պայմանները եւ տեղական մշակոյթի ու մտայնութեան իւրայատկութիւնները:

Ժողովականները առանձին օրակարգով արտայայտուեցան միջ-շրջանային բանակումներու եւ մարզախաղերու կազմակերպման կարեւորութեան մասին: Անոնք նաեւ քննեցին անդամական թիւերու կապուած մտահոգութիւններ եւ անհրաժեշտ ախտաճանաչումներ կատարելով՝ ներկայացուցին թիւերու աճի գործնական առաջարկներ:

Աւարտին, ժողովականները իրագեկ դարձան Հ.Մ.Ը.Մ.ի երիտասարդական Ա. համագումարի եւ Պատգամաւորական 12-րդ Ընդհանուր Ժողովի պատրաստութիւններուն:

Նշենք, որ ժողովէն ետք, մասնակիցները ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի շրջանի հիմնադրութեան 40-ամեակի յոբելեանական տօնակատարութեան:







# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄԵՐԻԿԵԱՆ ՑԱՄԱՔԱՄԱՍԻ ՀՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐՈՒ ԺՈՂՈՎԸ

**Բ**անի մը տարւան ընդհատումէ ետք, Շաբաթ, 6 Ապրիլ 2019-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան գրասենեակին մէջ տեղի ունեցաւ միութեան ամերիկեան ցամաքամասի Շրջանային Վարչութիւններու ատենապետներուն ժողովը, որուն ներկայ գտնուեցան յատկապէս Մ. Նահանգներ ժամանած՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան եւ Կեդրոնական Վարչութեան ամերիկեան ցամաքամասի անդամներ՝ եղբայրներ Վիգէն Դաւթեան, Օշին Փիրումեան (Արեւմտեան Մ. Նահանգներ), Հրաչ Մեսրոպեան (Արեւելեան Մ. Նահանգներ), Մոսիկ Թոփուզեան (Գանատա) եւ Արմանտո Թորգոմեան (Հարաւային Ամերիկա):

Միօրեայ ժողովին մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան եւ Արեւելեան Մ. Նահանգներու, Գանատայի Շրջա-



նային Վարչութիւններու ատենապետները եւ Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչը:

Ժողովը երեք նիստով քննեց միութեան աշխատանքներուն յաւելեալ աշխուժացման կարեւորութիւնը եւ այս գծով չորս շրջաններու միջեւ համագործակցութեան կարելիութիւնները: Ժողովին անդրադարձ կատարուեցաւ ամերիկեան ցամաքամասի մարզախաղերու եւ բանակումներու աւելի յաճախակի կազմակերպման, փոխադարձ այցելութիւններու եւ իրարու փորձա-

նութիւններէն օգտուելու անհրաժեշտութեան:

Օրակարգի 11 կէտերը իրենց ենթաբաժիններով եղան հարուստ: Շրջանները ամփոփ զեկուցումներ ներկայացուցին իրենց գործունէութեան եւ ապագայ ծրագիրներուն մասին: Կեդրոնական Վարչութիւնը, իր կարգին, ներկայացուց միութեան 100-ամեակի եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ բանակումի աշխատանքները: Բնականաբար, խօսուեցաւ ընդհանրական եւ տեղական

զօրակարգութիւններու մասին: Յատուկ օրակարգով նիւթ դարձան նոր անդամներու ներգրաւման ձեւերը: Խօսուեցաւ նաեւ միութեան երիտասարդական Ա. համագումարին (Աթէնք, Մայիս 2019) եւ Պատգամաւորական 12-րդ Ընդհանուր Ժողովին (Ծաղկաձոր, Հոկտ. 2019) պատրաստութիւններուն մասին:

## ԱՅԼ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Ատենապետներու ժողովին աւիթով Մ. Նահանգներ ժամանած Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան Կիրակի, 7 Ապրիլին հանդիպում մը ունեցաւ Արեւմտեան Մ. Նահանգներու մասնաճիւղերու ատենապետներուն հետ: Յաջորդող օրերուն ան այցելեց Կլենտէյլի «Արարատ», Սան Ֆեռնանտո Հովիտի «Մասիս» եւ Պրըպէնքի «Միփան» մասնաճիւղերու կեդրոններ: Ան նաեւ հանդիպումներ ունեցաւ Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, «Ասպարէզ» օրաթերթի խմբագրութեան, ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան եւ շրջանի Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէին հետ:







# ԵՂԲ.ՀԱՄԼԷԹ ՉՐԱԽՉԵԱՆ ՊԱՐԳԵԲԱՏՐՈՒԵՑԱԲ ՄԻՈՒԹԵԱՆ «ԱՐԺԱՆԵԱՑ» ՀՔԱՆՀԱՆՈՎ

Արեւոյշ  
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

**Հ**ինգլաբի, 11 Ապրիլ 2019-ի երեկոյեան, դարձեալ եռուգետի մէջ էր Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան կեդրոնի «Գէորգ Անտոնեան» սրահը, ուր համախմբուած էին մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ-ականներ՝ մասնակցելու համար իրենց սիրելի վաստակաշատ եղբոր՝ Համիլթ Չրախչեանի Հ.Մ.Ը.Մ-ի բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով պարգևատրման ձեռնարկին:

Ներկայ էին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Վիգէն Դաւթեան, Օշին Փիրումեան եւ Արմանտո Թորգոմեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչներ Գարմէն Օհանեան եւ Աւետիք Իզմիրլեան, Կեդրոնական Կոմիտէի անդամներ Կարօ Իսքէնճեան եւ Ռազմիկ Շիրինեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամներ, Նաւասարդեան մարզախաղերու «Պատուոյ նախագահ»ներ, «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական»ներ, անցեալի եւ ներկայի Շրջանային Վարչութիւններու անդամներ, մասնաճիւղերու ատենապետներ, Չրախչեան ընտանիքը եւ բազմաթիւ հիւրեր:

Շրջանային Վարչութեան անունով ներկայներուն բարի գալուստ մաղթեց եւ ձեռնարկին հանդիսավարութիւնը կատարեց քոյր Նորա Չափարեան:

Կեդրոնական Վարչութեան խօսքը



Ժեւորէ միութենական իր կազմաւորումը եւ առօրեայ ապրումի պիտի շարունակէ վերածել «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր» գաղափարախօսութիւնը: Ուրեմն, յառա՛ջ հաստատ քայլերով եւ խիտ շարքերով, դէպի նորանոր բարձունքներ եւ նուաճումներ: Յառա՛ջ դէպի նորանոր ամեակներ եւ մրցանիշներ: Յառա՛ջ պատուաբեր անցեալին յաղթական ապագայ»:

Շրջանային Վարչութեան պատգամը փոխանցեց ատենապետ եղբ. Յակոբ Թիւֆէնքեան, որ բարի գալուստ մաղթելէ ետք ներկայներուն՝ կեդրոնացաւ երեկոյին նպատակին եւ ըսաւ. «Այսօրուան մեծարեալը բոլորիս ծանօթ եղբ. Համիլթ Չրախչեանն է, որուն անձնապէս ճանչնալու եւ մօտէն գործակցելու առիթը ունեցած եմ Հ.Մ.Ը.Մ-ի միջոցով: Եղբ. Չրախչեանի միութենական գործունէութիւնը մեծապէս տպաւորած է զիս եւ մեր միջեւ ստեղծած է իւրաքայտուկ կապ մը, որ կը շարունակուի մինչեւ օրս»:

փոխանցեց աշխատանքային այցելութեամբ շրջանը գտնուող ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ան առաջին հերթին ընդգծեց Հ.Մ.Ը.Մ-ի հզօրութիւնը եւ անոր ուժականութեան նպաստող միութենականներու միասնականութիւնը, որոնք արդար հպարտութեան ազգակներ են: Այս իմաստով, աւելի խորանալով ան ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ-ը արդար հպարտութեամբ կը պարծենայ իր իրագործումներով եւ հսկաներով լեցուն անցեալով: Հ.Մ.Ը.Մ-ը արդար հպարտութեամբ կը պարծենայ իր այսօրուան ձեռքբերումներով: Հ.Մ.Ը.Մ-ը բոլոր տուեալները ունի հպարտ ըլլալու իր խոստմանից պատանիներով եւ վստահութիւն ներշնչող երիտասարդութեամբ, որոնք մեր վաղուան դրամագրուին են: Միութեան 100-ամեակին առիթով Լիբանան, Փարիզ եւ Պոլիս մեր հիմնադիրներու շիրիմներէն, ինչպէս նաեւ Արարատ լեռան կատարէն Հ.Մ.Ը.Մ-ական խմբապետ-խմբապետուհիներու կատարած ուխտը վկայ, այդ սրբազան վայրերէն բերուած բուռ մը հողը եւ վառած ջահը վկայ, Հ.Մ.Ը.Մ-ի վաղուան սերունդը լաւապէս պիտի ար-

նապետ եղբ. Յակոբ Թիւֆէնքեան, որ բարի գալուստ մաղթելէ ետք ներկայներուն՝ կեդրոնացաւ երեկոյին նպատակին եւ ըսաւ. «Այսօրուան մեծարեալը բոլորիս ծանօթ եղբ. Համիլթ Չրախչեանն է, որուն անձնապէս ճանչնալու եւ մօտէն գործակցելու առիթը ունեցած եմ Հ.Մ.Ը.Մ-ի միջոցով: Եղբ. Չրախչեանի միութենական գործունէութիւնը մեծապէս տպաւորած է զիս եւ մեր միջեւ ստեղծած է իւրաքայտուկ կապ մը, որ կը շարունակուի մինչեւ օրս»:

Ապա, եղբ. Չրախչեանի միութենական գործունէութեան անդրադառնալով, ան շարունակեց՝ ըսելով. «Եղբ. Չրախչեան միութենական իր գործունէութիւնը սկսած է 1950-ական թուականներուն, Թեհրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութեան (ՀՄԱԿ) մէջ, իբրեւ մարզիկ, լեռնագնաց եւ չմշկող: Ղեկավարի իր յատուկութիւններուն շնորհիւ, ան վարած է նաեւ վարչական պաշտօններ նոյն միութեան մէջ: Մ. Նահանգներ փոխադրուելով՝ ան շարունակած է միութենական իր գործունէութիւնը Հ.Մ.Ը.Մ-ի Կլեմսէյի «Արարատ» մասնաճիւղին մէջ՝ իբրեւ





վարչական, ատենապետ եւ համեստ միութենական: Այնուհետեւ, մասնաճիւղային սահմաններէ դուրս գալով, ան Հ.Մ.Ը.Մ.ին ծառայած է իբրեւ Շրջանային Վարչութեան տնտեսական յանձնախումբի անդամ, Շրջանային Վարչութեան ատենապետ, հուսկ՝ իբրեւ Կեդրոնական Վարչութեան անդամ, չմոռնալով իր օգտակար ներդրումը բերել հայրենի Հ.Մ.Ը.Մ.-ՀԱՍԿ-ի գարգացման: Եղբայրը միութենական երկարամեայ գործունէութեան համար 2014-ին, Շրջանային Վարչութեան կողմէ արժանացած է «Տիպար Հ.Մ.Ը.Մ.-ական» ի տիտղոսին, իսկ 2018-ին սիրալուծար ստանձնած է Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 43-րդ մարզախաղերու պատուոյ նախագահութիւնը»:

Եղբ. Թիւֆէնքեան յատկապէս ընդգծեց եղբ. Չրախչեանի իրաւ Հ.Մ.Ը.Մ.ականի տիպարը, որ կը յատկանշուի իր յաջողութիւնները սիրելի կազմակերպութեան եւ ժողովուրդին հետ բաժնեկցելու իրողութեամբ: Եղբ. ատենապետը չմոռցաւ նաեւ յիշելու տիկ. Կրեթթա Չրախչեանի կարեւոր դերը մեծարեալի կեանքին մէջ, որ սիրելի կողակից եւ գուրգուրոտ մայր մը ըլլալու աւրններ, դէպի Հ.Մ.Ը.Մ. առաջնորդած է իրենց զաւակները, որոնք իրենց հօր օրինակին հետեւելով, մեծապէս կը նպաստեն անոր վերելքին:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն «Արժանեաց» շքանշանի կանոնադրային բացատրութիւնը ներկայացնելով եղբ. Թիւֆէնքեան բեմ հրաւիրեց մե-

ծարեայը եւ կինը, ինչպէս նաեւ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանը, որպէսզի շքանշանը յանձնէ եղբ. Չրախչեանին, առ ի գնահատանք միութենական իր բեղուն գործունէութեան:

Շքանշանի յանձնումի արարողութենէն ետք, իր սրտի խօսքը փոխանցեց եղբ. Համլէթ Չրախչեան: Ան նախ շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ական իր քոյր-եղբայրներուն, իրեն ընծայած պատիւը կիսելով անոնց հետ: Ան յատուկ շնորհակալութիւն յայտնեց Շրջանային Վարչութեան, զինք այս մեծարանքին արժանի գտնելուն, ինչպէս նաեւ Կեդրոնական Վարչութեան՝ համապատասխան դիմումին ընդառաջելուն համար: Ապա, ան փափաք յայտնեց, որ «միւս տարիներին, Միացեալ



Նահանգներում աւելի շատ անդամներ արժանանան այս շքանշանին: Կարեւոր է, որ այս շքանշանը եւ այս պարգեւատրումը բաժանենք ինչքան որ շատ կարող ենք մեր Հ.Մ.Ը.Մ.ականների մէջ: Կարեւոր հարց է: Չպահենք էս շքանշանը միայն Կեդրոնական Վարչութեան», ըսաւ եղբայրը եւ վստահեցուց, որ այս շքանշանին արժանաւոր շատ Հ.Մ.Ը.Մ.ականներ կան Սփիւռքի, Հայաստանի, Եւրոպայի եւ Լիբանանի մէջ:

Իր սրտի խօսքը փոխանցեց նաեւ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Դաւթեան, որ շնորհաւորելով եղբ. Չրախչեանի պարգեւատրումը՝ հպարտանք յայտնեց, որ մօտէն ճանչցած է զինք, տպաւորուած է անոր միութենական տիպարով եւ շատ բան սորված է իրմէ: «Եղբ. Համլէթ Չրախչեան եղած է իմ առաջնորդը, որմէ շատ բան եմ սովորել», ըսաւ եղբայրը եւ իր երախտագիտութիւնը յայտնեց միութենական դաստիարակին, որուն հետ նաեւ գործակցած է Հ.Մ.Ը.Մ.ի մէջ:

Շնորհաւորելի երեկոյի պաշտօնական յայտագիրի աւարտէն ետք, ներկաները առիթը ունեցան իրարու հետ զրուցելու, Հ.Մ.Ը.Մ.ական գեղեցիկ յուշեր վերապրելու, անձնապէս շնորհաւորելու օրուան մեծարեայը եւ յիշատակի նկարներ նկարուելու անոր հետ: Մեծարման գեղեցիկ ձեռնարկը վերջ գտաւ ուշ երեկոյեան: Ներկաները գոհունակութեամբ մեկնեցան տուն, Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալու հպարտանքը անգամ մը եւս ապրելով:





Photo by Markar

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐԿՐՈՐԴ 100-ԱՄԵԱԿԻ ՄԱՅԻՍԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՓԱՌԱՏՕՆԸ ԼԻՔԱՆԱՆԻ ՄԷՋ

**Թղթակից  
ՊՈՒՐԾ ԴԱՍՈՒՏ**

**Ն**ախագահութեամբ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Նարեկ Արք. Ալլեմեզեանի, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան եւ կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, Կիրակի, 26 Մայիս 2019-ի երեկոյեան ժամը 6-ին, Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ տեղի ունեցաւ միութեան երկրորդ հարիւրամեակի Մայիսեան

առաջին փառատօնը, ներկայութեամբ լիբանանահայ հոգեւոր պետերու, Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Վահագն Աթաբէկեանի, պետական երեսփոխան Յակոբ Թերզեանի, Պուրճ Համուտի եւ Այնճարի քաղաքապետներու, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայ եւ նախկին անդամներու, ՀՕՄ-ի եւ Համագգայինի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչներու, Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի անդամներու, մարզական ֆետերասիոններու մօտ Հ.Մ.Ը.Մ-ի ներկայացուցիչներու, հիւրերու, հրաւիրեալներու եւ աւելի քան 3000 համակիրներու, որոնք

եկած էին միութեան երկրորդ հարիւրամեակի երթին իրենց հաւատարմութիւնը յայտնելու եւ Մայիսեան յղթանակներով զօտեպնդուելու:

### ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄԸ

Մայիսեան փառատօնին պաշտօնական բացումը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբին կողմէ Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներուն կատարումով եւ դրօշակի արարողութեամբ: Յաջորդեց աւանդական ջահավառութիւնը՝ սկսուտական ձեռնարկն աշխատանքով պատրաստուած կայմերու դադարով:





ապրեցաւ ու ապրեցուց փառքի օրեր», ըսաւ եղբ. Թապագեան: Ապա, ան անդրադարձաւ մարզական կեանքին՝ նշելով, թէ միութեան պատասխանատուները լաւապէս կը դիտակցին, որ մարզական խաղերը կը պահանջեն նիւթական եւ բարոյական մեծ գոհողութիւն, ժամանակի եւ շունչի երկար սպառում, նաեւ գիտեն սեղական պայմանները՝ իրենց տարբեր երեսներով, որոնք դժուարութիւններ կը յառաջացնեն մարզական խաղերու զարգացման վրայ: «Բայց այս բոլորով հանդերձ, կը հաւատանք, որ լաւապէս պատրաստուած մարզական խումբերով մրցումներ կատարելը անպայման իր դրական արդիւնքը կ'ու տայ՝ ի շահ միութեան եւ ազգի գոյատեւման», հաստատեց ան:

Եղբ. Թապագեան յուսարձակի տակ առաւ այն իրողութիւնը, որ Հ.Մ.Ը.Մ.ը մարզական միութիւն չէ միայն, այլ նաեւ՝ ազգային իմացականութեան դպրոց է, ուր սերունդները կը սորվին գոհաբերութեան ոգի, հայրենասիրութիւն եւ կը ստանան բարոյական դաստիարակութիւն: «Կ'ապրինք գերագանց ուժերու յաջողութեան ժամանակաշրջանը: Օրերն ու պայմանները չեն խնայեր նիւթական համեստ կարողութիւններ ունեցողներուն: Տանք Հ.Մ.Ը.Մ.ին, որպէսզի մեր գաւազները հոն կազմաւորուին եւ կոփուին հայօրէն: Տանք անսակարկ եւ

Բացման խօսքով հանդէս եկաւ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենադպիր եղբ. Հայկ Թապագեան: Ան ըսաւ, որ 101 տարի առաջ Հ.Մ.Ը.Մ. իր ծնունդով լծուեցաւ կազմութեանը սկստական եւ մարզական հզօր բանակի մը, որ նուիրումով եւ մեծ գոհողութեամբ ծառայեց ազգին եւ տէր կանգնեցաւ անոր դրօշին: Տարիներ շարունակ այս միութիւնը եղաւ հայ պատանին ու պարմանուհին հոգեկան եւ ֆիզիքական կրթութեան ամենալաւ օճախը, թրծեց անոնց հոգիները՝ «Բարձրանալու եւ բարձրացնելու» վեհագոյն զգացումներով, դարձաւ անոնց երկրորդ ծնող՝ սիրոյ եւ ջերմութեան, ծառայութեան, մարդակերտումի եւ հայակերտումի դարբնոց:

«Իր հիմնադրութեան առաջին տարիներէն սկսեալ, իբրեւ ազգային կազմակերպութիւն, իբրեւ ազգային անփոխարինելի միաւոր, Հ.Մ.Ը.Մ. ծառայեց

յանուն միացեալ, ազատ ու անկախ Հայաստանի, եղաւ մարզական առաջնորդ ու դրօշակիր, տարաւ յաղթանակներ եւ



Photo by Merker





Փոտո by Markar



Փոտո by Markar

առանց հաշիւի՝ այն համոզումով, որ տրուածը անպայման իր օգտակար բաժինը կ'ունենայ: Տանք մանաւանդ այս օրերուն, երբ կարիքը շատ է: Տանք՝ ի շահ սկսողներուն եւ մարզիկներուն», իր խօսքը եզրափակեց եղբ. Հայկ Թապալեան:

**ԼԵՎԱՄ-Ի ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐՆԵՐՈՒ ՄՐՅԱՆԱԿՆԵՐՈՒ ԲԱՇԽՈՒՄԸ**

Բացման խօսքէն ետք տեղի ունեցաւ ԼԵՎԱՄ-ի մրցանակակիր աշակերտներու եւ վարժարաններու բաժակներու եւ վահաններու սուչուլթիւնը: 2018-2019 տարեշրջանի ԼԵՎԱՄ-ի «Լաւագոյն մար-

զիկ» յայտարարուեցաւ Համագգայինի Մեյանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարանէն Հրակ-Դրօ Կիւրիւնեան, «Լաւագոյն մարզիկուհի»՝ Ազգային Եղիշէ Մանուկեան Քոյէճէն Փաթիլ Ասատուրեան, «Լաւագոյն մարզիչ»՝ Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Բարձրագոյն Վարժարանէն Գրիգոր Մեսճեան: ԼԵՎԱՄ-ի վահանին տիրացաւ միջնակարգի բաժինին համար Միխիթարեան վարժարանը, իսկ երկրորդականի բաժինին համար՝ Համագգայինի Մեյանքթոն եւ Հայկ Արսլանեան Ճեմարանը: Հայկազեան համալսարանի «Արդար խաղ»ի մրցանակը խլեց Հայ Կաթողիկէ Մեսրոպեան Բարձրագոյն Վարժարանը:

**Հ.Մ.Ը.Մ-Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ**

Փառաստօնին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան պատգամը փոխանցեց ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ան ըսաւ, որ խանդավառութեան, յոյսի եւ լաւատեսութեան աղբիւր է Հ.Մ.Ը.Մ-ի երկրորդ հարիւրամեակի Մալխեան առաջին փառաստօնը: Միութեան շարքերը մնայուն վերանորոգման մէջ են, անոր երդիքին տակ կու գան, կը թրծուին, կը կազմաւորուին ու կ'անցնին իրերայաջորդ սերունդներ: Նորերը կու գան հիններուն տեղը առնելու, հաստատելու, որ նուիրական երթը կը շարունակուի, իսկ մեր ժողովուրդը իր գաւակներն ու թոռները միշտ կը մատահի այս «կամաւոր բանակ»ին, որ 100 տարուան իր ծառայութեամբ ու նուիրումով յարգանքի եւ գնահատանքի արժանի է բոլորին կողմէ:

Փառաստօնին եւ տողանցքին մասին խօսելով եղբ. Մկրտիչեան ըսաւ. «Այսօր այստեղ ներկայացուած արտացոլումն է ամբողջ տարուան մը վրայ երկարած կազմակերպչական, սկսողական եւ մարզական այն հսկայական աշխատանքին, որուն յօրեւած են այս միութեան երախտաւորները՝ մեծով ու փոքրով, վարչականով ու խմբապետով, միութեան բարերարով եւ բարեկամով: Բոլորին վարձքը կատար, մանաւանդ որ անցնող տարին սովորական տարի մը չէր եւ աշխատանքներն այ սովորական չէին: 2018-ն Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակի





Photo by Markan

տարին էր, աշխատանքները նուիրուած էին 100-ամեակին, յաջողութիւնները եւ իրագործումներն ալ վայել էին 100-ամեակին»:

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը իր պատգամին մէջ դիտել տուաւ, որ փակուած հարիւրամեակով բացուեցաւ նոր հարիւրամեակի էջը, որ սկսաւ Հ.Մ.Ը.Մ-ի երիտասարդական համագումարով, երիտասարդութեան նկատմամբ միութեան ցուցա-

բերած յաւելեալ ուշադրութեամբ: Այստուհետեւ, միութեան սկառուտական եւ մարզական բաժիններուն կողքին պիտի դործէ երիտասարդական բաժինը, որ պիտի համախմբէ 18-30 տարեկան Հ.Մ.Ը.Մ-ականներ, որոնք միութեան միջավայրի մէջ մնալով իրենց համար պիտի ստեղծեն աշխատանքի յատուկ դաշտեր:

Եղբ. Մկրտիչեան յայտարարեց, որ երկրորդ 100-ամեակի նորութիւններէն

է Արցախի մէջ Հ.Մ.Ը.Մ-ական գործունէութեան ծաւալումը: «Այսօր, Հայաստանի անկախութեան 101-ամեակին նուիրուած այս փառատօնին ուրախութիւնը ունիմ մեր ժողովուրդին աւետելու, որ շուտով Հ.Մ.Ը.Մ-ի 111-րդ մասնաճիւղը կ'ունենայ Ստեփանակերտի մէջ եւ կը լծուի Արցախի մէջ կազմակերպական իր ցանցին ստեղծման ու տարածման», նշեց ան: Ապա, եղբ. Մկրտիչեան աւելցուց, որ այլ ուրախ լուր մը եւս ունի: Ան ըսաւ, որ փառատօնին ներկայ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Հրաչ Միսեռեանէն տեղեկացած է, թէ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի մեկուսի շրջանը, Շարաթ, 25 Մայիսի երեկոյեան, Փարիզի արուարձաններէն իսի լէ Մուլինոյի քաղաքապետ պրն. Անտրէ Սանթիլիէն պաշտօնապէս ստանձնած է Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի նուիրուած հողաշերտ մը, որ տարիներէ ի վեր կը հետապնդուէր՝ Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնի մը կառուցման համար:

«Այսպէս, շեշտեց եղբ. Մկրտիչեան, Հ.Մ.Ը.Մ-ի յաջողութիւնները կանգ չեն առներ: Հ.Մ.Ը.Մ. կոչուած է հասնելու հոն, ուր հայութիւն կայ, հոն ուր կազմակերպ կեանքի անհրաժեշտութիւն



Photo by Markan





կայ, հոն ուր սերունդ դաստիարակելու պահանջ կայ: Եւ այդ անհրաժեշտութիւնն ու պահանջը, այս օրերուն, քիչ մը ամէն տեղ կան. Հայաստանի մարզերէն մինչեւ ամերիկեան ցամաքամասի հեռուոր շրջաններ, անցնելով Եւրոպայի հայկական նորակազմ համայնքներէն եւ Միջին Արեւելքի աւանդական մեր գաղութներէն»:

Պատգամին յաջորդ բաժինով եղբ. Մկրտիչեան խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանին մասին, ուր «Հ.Մ.Ը.Մ.ական հսկայական գործ ու վաստակ կայ, հպարտութեան եւ խանդավառութեան անպատմելի յաջողութիւններ կան, նշեց ան եւ աւելցուց, - Լիբանանի շրջանը կոչուած է միշտ մնալու իր յաջողու-

թիւններու պատուանդանին վրայ եւ, հակառակ մարդուժի եւ նիւթական իր դժուարութիւններուն, տեւաբար ընթանալու հոսանքն ի վեր: Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը շատ բան կ'ակնկալէ Լիբանանի շրջանէն, որովհետեւ կը հաւատայ, որ Լիբանանը եղած է ու կը մնայ ամուր օղնայարը միութեան բազմաճիւղ աշխատանքներուն: Լիբանանէն գաղթած քոյր-եղբայրներն են, որոնք այսօր կանգուն կը պահեն միութեան աշխարհասփիւռ մասնաճիւղերէն շատերը: Նաեւ, Լիբանանի շրջանի մարզական եւ սկստական յաջողութիւններն են, որոնք տեւական ներշնչումի եւ ոգեւորութեան աղբիւր են Հ.Մ.Ը.Մ.ական ընտանիքին համար: Լիբանանի շրջանին

հօրութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի բովանդակ ընտանիքին հօրութիւնն է»:

Իր պատգամը եզրափակելով՝ եղբ. Մկրտիչեան յաւելեալ աշխուժութիւն, եռանդ եւ կորով մաղթեց Լիբանանի շրջանի պատասխանատու բոլոր կազմերուն, որպէսզի փառատօնէ փառատօն միութեան երթը շարունակուի անդամական նոր շարքերով եւ իրազործումներով, եւ որպէսզի մեր ժողովուրդը շարունակէ հպարտանալ ու հիանալ Մայրեան յաղթանակներու ոգիով գործող այս միութեամբ՝ անոր իւրաքանչիւր յաղթանակին մէջ տեսնելով իր սեփական յաղթանակը, հայ ոգիին ու հայ ինքնութեան պահպանման յաղթանակը:





**ՏՈՂԱՆՑՔԸ ԵՒ  
ՀԱՅՐԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԸ**

Խօսքերուն յաջորդեց այնքան սպասուած տողանցքը: Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին ազգային-հայրենասիրական երգերու երաժշտութեան կշռոյթով, խրոխտ, հպարտ եւ հաստատ քայլերով տողանցեցին Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Երջանային Խմբապետութիւնը, մասնաճիւղերու սկաուտական եւ մարզական կազմերը, Փուլթպոլի, պասքեթպոլի, փինկ-փոնկի, ճատրակի, հեծելաքշաւի, աթլետիկայի եւ թրէյսթրոնի խումբերը, ինչպէս նաեւ ԼԵՎԱՄ-ի մրցաշարքերուն մասնակցած լիբանանահայ վարժարաններու աշակերտները: Տողանցքը առաջնորդեցին Հ.Յ.Դ. Լիբանանի Երիտասարդական Միութեան դրօշակակիրները:

Դաշտին ամբողջ շրջանը կատարելէ ետք, տողանցողները շարունեցան ժողովուրդին դիմաց՝ պարզելով սպաւորիչ պատկեր մը:

Հուսկ, հայրական իր պատգամը փոխանցեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Նարեկ Արք. Այլեմեզեան: Ան դիտել տուաւ, որ ազգերու պատմութեան մէջ կան անձեր, վայրեր ու թուականներ, որոնք պատմութեան չեն պատկանիր, այլ անցեալը կը շողախեն ներկային եւ մեր կամքը կը պրկեն՝ ապագային նայելու լաւատեսութեամբ ու յաղթանակով: «28 Մայիս 1918. այս վայրը կը բաւէ հաստատելու, որ այսօր Հ.Մ.-



Photos by Markar







Photo by Markar



Photo by Markar

Ը-Մ-ի այս փառաւոր ներկայութեամբ Պուրճ Համուտի այս մարզադաշտը կը վերածուի Սարգարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսէի, եւ Սարգարապատ ու Պուրճ Համուտ, Արցախ եւ Լիբանան կը դառնան նոր յաղթանակներու գրաւական, երբ մենք այսպէս կը տողանցենք աշխարհի բոլոր ճամբաներուն վրայ՝ միշտ մեր նայուածքը ուղղելով Արարատին եւ մեր սրբազան պահանջատիրութեան ու Հայ Դատին», ըսաւ Առաջնորդը: Ան նշեց, որ Հ-Մ-Ը-Մ-ը այս փառատօնով անգամ մը եւս եկաւ հաստատելու, որ 28 Մայիս 1918-ը միայն թուական մը չէ, այլ՝ մեզ պարտերող ոգի է, խորհուրդ է ու պատգամ: Հ-Մ-Ը-Մ-ը միայն տողանցող միութիւն մը չէ, այլ՝ աշխարհով մէկ գործող իր միաւորներով տաղանապ է, հայապահպանում է, հայոց պահանջատիրութիւն է:

տիրութիւն է: Նարեկ Արք. Ալլեմեզեան յայտնեց,



Photo by Markar

որ տողանցքի ընթացքին ժողովուրդը իր ծափերով ու սրտի տրոփումով եկաւ լսելու, թէ ինք Հ-Մ-Ը-Մ-ի կողքին է, որովհետեւ այս միութիւնը ամէն օր ժողովուրդին հետ է, իրերայաջորդ սերունդներուն հայեցի կրթութիւն կը ջամբէ, եւ ո՛չ միայն սկստական ու մարզական գործունէութիւն կը ծաւալէ, «որովհետեւ Հ-Մ-Ը-Մ-ը Հայաստանի հետ է, հայութեան հետ է, եւ այդ ընթացքը ո՛չ այս դաշտով կը վերջանայ, ո՛չ ալ որեւէ տեղ կանգ կ'առնէ», գիտել տուաւ Առաջնորդը՝ իր գնահատանքն ու գոհունակութիւնը արձանագրելով Հ-Մ-Ը-Մ-ին, որովհետեւ այս երեւոյթը ցուցանիչ է այն իրողութեան, թէ այս միութիւնը հաւատարիմ կը մնայ իր նշանաբանին, կը բարձրանայ ու իրեն հետ կը բարձրացնէ՝ միշտ պատրաստ սատարելու հայրենակերտումի, հայակերտումի ու պահանջատիրութեան սրբազան մեր իտէպներուն:

«Այսօր հպարտութեան առիթ է իւրաքանչիւր հայորդիի համար, բոլորիս համար հաւաքաբար, որովհետեւ պատմութիւն կերտած մեր հերոսները այսօր անգամ մը եւս իրենց օրհնութեամբ եւ ոգեղէն ներկայութեամբ կը լեցնեն մեզ՝ ըսելու, թէ մենք Սարգարապատեան սերունդ ենք, անկախութեան եւ յաղթանակի սերունդ ենք: Ահաւասիկ Հ-Մ-Ը-Մ-ը այսօր կու գայ իրբեւ հաւաքական հայեցի այս պատգամին՝ ցուցնելու մեր բոլորին գոհունակութիւնը եւ յաղթական կեցուածքը», ըսաւ Նարեկ





Արք. մաղթելով և աղօթելով, որ Հ.Մ.-Ը.Մ.-ի տիրական և յաղթական առաջնորդութեամբ շարունակենք մեր երթը, միշտ յիանանք Սարգարապատեան ոգիով և միշտ հաւատարիմ մնանք մեր պատմութեան՝ մեր ժողովուրդի յաւերժութեան և մեր հայրենիքի ամբողջական տիրացման ճամբուն վրայ կերտելու համար նոր յաղթանակներ:

րարկուեցաւ գեղարուեստական ճոխ յայտագիր և մասնաճիւղեր յատուկ կրպակներով վաճառեցին համադամ ուտելիքներ և տեսակաւոր ըմպելիքներ:

Գեղարուեստական բաժինով ելոյթ ունեցան երիտասարդական «Միհրան» խումբը, նաեւ՝ երգիչներ Հրաչ Կայծակեան և Սերոբ Յակոբեան, երգեհոնի ըն-

կերակցութեամբ Սեդո Պաղտասարեանի:

Լուսանկարները՝ Սարգար Թումայեանի (Studio Ashnag) և Արամ Սոնունճեանի (Amaya):

**ՓԱԿՈՒՄԸ ԵՒ ՏՕՆԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ**

Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդին հայրական պատգամէն ետք, փառատօնը իր աւարտին հասաւ «Յառաջ, նահատակ» քայլերգով, որմէ ետք ներկայ ժողովուրդը փոխադրուեցաւ դաշտին հանդիպակաց բաժինը, ուր կի-



**ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ Ա. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԵՐՏԻՉՆԵՐՈՒՆ**



Հայաստանի Ա. Հանրապետութեան հիմնադրութեան 101-րդ տարեդարձին առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Երջանային Վարչութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, Կիրակի, 26 Մայիս 2019-ի կէսօրէ առաջ ժամը 11.00-ին այցելեց Պուրճ Համուրի և Զրրն Երպպէի Ազգային գերեզմանատուները և յարգանքի իր փորձը մատուցեց Հանրապետութեան կերպիչներուն:

Արդարև, պատուիրակութիւնը ծաղիկապսակներ զկրեղեց Նիկոլ Աղբալեանի, Լեւոն Եանթի, Միսոն Վրացեանի, Հրաչ Փափագեանի, Կարօ Սասունիի, Անարիք Սահակեանի, Արշակ Յովհաննէսեանի, Լոյս Մասունիի և Բարսեղ Կանաչեանի շիրիմներուն:





ՃԱՆՁՆԱՆՔ

# Հ.Մ.Ը.Մ.Ի «ԾԱՌ-ԱՅՈՒԹԵԱՆ» ՀՔԱՆՀԱՆԻՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՉՈՐՍ ԵՂԲԱՅՐՆԵՐ

## ՀԱՄԲԻԿ ՄԻՍԱՔԵԱՆ, ՊԵՐՃ ԲԱԼՈՒԼԵԱՆ, ԳՕԳՕ ՄԿՐՏԻՉԵԱՆ ԵՒ ԱՍԱՏՈՒՐ ՍՐԱՊԵԱՆ

Տեղի հասկնալի պատճառով, «Մարզիկ»-ի անցեալ թիւէն դուրս մնացին Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի Լիբանանի համդիսութեան առիթով՝ «Ծառայութեան» շքանշանի արժանացած չորս եղբայրներու կենսագրական տուեալները:

Ստորեւ կը ներկայացնենք զանոնք:



### ԵՂԲ. ՀԱՄԲԻԿ ՄԻՍԱՔԵԱՆ

Եղբ. Համբիկ Միսաքեան ծնած է 7 Հոկտեմբեր 1958-ին: Ան Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի մասնաճիւղին անդամակցած է 1966-ին, իբրեւ գայիկ՝ ապա սկսուտ:

Կիրարկած է ֆուլթայոլ եւ պասքեթբոլ: Մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի «Մուրատ», «Դանիէլ Վարուժան» ֆուլթայոլի, ինչպէս նաեւ՝ «Շանթ», «Կամբ» եւ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի պասքեթբոլի խումբերուն:

1980-ական թուականներուն ան ընտրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի մասնաճիւղի վարչութեան անդամ:

1987-ին, ան առաջին անգամ ըլլալով մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային ֆուլթայոլի յանձնախումբին եւ կը ըստանձնէ ատենադպիրի պարտականութիւնը, զոր կը վարէ շուրջ 30 տարի:

2003-ին եւ 2005-ին, յաջորդական երկու շրջան, ան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան անդամ՝ ըստանձնելով ատենադպիրի պաշտօնը:

2005-ին, ան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի միջ-դիւանական Զ. Ժողովին (Յունաստան), իսկ 2007-ին՝ Հ.Մ.Ը.Մ.ի Թ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին (Հայաստան):

1990-2004 ան կը նշանակուի Լիբանանի ֆուլթայոլի ֆետերասիոնի Պէյրուսի շրջանի յանձնախումբի անդամ:

2005-2017 ան Հ.Մ.Ը.Մ.ը կը ներկայացնէ Լիբանանի ֆուլթայոլի ֆետերասիոնին մէջ:

2005-ին, երբ Լիբանանի ֆուլթայոլի ֆետերասիոնը կը ստեղծէ աղջկանց ֆուլթայոլի խոյնախումբին, եղբ. Համբիկ կը դառնայ աղջկանց ֆուլթայոլի բաժանմունքի առաջին նախագահ:

Եղբ. Համբիկ Միսաքեան բազմիցս գլխաւորած է Լիբանանի ֆուլթայոլի ազգային հաւաքականներու պատուիրակութիւնները՝ արաբական թէ՛ ասիական մրցաշարքերու:

2013-ին, ան Ասիոյ ֆուլթայոլի ֆետերասիոնէն ստացած է մրցումներու հսկողութեան իրաւունք (Match Commissioner):

### ԵՂԲ. ՊԵՐՃ ԲԱԼՈՒԼԵԱՆ

Եղբ. Պերճ Բալուլեան փոքր տարիքէն մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի սկստական



շարքերուն: Զանազան կարգերէ եւ պաշտօններէ ետք, ան վարած է մասնաճիւղի խմբապետի պաշտօնը:

Այնուհետեւ ան փոխադրուած է Անթիլիաս եւ մասնաճիւղի խմբապետի պաշտօնով գործած է Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղին մէջ, միշտ հաւատարիմ միութեան «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին:

1990-ական թուականներու սկիզբը ան մեծ ջանքեր ի գործ դրած է վերականգնելու համար Հ.Մ.Ը.Մ.ի Թրիփոլի մասնաճիւղը: Երկու շրջան եղած է Շրջանային խմբապետական կազմի անդամ:

1995-ին փոխադրուած է Զահլէ եւ աշխատանք տարած է վերակազմակերպելու Հ.Մ.Ը.Մ.ի Զահլէի մասնաճիւղը: Երկար տարիներ եղած է մասնաճիւղի վարչական:

### ԵՂԲ. ԳՕԳՕ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Եղբ. Գոգօ Մկրտիչեան Հ.Մ.Ը.Մ.ի սկստական շարքերուն անդամակ-





Photo by Markar

ցած է 1959-ին, Հալեպի մէջ: Ան առաջին անգամ բանակումի մասնակցած է Քեսապի մէջ, 1961-ին: Դէպքերու պատճառով փոխադրուած է Պուրճ Համուտ, Լիբանան: Նոյն տարին ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ-ի Պուրճ Համուտի սկաուտական Ա. խումբին, իսկ երկու տարի ետք՝ երէցական փաղանգին, իբրև Վարիչ Առաջնորդ:

1965-ին ան ստացած է սկաուտական փոխ խմբապետի աստիճան, իսկ երկու տարի ետք՝ խմբապետի աստիճան: 1970-1972 վարած է Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբին պատասխանատուութիւնը:

1972-1976, եղբ. Գօգօ մաս կազմած է մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդին, իբրև հաշուապահ եւ քարտուղար: 1977-1980 ան աշխատած է ընկերային յանձնախումբի մէջ: 1982-1985 ընտրուած է վարչական, իբրև հաշուապահ եւ արխիւներու պատասխանատու: 1986-ին, լիբանանեան դէպքերու պատճառով ճամբորդած է Մ. Նահանգներ: Տարի մը գործած է Հ.Մ.Ը.Մ-ի Ֆրեզնոյի մասնաճիւղին մէջ: 1995-ին Լիբանան վերադառնալով ան ընտրուած է Հ.Մ.Ը.Մ-ի Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչական՝ մինչև 2010 թուական ստանձնելով վարչութեան հաշուապահութիւնը եւ Սկաուտ. Խորհուրդի ներկայացուցչութիւնը: Մասնակցած է Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Ներկայացուցչական Ժողովներու:

Եղբ. Գօգօ Մկրտիչեան երկար տարիներ մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ-ի «Մարգիկ» պաշտօնաթերթի վարչութեան: 2011-էն ի վեր ան անդամ է Հ.Մ.Ը.Մ-ի «Վարդգէս Տէր Կարապետեան» թանգարանի յանձնախումբին:

**ԵՂԲ. ԱՍԱՏՈՒՐ ՍՐԱՊԵԱՆ**

Եղբ. Ասատուր Սրապեան ծնած է 1944-ին, Դամասկոս: Պէյրութ հաստատուած է 1960-ին եւ երկու տարի մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ-ի Փութայոյի երկրորդական «Դրօ» խումբին: 1963-1970 ան կրած է Փութայոյի ներկայացուցչական խումբին շապիկը:

1990-ին եղած է պասքեթպոլի ներկայացուցչական խումբի մարզիչ, 1991-1992՝ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ:

Եղբ. Ասատուր Սրապեան յարգելի պատճառով բացակայեցաւ պարգեւատրման հանդիսութենէն:

ARMENIA

for private and group trips

www.saberatours.fr

# Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

Armavia  
Արմավիա

Photos: © Yarm Artinus-Bernard, La Ferre, rue du Ciel, Licence 075 960031 Studio ICRB 2015 1945

Direct Flights  
PARIS  
YEREVAN  
PARIS

Select  
your Journey

Guided Tours  
for 8 Days  
or 12 Days

11, rue des Pyramides  
75001 Paris  
tel 331 42 96 10 10  
fax 331 42 96 18 77  
saberatours@selectour.com

48, cours de la Liberté  
69003 Lyon  
tel 334 78 60 13 66  
fax 334 78 60 92 26  
sevan@selectour.com

67, La Canebière  
13001 Marseille  
tel 334 95 09 30 60  
fax 334 95 09 30 61  
marseille@wasteels.fr

32-38, rue Hamrabetoutian  
Yerevan  
tel 374 10 52 55 55  
fax 374 10 56 40 30  
saber@arminco.com





# Հ.Մ.Ը.Մ. ՄԱՍՆԱԿՅԵՅԱԲ ԼԻՔԱՆԱՆԻ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԵՐԿՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐԻՆ

## Ողբակից ՊԵՅՐՈՒԹ

**Շ**աբաթ, 26 եւ Կիրակի, 27 Յունուար 2019-ին, Լիբանանի սկաուտական ֆետերասիոնին կազմակերպութեամբ, «Զմմառ Փալաս» պանդոկին մէջ տեղի ունեցաւ միամեայ ծրագրման ու կազմակերպական աշխատանքներու դաստիարակչական երկօրեայ սեմինար մը:

Սեմինարին իրենց մասնակցութիւնը բերին Լիբանանի սկաուտական ֆետերասիոնին մօտ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչ եղբ. Վահէ Նաճարեան, Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի եւ Անթիլիասի մասնաճիւղերէն խմբապետներ՝ Նարին Աղամեան, Սիմոն Տէրտէրեան եւ Մեղրիկ Մնայեան:

Լիբանանեան սկաուտական զանազան միութիւններէ եկած խմբապետները կատարեցին յանձնախմբային ծրագրման աշխատանքներ:

Կիրակի, 27 Յունուար 2019-ին, Լիբանանի սկաուտական ֆետերասիոնին կազմակերպած ընդհանուր համազուտմարին ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Սկաուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան եւ Շրջանային ընդհանուր խմբապետուհի քոյր Վարդուկ Ֆունրոյեան:

Եզրափակիչ պաշտօնական հանդիսութեան խօսքեր արտասանեցին ֆետերասիոնի բարձրաստիճան անդամներ: Ապա, իւրաքանչիւր յանձնախումբ ներկայացուց իր մշակած ծրագիրը:

# ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԻՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ՝ ԼԻՔԱՆԱՆԻ ՄԷՋ

## Ողբակից ՊԵՅՐՈՒԹ

**Հ**.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային ըՍկաուտական Խորհուրդին հովանաւորութեամբ եւ Շրջանային խմբապետութեան կազմակերպութեամբ, խմբապետական դաստիարակչական միօրեայ սեմինար մը տեղի ունեցաւ Կիրակի, 17 Մարտ 2019-ին, «Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրին մէջ:



տերասիոնի անդամներու:

Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի, Պուրճ Համուտի, Անթիլիասի, Այնճարի եւ Ժրտէյտէի մասնաճիւղերէն 90 խմբապետներ իրենց մասնակցութիւնը բերին այս սեմինարին:

Առաջին բաժինով, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Սկաուտական Խորհուրդին եւ Լիբանանի ֆետերասիոնին կողմէ յուշանուէրներ փոխանցուեցան քոյր Լիւսի Պէրքիւպէօ-առ ի զնահատանք Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային խմբապետութեան եւ Լիբանանի ֆետերասիոնին մէջ իր ունեցած աշխոյժ եւ ժրջան աշխատանքին:

Սեմինարը ընթացք առաւ Լիբանանի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական քայլերգներով՝ ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Սկրտիչեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ Լիբանանի սկաուտական ֆետերասիոնին մօտ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչ եղբ. Վահէ Նաճարեանի,

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան սկաուտական ներկայացուցիչ եղբ. Յակոբ Զպլաքեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ղեկնի անդամներ՝ եղբ. Հայկ Թապազեանի եւ քոյր Սիլվա Սաղըրեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութեան եւ Սկաուտական Խորհուրդի անդամներու, ինչպէս նաեւ՝ ֆե-

րասիոնի անդամներու: Դաստիարակչական սեմինարին առաջին նիւթը («Ի՞նչպէս վնասէն պաշտպանուի») ներկայացուց համաշխարհային սկաուտական կազմակեր-



պուլժեան գործադիր մարմինի անդամ Սառա-Ռիթա Քաթիժան:

Ապա, Լիբանանի սկստական ֆե-տերասիոնի խմբապետ Ֆարէս Խալիֆէ ներկայացուց «Խմբապետներուն վերաբերմունքը անդամներուն հետ» նիւթը, իսկ ֆետերասիոնի խմբապետ Ճորճ Նիսի՝ «Սկստական շարժումին կառուցն ու տարածումը» նիւթը:

Չորրորդ նիւթը՝ «Հ.Մ.Ը.Մ.ի ըսկստական կառուցը» ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան

անդամ եւ ֆետերասիոնին մօտ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչ եղբ. Վաչէ Նաճարեան:

Ճաշէն ու դադարէն ետք տեղի ունեցան խմբային աշխատանքներ եւ ներկայացում: Ապա, սեմինարին հինգերորդ նիւթը ներկայացուց համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ բանակումի ընդհանուր խմբապետուհի քոյր Թային Օրտոդյեան («Ընդհանրական մեծ բանակումներ պատրաստելու ձեւը»):

Վեցերորդ նիւթը՝ «Հ.Մ.Ը.Մ.ի ըս-

կառու ըլլալու առաւելութիւնները» ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Սկստական Խորհուրդի նախկին ատենապետուհի քոյր Ալին Քէչէպաշեան:

Սեմինարի աւարտին մասնակցողներուն յանձնուեցան մասնակցութեան յատուկ հաստատագիրներ:

Սեմինարը վերջ գտաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

# ՀԱՅ ԴԱՏԻ ՊԱՅՔԱՐԻ ՈՒԽՏԻ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒՄ

Թղթակից ՊԵՅՐՈՒԾ


**Ե**րեքշաբթի, 23 Ապրիլ 2019-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի մասնաճիւղերու խմբապետական կազմերը, Շրջանային Խմբապետութիւնը, մասնաճիւղերու Սկստական Խորհուրդներն ու Շրջանային Սկստական Խորհուրդը, ինչպէս նաեւ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչները՝ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի բոլոր մասնաճիւղերը ներկայացրան իր, այցելեցին Հայոց Ցեղասպանութեան զոհերու Պիքֆայայի յուշարձանը, եւ ինչպէս ամէն տարի, այս տարի եւս իրենց յարգանքի տուրքը մատուցեցին մէկուկէս միլիոն մեր նահատակներու յիշատակին:

Երեկոյեան ժամը 6:30-ին Պիքֆայայի Ս. Աստուածածին մատուռ հասնելով, նախ տեղի ունեցաւ մէկուկէս միլիոն սրբադասուած նահատակներու նուիրուած եկեղեցական արարողութիւն:

Ապա, բոլորը միասին, լուռ երթով, ուղղուեցան նահատակներու յիշատակին կանգնեցուած յուշարձանը եւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի սկստականներուն եւ

մարզիկներուն անունով ծաղկեպսակներ ու ծաղիկներ գետեղեցին, որմէ ետք անոնք մէկ վայրկեան յոտնկայս լուռութեամբ յարգեցին նահատակներու յիշատակը:

Յուշարձանին առջեւ խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Սկստական Խորհուրդի ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան: Ան ըսաւ, որ թէեւ 104 տարիներ անցած են 20-րդ դարու առաջին եւ զարհուրելի ողբերգութենէն, բայց հայ ժողովուրդը չէ յանձնուած: Հայ ժողովուրդը, անցնող մէկ դարուն, իր կրօնական, քաղաքական եւ աշխարհիկ խաւերով դիմադրեց դժուարութիւններուն եւ միայն իր ուժերուն ապաւինելով Հայ Դատը հասցուց միջազգային ընտանիքին: Պայքարը տակաւին չէ աւարտած: Հայ ժողովուրդի ծոցէն ծնած եւ 100-ամեակ մը բոլորած աշխարհատարած միութիւնը այս պայքարին մէկ մասնիկն է: Ան իր խօսքը խմբապետներուն ուղղելով ակեցուցուց, որ իւրաքանչիւր տարուան Ապրիլ 23-ի երեկոյեան Հ.Մ.Ը.Մ.ական ըսկստականներ կը վերանորոգեն իրենց խոս-



տումը՝ շարունակելու այս պայքարը, յիշելու, յիշեցնելու եւ պահանջելու հայ ժողովուրդի իրաւունքները, մինչեւ որ հասնինք հայ ազգի ամբողջական իրաւունքներուն վերատիրացման:

Տէրունական աղօթքի եւ «Կիլիկիա» օրհներգի երգեցողութենէն ետք, սկստականները վառեցին մոմերը եւ գաննք գետինը գետեղելով կազմեցին «ՀՄԸՄ Լիբանան 104» գրութիւնը:

Հսկումի աւարտին, սկստականները «Յառաջ նահատակ» քայլերգով ուխտեցին վառ պահել Հայոց Ցեղասպանութեան սուրբ նահատակներուն յիշատակը:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ԾԻՒՆԻԻ ԱԿՈՒՄԲԻ «ՐԱՓՖԻ ԵՍԱՅԵԱՆ» ԺՈՂՈՎԱՍՐԱՀԻ ԲԱՅՈՒՄ

Թղթակից  
ՃԻՒՆԻ

**Շ**աբաթ, 26 Յունուար 2019-ի երեկոյեան ժամը 8.30-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Ճիւնիի ակումբին մէջ տեղի ունեցաւ «Րաֆֆի Եսայեան» ժողովասրահի բացում՝ ներկայութեամբ Խաչիկ Ա. Քհնյ. Մխիթրեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Հայկ Թապազեանի, եղբ. Րաֆֆի Եսայեանի եւ մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Ներսէս Ճուպանեանի:

Քահանայ հօր աղօթքէն ետք, պաշտօնական հիւրերը կտրեցին դրան մուտքի ժապաւէնը՝ բացումը կատարելով «Րաֆֆի Եսայեան» ժողովասենեակին:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենադպիր եղբ. Րաֆֆի Կէօփօղլանեան այս առիթով իր արտասա-



Studio Alex

նած խօսքին մէջ գնահատեց եղբ. Րաֆֆի Եսայեանի տարիներու վաստակը՝ Հ.Մ.Ը.Մ.ի Ճիւնիի մասնաճիւղին եւ դրուատեց այս գծով մասնաճիւղի վարչութեան առած քայլը:

Այս առիթով գնահատական դրուած թիւներ արձանագրուեցան մասնաճիւղին ոսկեմատենին մէջ:

Ապա, ներկաները հրաւիրուեցան ակումբի «Ժան Ապաճեան» սրահը, ուր տեղի ունեցաւ պաշտօնական ընթրիք՝ ի պատիւ եղբ. Րաֆֆի Եսայեանի: Օրւան յայտագիրին բացումը կատարեց եղբ. Գէորգ Գազանճեան: Ան ներկաները հրաւիրեց յոտնկայս ունկնդրելու Լիբանանի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայքերգները:

Եղբ. Գազանճեան ողջունեց շրջանի հոգեւոր հովիւ Խաչիկ Ա. Քհնյ. Մխիթրեանը, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանը, եւ ատենադպիր եղբ. Րաֆֆի Կէօփօղլանեանը, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը, Հ.Յ.Դ. «Հրայր Մարուխեան» կոմիտէն, Ճիւնիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ թաղականութիւնը, ԼՕԽ-ի «Սեւան» մասնաճիւղը, Կեդրոնական եւ Շրջանային Վարչութիւններու վաստակաւոր նախկին անդամները եւ բոլորին շնորհակալութիւն յայտնեց իրենց ներկայութեան համար: Եղբ. Գազանճեան իր խօսքին մէջ ըսաւ, որ այսօր Հ.Մ.Ը.Մ.ի Ճիւնիի մասնաճիւղը կ'ապրի անսահման ուրա-







խուժեան եւ աննկարագրելի հպարտութեան զոյգ զգացումներ: Ան անդրադարձաւ եղբ. Եսայեանի կենսագրական գիծերուն՝ յատկապէս լուսարձակի տակ առնելով ակումբին հիմնադրութենէն՝ 1950-ական թուականներէն մինչեւ օրս եղբոր կատարած միութեանական յայնածիր աշխատանքը, որուն շնորհիւ 1994-ին ան արժանացած է միութեան «Ծառայութեան» շքանշանին: Եղբայրը 2001-էն մինչեւ օրս կը գործէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան թանգարանի յանձնախումբին մէջ:

Այնուհետեւ տեղի ունեցաւ նկարնե-

րու ցուցադրութիւն. օրուան հանդիսավար եղբ. Գէորգ Գազանճեան ներկայացուց նկարներու վայրը, թուականը եւ մանրամասնութիւնները:

Յաջորդեց ընթրիքը, որ անցաւ ջերմ մթնոլորտի մէջ՝ ներկաներու կողմէ սրտի խօսքերու փոխանցումով: Սրտի խօսքեր արտասանեցին Խաչիկ Ա. Քհնյ. Մխիրեան, եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան, Բաֆֆի Կէօօղլանեան, Հայկ Թապազեան, Բաֆֆի Եսայեան, Բաֆֆի Ատուրեան, Պետիկ Սապունճեան, Ներսէս Ճուպանեան, Գէորգ Գազանճեան եւ Մանօ Գազանճեան: Ըն-

թերցուեցան նաեւ արտասահմանէն հասած սրտի խօսքեր՝ քոյրեր Թային Աբանեանէն, Նանօր Ճուպանեան-Գազանճեանէն եւ եղբ. Վարուժ Եսայեանէն:

Ընթրիքի աւարտին բեմ հրաւիրուեցան շրջանի հոգեւոր հովիւ Խաչիկ Ա. Քհնյ. Մխիրեանը, եղբ. Գառնիկ Մկրտիչեանը, քոյր Սիրվա Սաղրեանը, եղբ. Բաֆֆի Եսայեանը, քոյր Նորա Ապաճեանը, եղբ. Բաֆֆի Ատուրեանը եւ եղբ. Ներսէս Ճուպանեանը, որոնք հատեցին Հ.Մ.Ը.Մ.ի վահանով զարդարած կարկանդակը:







# ՍԵՎԱՄ-Ի 2018-2019 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Թղթակից  
ՀԱԼԵՊ

**Մ**եծ խանդավառությամբ եւ մարզական բարձր ոգիով, Շաբաթ, 18 Մայիս 2019-ի յետմիջօրէի ժամը 5.30-ին, Մխիթարեան վարժարանի շրջափակին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.-Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ՍԵՎԱՄ-ի մարզական յանձնախումբին 2018-2019 տարեշրջանի միջվարժարանային մրցաշարքերուն փակման հանդիսութիւնը: Այս տարուան մրցաշարքերը ընդգրկեցին փինկ-փոնկի, ճատրակի, պասքէթի խմբային եւ անհատական ձիրքերու, «շուժինկ»ի, ֆուլթպոյլի, քոնկ ֆուլի եւ քարաթէի մարզաձեւերը:

Փակման հանդիսութիւնը սկսաւ Սուրիոյ եւ Հայաստանի քայերզներով կատարողութեամբ Հ.Մ.-Ը.Մ-ի շեփորախումբին:

Օրուան հանդիսավարներն էին քոյրեր Անի Մինասեան եւ Սեւան Ազարիկեան-Պարմաքսրգեան: Անոնք ամփոփ կերպով ներկաներուն ներկայացուցին



տարեշրջանի մրցաշարքերը, որոնց մասնակցեցան շուրջ 400 մարզիկներ, խաղալով 500 մրցումներ: Անոնք նշեցին, որ փակման հանդիսութեամբ 475 մետալներ եւ 15 բաժակներ պիտի բաշխուին ախոյեաններուն:

Շեփորախումբին նուագակցութեամբ տողանցեցին հալէպահայ ութ վարժարաններու աշակերտներ: Ապա, բեմ հրաւիրուեցան իւրաքանչիւր մարզախաղի առաջին երեք դիրքերը գրա-

ւող ախոյեան մարզիկները եւ անհատական թէ խմբային մրցումներու համար ստացան համապատասխան մետալներ:

Բեմ հրաւիրուեցան նաեւ հալէպահայ վարժարաններու տնօրէնները՝ փոխանցելու իրենց սրտին խօսքը: Ութ վարժարաններու տնօրէնները, ներշնչուած ամբողջ տարուան մը ընթացքին տեղի ունեցած մրցաշարքերէն, իրենց խօսքերուն մէջ մեծապէս գնահատեցին ՍԵՎԱՄ-ի տարած աշխատանքը եւ իրենց ուրախութիւնը յայտնեցին աշակերտութեան մօտ ստեղծուած մարզական խանդավառութեան համար:

Գեղարուեստական յայտագիրով Ազգ. Քարէն Շփիէ ձեմարանէն աշակերտներ ձկուն շարժումներով ներկայացուցին բուրգի ձեւեր: Ապա, Լ. Նաճարեան Գ. Կիւլպէնկեան Կեդրոնական Վարժարանի խումբ մը աշակերտներ հանդէս եկան պասքէթի ցուցադրական ներկայացումով:

Հ.Մ.-Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ՍԵՎԱՄ-ի մարզական յանձնախումբին խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Նղիա Քիլէճեան յայտնելով, թէ ՍԵՎԱՄ-ի մրցաշարքերը եկան համախմբելու հալէպահայ վար-







ժարաններու աշակերտները եւ անոնց մէջ սերմանելու գործակցութեան առողջ ոգի:

Հանդիսութեան ընթացքին յատուկ շնորհակալաբարներով պարգեւատրուեցան ութ վարժարաններու ներկայացուցիչները, որոնք մրցաշարքերու ամբողջ տեսողութեան ընկերակցեցան աշակերտներուն, ինչպէս նաեւ՝ մրցաշարքերուն սիրաթօթար կերպով իրենց աջակցութիւնը ցուցաբերած անհատները: Պարգեւատրուեցան նաեւ Յարութ Զգուշեան եւ Ժան Պապլանեան՝ իրենց ցուցաբերած նիւթաբարոյական աջակցութեան համար:

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեան եւ Շրջանային Վարչութեան ՍԵՎԱՄ-ի մարզական յանձնա-

խումբի ներկայացուցիչ եղբ. Վիգէն Սեմէրճեան բաժակներով պարգեւատրեցին իւրաքանչիւր մարզաձեւի մրցումին առաջին երեք դիրքերուն արժանացած խումբերն ու լաւագոյն մարզիկները: Յանձնախումբին այս տարուան անակնկալն էր «Ե՛լ լաւ, ե՛լ տիպար» տիտղոսը, որ աշակերտներուն մէջ բարոյական արժէքները քաջալերելու կարեւոր քայլ մըն էր եւ որուն արժանացան 12 աշակերտներ՝ ստանալով յատուկ մետալներ:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեան յայտնելով, թէ Հ.Մ.Ը.Մ.ը մարմնակրթական իր առաքելութեան վրայ հիմնուելով պիտի շարունակէ իր ներդրումը բերել գաղութի գաւակնե-

րուն մարզական ոգին զարգացնելու եւ անոնց նկարագիրը կերտելու աշխատանքին:

Իր սրտի խօսքին մէջ վերապատուելի Յարութին Սեյիմեան շնորհաւորեց ախոյեան աշակերտները եւ իր ուրախութիւնը յայտնեց կազմակերպուած մրցաշարքերուն համար, որոնք համախմբեցին բոլոր հայ աշակերտները:

Հանդիսութեան աւարտին, Գառնիկ Քհնյ. Չափանեան Առաջնորդ Սրբազան Հօր բարեմաղթութիւնները փոխանցեց եւ մեծապէս գնահատեց ՍԵՎԱՄ-ի մարզական յանձնախումբը, հալէպահայ աշակերտներուն մէջ մարզականի կողքին բարոյական արժէքներ սերմանելու մնայուն ճիգին համար:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Պահպանիչ»ով:





# ԱՊԱԳԱՅ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՍԵՄԻՆԱՐ

## Թղթակից ՀԱՆՏՊ

**Հ**.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Սկաուտ-Խորհուրդի եւ խմբապետութեան կազմակերպութեամբ, 15-16 Մարտ 2019-ին, Հալէպի «Արամ Մանուկեան» Ժողովրդային Տան մէջ տեղի ունեցաւ ապագայ ղեկավարներու պատրաստութեան սեմինար մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին Լաթաքիոյ մասնաճիւղէն քոյրեր Հուրիկ Մովսէսեան, Ազնիւ Պետրոսեան, Ռեբեքա Ղըշրանեան, Քրիստին Գարրիէլեան եւ եղբ. Յովիկ Մովսէսեան:

Երկօրեայ սեմինարին բացումը կատարուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով: Շրջանային Խմբապետ եղբ. Եղիա Քիլէճեան բարի գալուստ մաղթեց մասնակիցներուն, ապա իւրաքանչիւր անդամ ներկայացուց ինքզինք:

Սեմինարին առաջին օրուան յայտագիրը ընդգրկեց դասախօսութիւն, խաղ եւ հիւրասիրութիւն: Ներկայացուեցան հետեւեալ նիւթերը.-

- «Ղեկավարի մը յատկութիւնները»- դասախօս՝ Շրջանային Խմբապետ եղբ. Եղիա Քիլէճեան:

- «Սկաուտական գիտելիքներ»- դասախօս՝ Շրջանային Խմբապետուհի քոյր Ծովիկ Թէփիրճեան:

- «Արխիւային գիտելիքներ՝ ատենագրութիւն, տեղեկագիր, նամակ պատրաստել»- Դասախօս՝ Շրջանային Սկաուտ-Խորհուրդի ատենադպրուհի քոյր Ալին Քիւրիմլեան:

- «Արխիւայինի հաշուական գիտելիքներ»- դասախօս՝ քոյր Լիզա Լալեան: Այս նիւթին հետ մասնակիցները կատարեցին արխիւային բաժնի գործնական կիրակում:



- «Ծրագիր-Կանոնագիր»- դասախօս՝ եղբ. Աւետիս Տէրվիշեան:

Սեմինարի առաջին օրուան աշխատանքներու աւարտին, մասնակիցները մտերմիկ մթնոլորտի մէջ ընթացին Շրջանային Սկաուտ-Խորհուրդի անդամներու հետ: Զրոյցին յաջորդեց զրոյց մը՝ «Ղեկավարի մը նոր մարտահրաւէրները» նիւթով:

Երկրորդ օրը, սեմինարին աշխատանքները կատարուեցան Ազգային Զաւարեան մանկապարտէզի շրջափակին մէջ եւ ընդգրկեցին մարզանք, դասախօսութիւն, այցելութիւն, սրտի խօսք եւ հիւրասիրութիւն:

Ներկայացուեցան հետեւեալ նիւթերը.-

- «Սկաուտական մարզանք»- դասախօս՝ քոյր Ժպիտ Խաչերեան:





- «Սկստուական արարողութիւններ»- դասախօս Շրջանային խմբապետ՝ եղբ. Եղիա Քիլէճեան:

- «Ի՞նչպէս ծրագրել եւ յայտագիր պատրաստել»- դասախօս՝ Շրջանային խմբապետուհի քոյր Շովիկ Թէփիրճեան:

- «Ղեկավարն ու իր յարաբերութիւնները»- գրուցավար՝ Ալիս Մելքոնեան:

Դասախօսութիւններու դադարին, սեմինարի մասնակիցները այցելեցին Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, մոմավառութիւն կատարեցին, աղօթեցին, ապա Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարան եւ ՍԵՎԱՄ-ի մարզախաղեր այցելեցին:

Սեմինարի վերջին բաժինով, մասնակիցներուն ինքնավստահութիւնը զարգացնելու համար, իւրաքանչիւր մասնակիցի առիթ տրուեցաւ նախապէս ստացած նիւթ մը 10 վայրկեանով ներկայացնելու եւ սրտի խօսք փոխանցելու սեմինարի մասին: Աւարտին, մասնակիցները Սուրբոյ Շրջանային Սկսուտ. Խորհուրդէն ստա-



ցան իրենց հաստատագիրները եւ նիւթերու թղթածրարները: Սեմինարը փակուեցաւ «Ով հայ արի» քայլերգով:

# «ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻ ՕՐ»ՈՒՄՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՄՆ ՔԵՍԱՊԻ ՄԷՋ



## Թղթակից ՔԵՍԱՊ

Նովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Քեսապի մասնաճիւղի վարչութեան, կազմակերպութեամբ մասնաճիւղի Սկսուտ. Խորհուրդին եւ խմբապետական կազմին, 24 Փետրուար 2019-ին, հայաւանի «Սարդարապատ» սրահին մէջ տեղի ունեցաւ «Հայ սկսուտի օր»ուան տօնակատարութիւն:

Բացման խօսքը ընթերցեց արի-արեւոյշ միաւորի պատասխանատու քոյր Դալար Լընդեան: Ան ներկաները հրաւիրեց վայրկեան մը յոտնկայս լուծութեամբ

յարգելու մեզմէ յաւէտ բաժնուած Հ.Մ.Ը.Մ.ականներուն յիշատակը, ապա ան նշեց, թէ հայ ժողովուրդի պատմութեան մէջ Փետրուարը ազգային տօներու, աւանդութիւններու, հերոսական սիրանքներու եւ քաջագործութիւններու ամիսն է: Սկսուտներն ալ վարդանանց սերունդի ազատատենչ ոգիէն ներշնչուած՝ վարդանանցին կը նշեն «Հայ սկսուտի օր», որ իւրաքայտուկ եւ մասնակի տեղ կը գրաւէ հայ սկսուտի կեանքին մէջ:

Քոյրը իր խօսքին աւարտին շնորհաւորեց բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներու «Հայ սկսուտի օր»ը եւ մասնաճիւղին հիմնադրութեան 25-ամեակը, մաղթելով

աննահանջ երթ եւ նորանոր յաջողութիւններ:

Գեղարուեստական յայտագիրը սկիզբ առաւ խմբային պատկերով մը, ապա յաջորդեցին տեսերիզի ցուցադրութիւն (մասնաճիւղին 25-ամեայ գործունէութիւնը), գաւազանի մարզանք, չափական մարզանք եւ թմայլիկ: Յայտագիրին մաս կազմեց նորագիրներու խոստման արարողութիւն, փողկապի տուչութիւն եւ վկայականաց բաշխում:

Տօնակատարութիւնը վերջ գտաւ Նարեկ Քհնյ. Չերենցեանի սրտի խօսքով, «Պահպանիչ»ով եւ ներկաներու կողմէ «Յառաջ նահատակ» քայլերգի երգեցողութեամբ:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀՐԶԱՆԻ ՄԱՅԻՍԵԱՆ ԵՐՐՈՐԴ ԽԱՂԵՐԸ

## Թղթակից ԱՌԵՆՔ

**Հ**ՄԸՄ-ի Յունաստանի Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ, Շաբաթ, 18 Մայիս 2019-ի երեկոյեան, Քալիթէայի «Ղր. Լապրաքիս» մարզադաշտին մէջ տեղի ունեցան Մայիսեան երրորդ խաղերը, որոնք ընդգրկեցին թեթեւ ատլետիկայի մարզական մրցումներ՝ նախակրթարանի եւ միջնակարգի աշակերտութեան համար:

Խաղերը նուիրուեցան հայ ժողովուրդի Մայիսեան յաղթանակներուն՝ 1918-ի Հայաստանի Հանրապետութեան փառապանծ անկախութեան եւ Շուշիի ազատագրութեան զոյգ թուականներուն:

Աւելի քան հարիւր աշակերտներ՝ Հ.Կ.Խաչի Զաւարեան, Լ. եւ Ս. Յակոբեան եւ ձէնազեան ազգային վարժարաններէն, Հ.Մ.Ը.Մ-ի կողմէն ընդառաջելով, մասնակցեցան մրցումներուն եւ



ի յայտ բերին անհատական եւ խմբային մարզական կարողութիւններ՝ գանգաւան մարզաձեւերու մէջ:

### ԲԱՅՈՒՄԸ

Մայիսեան խաղերուն բացումը կա-

տարուեցաւ մարզիկներու տպաւորիչ տողանցքով, առաջնորդութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Աթէնքի եւ Գոքինիոյ սկաուտական մասնաճիւղերու թմբկահարներուն:

Ապա, Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի Շրջա-







նային Վարչութեան կողմէ բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ քոյր Արշա Մամուլեան: Ան ըսաւ, որ «Այս մրցումներուն նպատակն է մասնակցութիւնը, ձգտումը դէպի լաւագոյնը եւ մարմնամարզի ընձեռած ուրախութիւնը:

«Հ.Մ.Ը.Մ-ը միութիւն մըն է, որուն հիմքը կը կազմէ երիտասարդութիւնը: Անցեալ շաբաթավերջին, բոլորս վկայ եղանք ստեղծուած այն մթնոլորտին, որուն մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի երիտասարդական Ա. համագումարը, մասնակցութեամբ աշխարհի չորս կողմերէ, միութեան 17 շրջաններէն Յունաստանի փամանած մեծ թիւով երիտասարդներու: «Երիտասարդներ, որոնք կ'ապրին իրենց երկիրներու ընկերային

մթնոլորտի ազդեցութեան տակ, համախմբուեցան եւ ազգային ամուր գիտակցութեամբ քննարկեցին իրենց դիմագրաւած դժուարութիւնները եւ ներկայացուցին իրենց տեսլականները՝ Հ.Մ.Ը.Մ-ի երկրորդ հարիւրամեակի սեմին:

«Հ.Մ.Ը.Մ-ի յաղթական երթը գուգահեռ կ'ընթանայ հայ ժողովուրդի յաղթական երթին հետ՝ 1918-ի անկախութենէն մինչեւ Շուշիի ազատագրումը, որովհետեւ անիկա երթն է մեր ազատատենչ եւ հայրենասէր երիտասարդութեան»:

**ԽԱՂԵՐԸ**  
Խաղերու յայտագիրը ընդգրկեց 60

մեթր վազքի, 4x100 մ. դրօշարշաւի, գունտ նետելու, հեռացատկի եւ բարձրացատկի մարզաձեւերը: Մասնակցող աշակերտները կարգով կատարեցին բոլոր ձեւերը, իսկ ներկայ ժողովուրդը իր խանդավառութեամբ եւ ծափողջոյններով խրախուսեց մասնակցողները:

Աւարտին, բոլոր մասնակցողները Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան կողմէ ստացան խորհրդանշական շքանշաններ եւ յուշանուէրներ:

Մրցումներու տեւողութեան, սկառուտական ծնողական խորհուրդներու անդամները, վարժարաններու ուսուցիչները եւ մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ-ական կամաւորներ հսկեցին մարզաձեւերու յայտագիրին գործադրութեան: Նաեւ՝ ներկայ եղան Յունաստանի Կարմիր Խաչի հիւանդապահներ, անհրաժեշտ բժշկական խնամք տալու համար, եթէ հարկ զգացուէր:

Մայիսեան խաղերը ոգեւորութիւն եւ հպարտութիւն առթեցին նախ մեր աշակերտութեան, ապա նաեւ՝ ներկայ ժողովուրդին, որոնք խանդավառութեամբ կ'ակնկալեն նման տպաւորիչ ելույթներու կազմակերպումը ամէն տարի:







ՊՈՒՆԵՆՈՍ ԱՅՐԷՍԻ ԳԻՐՔԻ 45-ՐԴ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ՝

«ՆԵՄԵՍԻՍ» ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԺԵՌԱՐ ՀԱՎԵԱՆԻ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԳԻՐՔԻՆ ՍՊԱՆԵՐԷՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Թղթակից  
ՊՈՒՆԵՆՈՍ ԱՅՐԷՍ

**Շ**աբաթ, 27 Ապրիլ 2019-ին, Պուենոս Այրեսի գիրքի 45-րդ ցուցահանդեսի նախաձեռնություններու ծիրին մէջ տեղի ունեցաւ Ժազս Տերոթիի «Նեմեսիս գործողութիւն. հայ վրիժառուները» գիրքին ըսպաներէն հրատարակութեան ներկայացումը: Գիրքը լոյս տեսած է Ֆրանսերէն եւ սպաներէնի թարգմանուած է Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Աբրահամ Ահարոնեանի կողմէ:

Ներկայացումը սկիզբ առաւ հանդիսավար Էտկարտո Գէորգեանի հետեւեալ խօսքերով. «Ամէն տարի Ապրիլ 24-ին, աշխարհասփիւռ հայերը կը յիշեն թուրք պետութեան կողմէ 1915-1923 տարիներուն իրագործուած Յեղասպանութեան մէկ ու կէս միլիոն նահատակները: Այդ օր ամբողջ աշխարհը գանազան միջոցներով կ'իմանայ հայ ժողովուրդի պատմութիւնը եւ լուռ քայլարշաւները կը հնչեն թուրք ներկայ իշխանութիւններու ականջներուն մէջ: Իւրաքանչիւր Ապրիլ 24-ի ուրիշ ձայներ եւս կը միանան արդարութեան պահանջին: Այդ ձայներն են թերթերու յօդուածները, թատերգութիւնները, ֆիլմերը եւ տեսանիւթերը, որոնք կը պատմեն այն պատմութիւնը, զոր կը ջանայ ժխտել թուրքիան»:

Շարունակելով, Գէորգեան նկատել տուաւ, որ գիրքի մը հրատարակու-



թիւնը մաս կը կազմէ թուրքիան դատապարտող աշխատանքներուն: Այդ պատճառով ալ, Պուենոս Այրեսի գիրքի 45-րդ ցուցահանդեսի նախաձեռնություններու ծիրին մէջ, շնորհիւ Ժան եւ Գարմէն Աբգարեան Հիմնարկի հովանաւորութեան, ներկայութեամբ հանրածանօթ դէմքերու, կը ներկայացնենք Ժազս Տերոթիի «Նեմեսիս գործողութիւն. հայ վրիժառուները» գործը՝ սպաներէնի թարգմանուած Աբրահամ Ահարոնեանի կողմէ:

Այս առիթով խօսքեր արտասանեցին Խաչիկ Տէր Ղուկասեան, Գարլոս Տէրտէրեան եւ Աբրահամ Ահարոնեան:

Խաչիկ Տէր Ղուկասեանը, որ գրած է Ժազս Տերոթիի գործին սպաներէն թարգմանութեան նախաբանը, խօսեցաւ գործին արժէքին եւ կարեւորութեան մասին:


Գարլոս Տէրտէրեան անդրադարձաւ եղբ. Աբրահամ Ահարոնեանի թարգմանութեան, ընդգծելով թարգմանիչին պարզ ու հասկնալի լեզուն, որ Ֆրանսացի գրողին պատմական այս գործը

մատչելի կը դարձնէ բոլորին: Ապա, եղբ. Աբրահամ Ահարոնեան իր խօսքը ներկաներուն ուղղելով ըսաւ, որ «Նեմեսիս գործողութիւն. հայ վրիժառուները» Ժազս Տերոթիի սքանչելի գիրքին խորագիրն է: Ժեռար Շալեան այս գիրքին Ֆրանսերէն հրատարակութեան յառաջաբանին մէջ գրած է. «Պատմութեան մէջ «Նեմեսիս»ը հաւանաբար 20-րդ դարու ամէնէն արտակարգ մարդկային որսն է: Նաեւ նուազ ճանչցուածը, որովհետեւ

զայն կազմակերպողները յամառ լուծութիւն պահեցին ցմահ: Արտակարգ որսերեք ցամաքամասի մէջ: Որոշուած անկախ Հայաստանի մայրաքաղաք Երեւանի եւ դաշնակիր ուժերու կողմէ գրաւուած Պոլսոյ մէջ, կազմակերպուած Պոսթընէն մինչեւ ժընեւ, իրագործուած Պերլինի, Հոռոմի, Թիֆլիսի եւ նոյնիսկ կեդրոնական Ասիոյ մէջ: Ան կը ձգտէր որսալ թրքական ռազմական դատարանի մը կողմէ մահուան դատապարտուած քաղաքական ամենաբարձր պատասխանատուները՝ Թալէաթը, Էնվերն ու ձեմալը, Երիտթուրքերու երրորդութիւնը եւ ուրիշներ, որոնք այս պատմութեան մէջ յիշուած են իբրեւ յանցաւորներ «մարդկութեան դէմ գործուած ոճիրներու»:

Ահարոնեան իվ թեւոնոնի խօսքերը մէջբերելով հաստատեց, որ «Նեմեսիս գործողութեան մէջ արդարահատուցման խումբը կը գործէ կուսակցութեանն անջատ, պատասխանատուի մը հսկողութեան տակ: Անոնք տասներկու անդամներէ աւելի չեն ըլլար եւ կը գոր-





Զախին՝ Գարլոս Տերտերեան, եղբ. Աբրահամ Ահարոնեան եւ Խաչիկ Տեր Ղուկասեան: Աջին՝ Ժան եւ Գարմէն Աբգարեաններ (Աբգարեան Դիմնադրամի ներկայացուցիչներ) եղբ. Աբրահամ Ահարոնեանի հետ:

Ժեն միայն երկար պատրաստութենէ ետք: Զոհին տեղորոշման եւ ճանաչման հանգրուանէն ետք, կը կատարուի անոր ճանապարհին, պտոյտի տեղերուն եւ հանդիպումներուն դիտարկումը: Անկէ ետք, առաջին առիթով, կ'անցնին գործողութեան: Այս ճանաչումը նաեւ կ'ընդգրկէ անոր վարմունքին ճանաչումը: 1920-ական թուականներուն հայ արդարադատը իր ծրագիրը կը նկատէ վսեմ: Ան կ'ատէ մահը, սակայն կը գոհէ իր կեանքը: Անոր արարքը կենսական կարիք մըն է, անշրջելի ճակատագիր մը, արդէն կարգաւորուած: Երբ կուսակցութիւնը որոշումը կու տայ, արդէն գոհը մեռած կը նկատուի, ահաբեկիչը կը նոյնանայ իր գէնքի գնդակին հետ»:

Այս գիրքին խորագիրը եւ ժեռար Շալեանի յառաջաբանն ու ժագս Տերոթիի նախաբանը այն տպաւորութիւնը կու տան, որ կը գտնուինք գիրքի մը առջեւ, որ միայն պիտի պատմէ կարգ մը ոճիրներ կամ արդարութեան արարքներ՝ քաղաքական ու ռազմական որոշ իրականութեանց ծիրին մէջ: Սակայն, այդպէս չէ, որովհետեւ ժագս Տերոթիի գիրքը կը նկատուի հրաշալի վկայութիւն մըն է հայ ազգի ընկերային, տնտեսական, քաղաքական եւ ռազմական պատմութեան մասին, աւելցուց եղբ. Ահարոնեան:

Այս հրատարակութեամբ չենք ձգտիր արդարացնել ահաբեկչական արարքները իբրեւ արդարութիւն ձեռք

բերելու միջոց: Սակայն, կը ձգտինք հաստատել, որ «դահիճներու եւ գոհերու դերերը չըրջուին», ինչպէս կ'արտայայտուի Տերոթի իր նախաբանին մէջ: Այո, կ'ուզենք որ Թուրքիան հաշիւ տայ հայ ժողովուրդին՝ մարդկութեան դէմ գործած իր ոճիրներուն համար եւ ճանչնայ Հայոց Յեղասպանութիւնը»:

Աբրահամ Ահարոնեան իր խօսքը փակեց շնորհակալութիւն յայտնելով Խաչիկ Տէր Ղուկասեանին եւ Գարլոս Տէրտերեանին, ժագս Տերոթիի գործին սպանելէն հրատարակութեան ներկայացման իրենց մասնակցութեան համար: Ան դրուատեց նաեւ Գորտոպա

քաղաքի հայկական համայնքի գործունեւորներէն տղթ. Մարթին Սիմոնեանը, որ երկու տարի առաջ իրեն առաջարկեց ժագս Տերոթիի գործին թարգմանութիւնը:

Տեղին է նշել, որ ձեռնարկին իւրաքանչիւր խօսք առնողէ ետք, Սոֆիա Ռաուր գիրքին զանազան գլուխներէն ընթերցեց հատուածներ:

Ներկայացման փակումը կատարեց էտկարտո Գէորգեան՝ շնորհակալութիւն յայտնելով խօսք առնողներուն եւ ժան եւ Գարմէն Աբգարեան Հիմնարկին, որուն հովանաւորութեան շնորհիւ կարելի եղաւ գիրքը բաշխել ձրիաբար:

**ՅՈՒՆԱՍՏԱՆ**

**ԵՂԲ. ՊԵՏՐՈՍ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ՅՈՒՆԱԿԱՆ ՍԿԱՌՏԱԿԱՆ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԱՆԴԱՄ**

Հ.Մ.Բ.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութիւնը ուրախութեամբ կը տեղեկացնէ, թէ պատմութեան մէջ երկրորդ անգամ ըլլալով հայ մը անդամ ընկրուած է Յունական Սկստութեան Ֆետերասիոնի ընդհանուր ժողովին: Ընկրուած է Հ.Մ.Բ.Մ.ի Յունաստանի խմբակցական կազմի անդամ եւ Յունական Ֆետերասիոնի մօտ ներկայացուցիչ, ինչպէս նաեւ նախորդ երկամեակի Շրջանային Խմբակցութեան եղբ. Պետրոս Սիքայէլեան:

Վարչութիւնն կը շնորհատրէ եղբայրը՝ յաջողութիւն մատչելով իր աշխատանքներուն:

Հ.Մ.Բ.Մ.ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



# ԵՂԲ. ՀՐԱՉ ՏԷՐ ՄԱՐԳԻՍԵԱՆԻ ՄԵԾ ԿՈՐՈՒՄՏԸ

Վարդգես Քրիստիան  
(Հատուածներ՝ դամբանական խօսք)  
ՄՆՆԹԵԱԼ

**Դ**ժուար է հաշտուիլ հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներու կորուստին հետ:

Դժուար է ընդունիլ անոնց անժամանակ բացակայութիւնը, երբ անոնք տակաւին շատ բան ունին տալիք իրենց միութեան եւ ժողովուրդին:

Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի ընտանիքը նման դժուար կացութեան մը դէմ յանդիման գտաւ ինքզինք, երբ անակնկալօրէն կորսնցուց միութեան վաստակաշատ անդամներէն, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Հրաչ Տէր Սարգիսեանը, որ անողոք հիւանդութեան դէմ կարճատեւ պայքարէ մը ետք, աչքերը յաւիտեան փակեց 29 Դեկտեմբեր 2018-ին:

Եղբ. Հրաչ ծնած է 10 Սեպտեմբեր 1941-ին, Գահիրէ: Սեւերկցի հայրը՝ Յարութիւնը, հագիւ վեց տարեկան երեխայ, անհամար դիակներու մէջէն գաղտնաբար սողոսկելով մագապուրծ փրկուած է 1915-ի Յեղասպանութենէն: Օտար միսիոնարներու եւ օգնութեան փութացող միջազգային կազմակերպութիւններու խնամքին արժանանալէ ետք, ան վերջապէս ապաստան գտած է Եգիպտոս: Եղբ. Հրաչին մայրը՝ Սիրանը ծնած է Զակագիկ, Եգիպտոս:

Եղբ. Հրաչ անդրանիկ գաւակն էր Յարութիւն եւ Սիրան Տէր Սարգիսեաններուն: Իրմէ ետք կը ծնին քոյրը՝ Անին եւ

կրտսեր եղբայրը՝ Բաֆֆին: Դեռ մանուկ, ընտանիքին հետ կը հաստատուի Աղեքսանդրիա, ուր նախնական կրթութիւնը կը ստանայ Մխիթարեան եւ Ազգային Պողոսեան Վարժարանները, երկրորդական ուսումը աւարտելով 1956-ին:

Փոքր տարիքէն ան կ'անդամակցի Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ին, իրբեւ գայլիկ, պասքեթպոլիստ եւ ատլէթ:

Սկստական եւ մարզական իր հետաքրքրու-



թիւններուն կողքին, եղբ. Հրաչ կը ցուցաբերէ մշակութային ունակութիւններ: 11 տարեկանին ան հանդէս կու գայ «Մարտիկի երգ»ով: Այնուհետեւ, ան յաճախ ելոյթներ կ'ունենայ գեղարուեստական յայտագիրներու մէջ: Մաս կը կազմէ նաեւ երգչախումբերու: Կ'ըլլայ սիրուած ու փնտուլած երգիչ: Աղեքսանդրիոյ եւ Լիզպոնի մէջ կը հետեւի ձայնամարզութեան դասընթացներու: Կը հրապարակէ ձայնասկաններ, ձայներիգներ եւ Սի.Տի.ներ:

Աղեքսանդրիոյ մէջ, դպրոցական շրջանին, իբրեւ յառաջադէմ եւ ուշիմ աշակերտ, իրեն կը շնորհուի «Գալուստ Կիւլպէնկեան Հիմնադրամ»ի կրթաթոշակը: 1960-ին, ան արուեստից Պաքայրէայի վկայականով կը վկայուի Օքսֆորտ եւ Քէմպրիձ Համալսարաններէն:

1960-1964 կը յաճախէ Փորթուգալի Լիզպոն մայրաքաղաքի մարմնակրթական մեծագոյն հիմնարկը, զոր կ'աւարտէ բացառիկ յաջողութեամբ:

1973-ին, եղբ. Հրաչ կը պսակուի Փիլէրէթ Սէն Ժանի հետ եւ կը բախտաւորուի երկու գաւակով՝ Գարէն եւ Շանթ:

1976-ին, եղբ. Հրաչ Մագիստրոսի աստիճանով կը վկայուի Մոնթրէալի Մըքիլի Համալսարանէն, յաջողութեամբ ներկայացնելով իր թեզը՝ «Մարմնակրթանքի վարք ու բարքի հոգեբանութիւնը» նիւթով:

1964-ին, Գանատա հաստատուելէն ետք, աւելի քան 40 տարիներ, իբրեւ մարմնակրթանքի ուսուցիչ, խորհրդատու եւ տնօրէն, եղբ. Հրաչ կը պաշտօնավարէ Մոնթրէալի կրթական գանազան հաստատութիւններուն մէջ: Ան կ'ըլլայ հիմնադիրը եւ առաջին ատենապետը Մեծն Մոնթրէալի օտար վարժարաններու մարմնակրթական կառոյցին:

Ան կ'ըլլայ նաեւ հիմնադիրը եւ մտալոյցողը միջ-վարժարանային քրոս քաունթրիի մրցաշարքին, որ կը նկատուի Գա-

Այս քիւիս «Մեր կորուստները» բաժինով կը ներկայացնենք վերջին ինը ամիսներուն մեզմէ հեռացած Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներու յիշատակին գրութիւններ, որոնք հասկնալի պատմաւեցողութեամբ 100-ամեակին նուիրուած «Մարգիկ»ի բացառիկ վերջին երկու քիւիս (411 եւ 412):

«ՄԱՐԶԻԿ»



նատայի տարածքին մարզական մեծագույն համախմբումը, աւելի քան 16 հազար մասնակիցներով:

Եղբ. Հրաչ կը հանդիսանայ կազմակերպիչ եւ մղիչ ուժը 1976-ին, Մոնթրէալի մէջ տեղի ունեցած միջ-դպրոցական ողիմպիական խաղերուն: Կը նշանակուի ընդհանուր պատասխանատու Քէյպէք նահանգի եւ Գանատայի շրջանային մարզախաղերուն:

1989-ին, եղբ. Հրաչ տարուան «Գերագանց տնօրէն»ի տիտղոսով կը պարգևատրուի Գոնգորտիա ֆուտբոլի շրջանային միութեան կողմէ (Association Regional de Soccer Concordia):

1964-էն մինչեւ մահը եղբ. Հրաչ գործօն անդամ կ'ըլլայ Մոնթրէալի կաթողիկէ վարժարաններու յանձնաժողովին, իբրեւ մարմնակրթանքի հմուտ մասնագէտ:

Ան հիմնադիրը կը հանդիսանայ Մոնթրէալի եւ շրջակայքի դպրոցական մարմնակրթական շարժումի շարք մը ընկերակցութիւններու:

1997-2009, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչ, եղբ. Հրաչ մաս կը կազմէ Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէին: 2009-էն ետք ան կ'անդամակցի Հայաստանի աթլետիկ միութեան ֆետերասիոնին:

Առ ի գնահատանք միութենական իր երկարամեայ ծառայութեան, 1989-ին եղբ. Հրաչ կ'արժանանայ Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանին, իսկ 2012-ին՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան «Արժանեաց» շքանշանին:

- Եղբ. Հրաչ կը գնահատուի նաեւ այլապէս․․
- 2000-ին, անոր կը շնորհուի Հայաստանի աթլետիկ միութեան «Պատուոյ անդամ»ի տիտղոս:
- 2005-ին, ան կ'արժանանայ Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի «Անանիա Շիրակացի» կրթական-մշակութային շքանշանին:
- 2007-ին, ան կ'արժանանայ Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէի պատուոյ յատուկ շքանշանին:
- 2010-ին, ան կը մեծարուի Մեծն Մոնթրէալի մարզական



ատեանին կողմէ, մարմնակրթութեան եւ մարզական գիտութեան բնագաւառներուն իր ունեցած 40 տարուան վաստակին համար եւ կը հռչակուի «Տարուան մարդը»:

- 2011-ին, ան կը տիրանայ Քէյպէք նահանգի եւ Մեծն Մոնթրէալի «Տարուան վարչականը» տիտղոսին:

- Դեկտեմբեր 2011-ին, առ ի գնահատանք Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէին իր մատուցած ծառայութիւններուն, Հայաստանի իշխանութիւններուն կողմէ ան կ'արժանանայ Հայաստանի քաղաքացիութեան անցագրի:

Եղբ. Հրաչ երկար տարիներ կը մարզէ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի աղջկանց եւ տղոց պասքեթբոլի եւ աթլետիկ միութեանը: 1980-1982 եւ 1999-2000 ան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան անդամ, իսկ 1999-2007, երկու քառամեակ, ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ լայն աշխատանք կը տանի Հ.Մ.Ը.Մ.ի Քէյպէքի մասնաճիւղի վերակազմաւորման եւ վերաշխուժացման համար: Միաժամանակ, կը նպաստէ Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի շրջանին Գանատայի Ողիմպիական Կոմիտէին անդամակցութեան:

Ան իր կարեւոր աջակցութիւնը կը բերէ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Զ. եւ Է. մարզախաղերուն, 2001-ին՝ Պէյրութ եւ 2005-ին՝ Աթէնք: Պարբերաբար կ'աշխատակցի միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթին եւ միութեան կայքէջին համար կը պատրաստէ Հ.Մ.Ը.Մ.ական եւ հայկական մարզական մրցանիշներու տեւական թարմացող ցանկեր:

Մեծ կ'ըլլայ եղբ. Հրաչին ներդրումը համա-Հ.Մ.Ը.Մ.ական Գ. մարզախաղերու (Յուլիս 1993) եւ Գանատայի շրջանի 48-րդ մարզախաղերու (Սեպտեմբեր 2018) կազմակերպման մէջ:

Եղբ. Հրաչ իր բովանդակ կեանքին ընթացքին կը հանդիսանայ տիպար Հ.Մ.Ը.Մ.ական: Ան հեռու կը մնայ մանր հաշիւներէ եւ շահադիտական մօտեցումներէ: Կը ծառայէ ամենայն հաւատքով, հաւատարմութեամբ աշխատասիրութեամբ եւ վճռակամութեամբ: Իր բազմակողմանի կարողութիւններն ու ձիրքերը ան ի գործ կը դնէ՝ իրեն վստահուած ազգային-միութենական պարտականութիւնները կատարելու համար:

Ան յատուկ կարողութիւն ունէր իր խօսակիցներուն միտքերն ու տեսակէտները համբերութեամբ լսելու, ապա շինիչ պատասխաններով զանոնք լուսաբանելու եւ մարզական թէ մարմ-





նակրթական գանազան հարցերու շուրջ սպառիչ բացատրութիւններ ներկայացնելու:

Կենսուրախ, ժպիտը միշտ դէմքին, աշխատասէր խառնը-լածքով եղբ. Հրաչ անհուն սիրով եւ գուրգուրանքով լեցուն էր հանդէպ իր սիրելի մասնաճիւղին՝ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ին եւ Հ.Մ.Ը.Մ.-ի մեծ ընտանիքին:

Անկասկած, եղբ. Հրաչին յիշատակը անթառամ պիտի

մնայ զինք ճանչցողներու սիրտերուն եւ միտքերուն մէջ: Երբեք կարելի չէ մոռնայ իր գուարթ ներկայութեամբ եւ շէնչոյ գործունէութեամբ ապրուած անմոռանալի պահերը, որոնք այսօր դարձած են քաղցր յուշեր եւ յիշատակներ:

Հոգը թեթեւ գայ վրան: Թող մշտնջենական լոյսերու մէջ հանգչի իր ազնիւ ու անբիծ հոգին:

# ԵՂԲ. ԳԷՈՐԳ ՄԱՆԿԷԼԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Վրէժ-Արմէն  
ՍՈՆԹՐԷԱԼ



**Ա**մէն անգամ որ սիրելի դէմք մը, մանաւանդ հին ընկեր մը կը բաժնուի մեզմէ, կարծես իւրաքանչիւրէս մասնիկ մը կը պակսի, մեր էութեանն բան մը կը պարպուի ու քիչ մը եւս զրկուած, աղքատացած կը զգանք մենք մեզ:

Հիմա ահա Գէորգն է հեռացողը, իր հետ տանելով այնքան քաղցր ապրուած օրեր ու մեզի ձգելով անոնց յիշատակը միայն: Անպայման կը յիշենք, ինչպէս չիշենք, Գէորգին վարակիչ ժպտիլը՝ երբեմն հեղնական իր նայուածքով, բարձրաձայն ու ի սրտէ խնդալը, բորբոքած ու կրքոտ վիճիլը, առանց յուսահատելու գործ մը անվհատ հետապնդելը, այլեւ՝ Սփիւռքի ու Հայաստանի իրավիճակին, ազգային ու կուսակցական հարցերուն մտասեւեռումը, աշխատելու եռանդն ու անսպառ կորովը, միշտ ներկայ պատասխանելու յօժարակամութիւնը:

Կ'ակնկալուի, որ մենք մեր ծնողներուն, մեր երէցներուն դամբանախօսը ըլլանք, ոչ թէ մեր ընկերներուն, մանաւանդ մեզմէ աւելի երիտասարդ ընկերներուն: Բայց ահա ինձի յանձնուեցաւ այս տխուր պարտականութիւնը գրելու մէկու մը մասին, որուն հետ կեանքի երկար ճամբայ կտրած եմ պատանեկութեան օրերէս ի վեր, սկսեալ Հ.Յ.Գ. Երիտասարդաց Միութեան «Հայդուկ» խումբէն, 1950-ական թուականներու առաջին տարիներէն: Այնտեղ, «Յուսաբեր»ի Տան դալար տանիքին հայոց մեր գրադարան-ժողովասրահին մէջ, Զաւարեանի, Քրիստափորի ու Ռոստոմի՝ պատէն մեր վրայ հսկող աչքերուն ներքեւ, մեր վարիչները մեզի կը ջամբէին ազգային-յեղափոխական դաստիարակութիւն, գէթ այդ դաստիարակութեան այն մասը, որմէ դժբախտաբար զրկուած էինք մեր հայկական վարժարաններուն մէջ, պատրաստելով ապագայ զինուորեակները այս կուսակցութեան: Յետոյ պիտի դառնայինք գործակիցներ, իբրեւ նոյն այդ Երիտասարդացի վարիչ մարմինի անդամներ, երգմնակիցներ, 25 Ապրիլ 1963-ին, նոյն կոմիտէի անդամներ այստեղ՝ Մոնթրէլայի մէջ, եւ այդպէս շարունակաբար, մնալով միշտ կապի մէջ, միշտ սրտակից ու խորհրդակից, կրնամ նոյնիսկ ըսել՝ խորհրդատու:

Գէորգ՝ զաւակը Մանկէլ Մանկէլեանի եւ Շաքէ Շամլեանի, ծնած էր Աղեքսանդրիա, Եգիպտոս, 27 Սեպտեմբեր 1943-ին: Երբ ինք երկու տարեկան էր, փոխադրուած են Գահիրէ, ուր ան յաճախած է Ազգային Գալուստեան վարժարանի նախակրթարանի բաժինը, ապա աւարտած է արհեստից Instituto Saleziano DonBosco վարժարանը:

1965-ին, Գէորգ եկած-հաստատուած է Մոնթրէլ, տարի մը ետք իր ծնողքն ու կրտսեր քոյրը՝ Միւլան ալ բերելով իր քով: 1968-ին ամուսնացած է իր գաղափարակից ընկերուհիին՝ Յասմիկ Մարգարեանի հետ:

Ամբողջ 40 տարի, 1965-2005, ան պաշտօնավարած է Aviation Electronics (յետոյ

Honeywell դարձած) ընկերութեան մէջ: 2002-ին ի յայտ եկած է, որ Գէորգ վարակուած է մկանային սննդախանգարում (muscular dystrophy) կոչուած հիւանդութեանն, անողորմ ու հիւժոյց հիւանդութիւն մը, որ ի վերջոյ խլեց իր կեանքը: Ափսո՛ս, հազար ափսոս:

Կ'ենթադրեմ բոլորս ալ համաձայն ենք, որ Գէորգ Մանկէլեան յիռույի արդարացուց այս մոյոթակին վրայ ապրած իր օրերը: Մինչեւ իր հիւանդանայր, նոյնիսկ անկէ այ քիչ մը ետք, ան գրեթէ անընդմէջ ծառայեց իր պատկանած կազմակերպութեան՝ Եգիպտոսէն ետք այստեղ եւս, իբրեւ անդամ Երիտասարդականի «Լեոն Շանթ» մասնաճիւղի վարչութեան, անդամ, ապա հերթապահ Միհրան Փափազեան կոմիտէի, նոյնպէս՝ հերթապահ Սարգիս Զէյթեան կոմիտէի, անդամ Գանատայի Կեդրոնական կոմիտէի, այլեւ անդամ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ.-ի Գանատայի Շրջանային Վարչութեան: Ան մաս կազմած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան գանազան յանձնախումբերուն, ի միջի այլոց նաեւ միութեան ապագայ գործադրման ռազմավարութիւնը ծրագրաւորող յատուկ յանձնախումբին: Հ.Մ.Ը.Մ.-ը Գէորգի արեան, ծիներուն իսկ մէջ էր, քանի որ մայրը՝ Շաքէն սերած էր մեր մարզական եւ սկստական կեանքի ռազմավար ընտանիքէ մը:

Թող իր յիշատակը միշտ թարմ մնայ մեր միտքերուն մէջ, ու բախտաւոր զգանք մենք մեզ, որ ճանչցած ենք Գէորգ Մանկէլեանը եւ զինք ունեցած իբրեւ ընկեր ու հարազատ:



# ԵՂԲ. ՊԵՐՃ ԱՃԷՄԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»  
Մասնաճիւղի Վարչութիւն  
ՍՈՆԹՐԵԱԼ

**Հ.** Մ.Ը.Մ-ի Գանատայի ընտանիքը, Փետրուար 2019-ին, եղբ. Պերճ Աճէմեանի մահով հաւատաւոր միութեանական մըն այ կորսնցուց:

Եղբ. Պերճ Աճէմեան Գանատա հաստատուած է 1957-ին: Տարի մը ետք, վարչական ընկերներու քաջախիտութեամբ, քանի մը անպաշտօն հանդիպումներէ ետք, անոնք որոշած են հիմը դնել հայ սկստութեան, քաջ գիտնալով որ բազմաթիւ խոչընդոտներու դէմ յանդիման պիտի գտնուին, սակայն Հ.Մ.Ը.Մ.ականի բարձր ոգին ու կորովն եւ ծնողներուն քաջախիտութեամբ բոլոր դժուարութիւնները:

Հ.Մ.Ը.Մ-ի սկստական շարժումը Գանատայի Սկստական Կեդրոնին մօտ պաշտօնականացնելու համար, Մոնթրէլի «Կամք» մասնաճիւղի վարչութիւնը կը նշանակէ Սկստական Խորհուրդ մը, տարագները կը գնէ, սկստական գիրքեր ձեռք կը ձգէ եւ ամբողջութեամբ կը թուի այս աշխատանքը գլուխ հանելու գործին:

Այս իմաստով այ, եղբ. Պերճ Աճէմեան կը նկատուի առաջին խմբագրող Հիւսիսային Ամերիկայի հիմնադիր սկստական խումբին, որ կազմուած է 1959-ին:

Առաջին բանակումը կը կատարեն հինգ հոգիով՝ Քէմփ Անտրոսընի մէջ: Սահմանափակ կարողութեամբ եւ գոյքերով անոնք կ'ունենան իրենց առաջին փորձառութիւնը, որ ճամբան կը հարթէ յառաջիկայ բանակումներուն: Յաջորդ տարին բանակումը տեղի կ'ունենայ վրաններու տակ, Քէմփ Մորիսըն Այլընտի մէջ, աւելի կազմակերպուած, առաւելաբար կեդրոնանալով մաքրութեան, կարգապահութեան եւ գիշերային պահակութեան վրայ, զարմանք պատճառելով տեղացիներուն:

Բանակումին երթեկի համար օգտագործելով միակ փոխադրամիջոց՝ 1951-ի իր հին «Փոնիթիաք» ինքնաշարժը, անոնք կը յաջողին բանակողներն ու գոյքերը մինչեւ բանակավայր փոխադրել քանի մը անգամ երթ ու դարձով:


1960-ական թուականներու կիսուն, նորակազմ խումբին նոր ուժեր եւ աւելի փորձառու սկստական պատասխանատուներ միանալով սկստական աշխատանքներու անիւր աւելի լաւ ու աւելի արագ կը սկսի դառնալ եւ սկստական բոլոր կազմերը կը ստանան այսօրուան փայլուն տեսքը:

Երկարամեայ ծառայութեան օրերուն, եղբ. Պերճ կը դառնայ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղի վարչութեան անդամ, Սկստական Խորհուրդի ատենապետ: Ան իր մասնակցութիւնը կը բերէ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ա. ընդհանուր բանակումին, Ցունաստան, 1978 թուականին:

Եղբ. Պերճ մնայուն ներկայութիւն էր անդամական ընդհանուր ժողովներուն եւ լուսկեաց իր գործը կը կատարէր ամենայն խոնարհութեամբ:

Իր գործակից եղբայրները կը վկայեն, որ ան եղած է պարտաճանաչ ու կազմակերպուած գոյքապահ եւ ոչինչէն պիտանի գոյքեր մէջտեղ բերելու յատկութեամբ օտուած անձնաւորութիւն մը:

Անկարելի է մոռնալ անոր տարած շնորհակալ աշխատանքը մասնաճիւղի օրացոյցներու պատրաստութեան մէջ: Իր ունեցած ծով համբերութենէն եւ գի-



տակցութենէն մեկնած, ան իր անձնական հանգիստի ժամերը գոհած է յանուն այդ աշխատանքին, մանաւանդ երբ այդ թուականներուն հայերէն տառերու գրաշարութեան եւ տպագրութեան ահագին դժուարութիւն ունէր Գանատայի շրջանը:

Տեղին է յիշել, որ ան սիրալոյսով իր գործատեղին տրամադրած է, որպէսզի շեփորախումբը հերթական փորձերը կատարէ:

Եղբ. Պերճ հաւատացած է, որ Հ.Մ.Ը.Մ-ի իւրաքանչիւր պատասխանատու պարտաւոր է իր ունեցած փորձառութիւնն ու կուտակած գիտելիքները փոխանցել յաջորդ սերունդին, ի շահ Հ.Մ.Ը.Մ-ի բարգաւաճման ու վերելքին:

Այս բոլոր յատկութիւնները, անշուշտ, գնահատել պէտք էր ու ան արժանացաւ Հ.Մ.Ը.Մ-ի «Ծառայութեան» շքանշանին:

Հողը թեթեւ գայ վրադ, յարգելի՛ եղբ. Պերճ:

## ԳՈՅԺ

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը կը գուժէ Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի Շրջանային Վարչութեան նախկին անդամ եւ «Արժանեաց» շքանշանակիր՝

## ԵՂԲ. ՕՆՆԻԿ ՇԱՆԿԱՅԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 26 Յունուար 2019-ին, Աթէնքի մէջ, Յունաստան:



# ՕՐԻՆԱԿԵԼԻ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԵՂԲ. ԱՔՕ ԳԱՍԱՊԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւն ՊՈՒՐԾ ՀԱՍՈՒՏ —

**Հ** .Մ . Ը . Մ - ի մեծ ընտանիքը խոր վիշտով կորսնցուց Լիբանանի լիբանանի կենսունակ եւ երախտաշատ դէմքերէն եղբ. Աքօ Գասապեանը, որ 1937 թուականին ծնած է Պուրճ Համուտ,



Նոր Ատանա թաղամաս: Ան միութեան անդամակցած է փոքր տարիքէն՝ իբրեւ Ֆուլթպոլի խումբի մարզիկ եւ խմբապետ: Երկար տարիներ մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուլթպոլի ներկայացուցչական խումբին, որուն հետ Լիբանանի ախոյեանութիւնը նուաճած է 1963-ին եւ 1969-ին, իսկ բաժակը՝ 1962-ին: 1970-ին, ան Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուլթպոլի խումբին հետ Լիբանանը ներկայացուցած է Ասիոյ Ֆուլթպոլի ախոյեանութեան, Թեհրանի մէջ: Օրին, խումբը գրաւած է ախոյեանութեան երրորդ դիրքը՝ մերթեւոյ խաղալ Իսրայէլի խումբին դէմ: Եղբ. Աքօ Գասապեան, իբրեւ տիպար մարզիկ, մաս կազմած է նաեւ Լիբանանի Ֆուլթպոլի ազգային խումբին՝ իբրեւ

խմբապետ եւ մասնակցած է բազմաթիւ մրցումներու՝ Եւրոպայի, արաբական աշխարհի եւ Ճափոնի մէջ՝ խումբին ապահովելով պատուաբեր արդիւնքներ: Հ.Մ.Ը.Մ.ական օրինակելի մարզիկ եղբ. Աքօ Գասապեան ընտրուած է Ասիոյ լաւագոյն Ֆուլթպոլիստ: Եղած է նաեւ փինկ-փոնկի մարզիկ: Աւելի ուշ, եղբայր Աքօ սիրով ստանձնած է Հ.Մ.Ը.Մ.ի երկրորդական եւ կրտսեր խումբերու վերակազմութիւնը եւ կատարած է ապագայ մարզիկներու պատրաստութեան անշահախնդիր աշխատանք: Եղած է ներկայացուցչական խումբի մարզիչ եւ թեքնիք պատասխանատու՝ միշտ շեշտը դնելով այն դադափարին վրայ, որ Հ.Մ.Ը.Մ.ը պարտութիւն չի ճանչնար, ուստի ամէն ջանք ի գործ պէտք է ընել, որպէսզի մարզական խումբերը պատուաբեր եւ միութեան վայել յաղթանակներ կերտեն:




Մարզական կեանքին մէջ իր ունեցած յատկանշական ներդրումին կողքին, եղբ. Աքօ Գասապեան երկար տարիներ մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Ֆուլթպոլի Շրջանային յանձնախումբին: Եղած է նաեւ խումբի մարզիչ եւ պատասխանատու՝ միշտ մերթեւոյ նիւթական որեւէ վարձատրութիւն: Միութեան մէջ իր ունեցած նուիրեալ գործունէութեան համար, ան արժանացած է Հ.Մ.Ը.Մ.ի «Մառաշտութեան» շքանշանին:



Հ.Մ.Լ.Մ-ի նկատմամբ իր նուիրումն ու սէրը ան փոխանցած է իր երեք զաւակներուն:

Եղբ. Աբօ մեզմէ հեռացաւ 28 Դեկտեմբեր 2018-ին, սակայն իր ետին ձգեց համեստ մարդու, տիպար եւ առաքինի Հ.Մ.Լ.Մ-ականի յիշատակելի անուն՝ թէ՛ իբրեւ փայլուն մարզիկ եւ տքնաջան մարզիչ եւ թէ՛ իբրեւ նուիրեալ վարչական, միշտ փայլուն արդիւնքներու համար պայքարող Հ.Մ.Լ.Մ-ի շահերուն համար գործող միութենական: Ան եղած է այն անձը, որ միշտ պատուով կրած է Հ.Մ.Լ.Մ-ի շապիկը, ինչ որ օրինակ պէտք է դառնայ Հ.Մ.Լ.Մ-ի ապագայ սերունդներուն:



# ԵՂԲ. ՍԱՄՈՒԷԼ ՊՈՅԱԾԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Եսայի Դաւթեան  
ԱՅՆՃԱՐ

**Ա**րդէն իսկ ամիսներ անցած են եւ եղբ. Սամուէլ Պոյածեանը կը բացակայի մեր կեանքէն:

Եղբ. Սամուէլ Պոյածեան ծնած է Մուսա Լերան Խտրուպէկ գիւղը, 1935-ին, Նշան եւ Ուսանա Պոյածեաններու ընտանեկան յարկին տակ: Ան ծնունդ առած է ազգասէր, եկեղեցասէր եւ հայրենասուէր ընտանիքի մը մէջ: Այդ ոգին իր մէջ կենդանի մնաց ամբողջ կեանքին ընթացքին:

1939-ին, իր հայրենակիցներուն հետ ան տեղափոխուած է Այնճար եւ ճաշակած այն բոլոր տառապանքները, որոնք վիճակուած են զաղթական մուսալեռացիներուն:

Այնճարի մէջ ան կը յաճախէ Ազգ. Յառաջ վարժարան, զոր յաջողութեամբ աւարտելէ ետք կը մեկնի Վենետիկի Միթիթեան վարժարան, ուր աչքի կը զարնէ իր ուշիմութեամբ, բժախնդրութեամբ եւ աշխատասիրութեամբ:

Վենետիկի մէջ ուսումը աւարտելէ ետք կը դառնայ Լիբանան եւ մուտք կը գործէ ուսուցչական ասպարէզ՝ դասաւանդելով հայագիտական նիւթեր: Նոյն ատեն, ան կը հետեւի Սէն Ժոզէֆ համալսարանի հայագիտական ամպլոնի դասընթացներուն, զորս կ'աւարտէ փայլուն արդիւնքներով՝ ստանալով համապատասխան վկայական:

1964-ին կ'ամուսնանայ Մարօ Պոյածեանի հետ՝ կազմելով հայկական ամուր ընտանիք եւ բախտաւորութեամբ երեք զաւակներով՝ Վիգէն, Հրայր եւ Վազգէն:

Եղբ. Սամուէլ Պոյածեան ամբողջ կեանք մը նուիրած է ու-

սուցչութեան՝ դասաւանդելով Հայ Կաթողիկէ Մեսրոպեան, Սէն Կրէկուար եւ Ազգ. Լեւոն եւ Սոփիա Յակոբեան վարժարաններուն, ինչպէս նաեւ՝ Սէն Ժոզէֆ համալսարանին մէջ:

Եղած է սիրուած ուսուցիչ, ազգասէր եւ հայրենասուէր: Ան յատուկ սէր ունեցած է Հ.Մ.Լ.Մ-ի մեծ ընտանիքին հանդէպ, որուն ծառայած է ամբողջ կեանքին ընթացքին, ժրտէյտի եւ Այնճարի մասնաճիւղներուն մէջ:

Չկայ Հ.Մ.Լ.Մ-ական մը, որ չճանչնայ եւ չյարգէ եղբ. Սամուէլը:


Համոզումով եւ բժախնդրութեամբ կատարած է ան իր բոլոր աշխատանքները՝ ոգի դնելով գործին մէջ:

Հ.Մ.Լ.Մ-ը իր մեծ ընտանիքն էր, որուն հաւատաւոր անդամը մնաց ան, նոյնիսկ երբ առողջական պատճառներով դադրեցաւ գործօն անդամ ըլլալէ:

Եղբ. Սամուէլին օրինակը խօսուել է եւ կենդանի՝ բոլոր Հ.Մ.Լ.Մ-ականներուն համար:

Վերջապէս, սերունդներ դաստիարակած եւ կրթած ուսուցիչ էր եղբ. Սամուէլը: Ուսուցիչ՝ նաեւ Հ.Մ.Լ.Մ-ի սկստաններուն համար, որոնք յարգանքով կը նայէին իրենց Հ.Մ.Լ.Մ-ական եղբօր:

Յարգանք եղբ. Սամուէլ Պոյածեանի յիշատակին: Վարձքը կատար, եղբ Սամուէլ: Կը խոնարհինք քու շիրիմիդ:





# ԵՂԲ. ՎՐԷՓ ԹԱԶԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



**Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւն  
ՊՈՒՐՑ ՀԱՍՈՒՏ**

Ծառայասէր Հ.Մ.Ը.Մ.ական մը եւս կորսնցուցինք:

Մահուան ահաւորութիւնը այն պահուն կը գգանք, երբ դէմ յանդիման կու գանք դառն իրականութեան հետ, ու երբ մեր մօտիկներէն եւ հարազատներէն մէկը յանկարծ անվերադարձ կը մեկնի՝ սուգի մատնելով իր շրջապատը:

Այսպէս անակնկալ ու ցնցիչ եղաւ եղբ. Վրէժին մահուան բօթը՝ 29 Մայիս 2019-ին: Անոր անհաւատալի մեկնումով կորսնցուցինք ազնիւ հայրդի մը, ընտանիքի բարի հայր մը, յոգնութիւն չճանչցող եւ իր սկզբունքներուն ու համոզումներուն կառչած յամառ միութենական մը:

Եղբ. Վրէժ Թազեան, իբրեւ խոնարհ զինուոր, հաւատաց իր միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ին, դարձաւ միութենական եւ իբրեւ խոնարհ ծառան այդ միութեան՝ անշահախնդրօրէն գործեց կեանքին ամբողջ տեւողութեան:

Հ.Մ.Ը.Մ.ի կառուցին բոլոր «դասարանները» յաճախելով, եղբ. Վրէժ եղած է գայլիկ, սկառտ, պասքէթպոլի փայլուն մարզիկ, Հ.Մ.Ը.Մ.ի Այնճարի պասքէթի տղոց ու աղջկանց խումբերու մարզիչ, Հ.Մ.Ը.Մ.ի Այնճարի մասնաճիւղի վարչական: Գործած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան զանազան յանձնարարութիւններու մէջ եւ ապա ընտրուած է Շրջանային Վարչութեան անդամ եւ երկար տարիներ եղած է ԼԵՎԱՄ-ի յանձնարարութիւններ կատարող:

Բոլորս կը վկայենք եղբ. Վրէժին ազգասիրութիւնը, ծառայասիրութիւնը, Հ.Մ.Ը.Մ.ի նուիրումի ոգին ու անոր մարդկային արժանիքները, որոնք կամայ թէ ակամայ յարգանք ու սէր կը պարտադրէին իր անձին հանդէպ:

Անկարելի էր որ եղբ. Վրէժ բացակայէր ընկերային թէ մարզական հաւաքներէ, ազգային ձեռնարկներէ, տօնական հանդիսութիւններէ եւ իրեն համար կարեւորագոյնը նկատուող՝ Մայիսեան տոգանքներէ:

Աւա՛ղ:

Անոր ակամայ բացակայութիւնը նկատեցինք Կիրակի, 26 Մայիսին տեղի ունեցած Հ.Մ.Ը.Մ.ի Մայիսեան վերջին փառատօնին: Այդ օր ան դաշտ չէր ներկայացած:

Եղբ. Վրէժ Թազեան հասակ առած է Այնճար հայաւանին մէջ: Յաճախած է Ազգային «Յառաջ» վարժարան: Ընտանեկան իր բոյնը կազմած է Հ.Մ.Ը.Մ.ական քոյր Մարօ Գագանճեանին

հետ եւ կազմած է հայկական աւանդութիւններու հաւատարիմ ընտանիք, իր զաւակները դաստիարակելով ու թրծելով ազգային հայաշունչ կրթութեամբ:

Սիրելի՛ եղբ. Վրէժ,

Անակնկալ եւ լուռ մեկնումդ խոր վիշտ պատճառեց ընտանեկան պարագաներուդ, հարազատներուդ, շրջապատիդ եւ քու սիրած միութեանդ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքին ընդհանրապէս եւ Այնճարի մասնաճիւղին մասնաւորապէս:

Դեռ շատ կանուխ էր:

Առնելիք եւ տալիք ունէիր կեանքին:

Մէր եւ գուրգուրանք ունէիր տալիք ընտանիքիդ, զաւակներուդ եւ թոռներուդ:

Ուրախութեան պահեր ունէիր առնելիք անոնցմէ:

Տակաւին տալիք ունէիր միութեանդ:

Սակայն, ափսո՛ս, մահն ու ճակատագիրը ժամ չէին ճշդած քեզի. դաժան եղան անոնք, հզօր, ահաւոր ու անխիղճ:

Այս պահուն մեր աչքին առջեւ արագ-արագ կը տողանցեն պատկերներ. միասին ապրած միութենական պահեր, ժողովական կեանք, տողանցք, յաղթանակի ուրախութիւն, պարտութեան ու տխրութեան պահեր, խրախճանքներ, ԼԵՎԱՄ-ի մրցաշարքեր... պատկերներ, որոնք արագօրէն իրարու կը յաջորդեն մեր յիշողութեան պաստառին վրայ եւ կը դառնան յուշեր եւ անմոռանալի յիշատակներ:

Եղբ. Վրէժ Թազեանի նման հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներու արժանիքները թող վարակիչ ըլլան եւ օրինակելի թարմութիւն պահեն իրերայաջորդ սերունդներու մօտ:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը բոլոր մասնաճիւղերու անունով կը ցաւակցի տիկնոջ՝ քոյր Մարօյին, զաւակներուն, հարազատներուն ու բարեկամներուն, եւ Հ.Մ.Ը.Մ.ի Այնճարի մասնաճիւղի վարչութեան առաջարկին ընդառաջելով, Շրջանային Վարչութեան որոշումով գայն յետ մահու կը պարգեւատրէ միութեան «Մառայնութեան» շքանշանով:

Վարձքդ կատար սիրելի եղբ. Վրէժ: Յարգանք յիշատակիդ: Հողը թեթեւ գայ վրադ:





# ԵՂԲ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՄԱՀՈՒՆԻԻ ԱՆՄԵՌ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(ՄԱՀՈՒԱՆ Ա. ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ)

**22** Հոկտեմբերին կ'ամբողջանայ եղբ. Յարութիւն Անմահունիի մահուան առաջին տարելիցը:

Չկայ Հ.Մ.Ը.Մ.ի Կիպրոսի միաւորին ծանօթ մը, որ ճանչցած ու տեսած չըլլայ եղբ. Անմահունիին: Իսկ ով որ տեսած կամ ճանչցած չէ, անպայման որ լսած է իր մասին:

Եղբ. Յարութիւն Անմահունի ծնած է 1927-ին, Նիկոսիա: Փոքր տարիքէն ան մեծ սէր ունեցած է սկաուտութեան հանդէպ: Յաճախած է Ազգ. Մելիքեան-Ուզունեան վարժարան եւ 1943-1944 տարիներուն՝ Մելգոնեան Կրթական Հաստատութիւն:

1935-ին ան մաս կազմած է Մելիքեան-Ուզունեան վարժարանի գալլիկական, ապա նաեւ՝ սկաուտական չորրորդ խումբին: 1943-ին ան եղած է Մելգոնեանի եօթներորդ անուանի խումբին Վարիչ Առաջնորդը:

1959-ին, եղբ. Անմահունի կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի Կիպրոսի 77-րդ խումբին հիմնադիրներէն մէկը: Կիպրոսի ընդհանուր արիապետ եղբ. Յ. Փալամուտեանի եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի ատենապետ եղբ. Ա. Մահտեսեանի քաջաբերանքով ան եղած է Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի անուանի խումբին ընդհանուր արիապետը: Նոյն տարին ան մասնակցած է համակիրական խաղաղութեան ճամպորիին:


1962-ին եղբ. Անմահունի Լոնտոնէն ստացած է «Փայտէ տախտակ» (Wood Badge): 1963-ին ան մասնակցած է Մարաթոնի համաշխարհային 11-րդ ճամպորիին:

1968-ին ան մաս կազմած է Կիպրոսի սկաուտական վերին մարմնին:

1965-էն ան եղած է Կիպրոսի հայկական սկաուտական բոլոր խումբերու՝ AYMA-ի, Նարեկ Ազգային Վարժարանի եւ Մելգոնեան Կրթական Հաստատութեան շրջանային գործավար, վերակազմակերպելով անոնց գործունէութիւնը: 1978-ին եւ 1986-ին, եղբ. Անմահունի մասնակցած է համա-Հ.Մ.Ը.Մ.ական առաջին եւ երրորդ բանակումներուն, Քայլամոս եւ Լոնտոն:

Եղբ. Անմահունի շրջան մը մաս կազմած է նաեւ AYMA-ի ֆուլթայոյի խումբին:

Արհեստով ան լուսանկարիչ էր: Երկար տարիներ գործած է Կիպրոսի երկրագործութեան նախարարութեան մէջ: Միւրած է բանաստեղծութիւնը եւ գրականութիւնը: Ունեցած է գեղանկարչական նախասիրութիւններ եւ կեանքի վերջին



տարիներուն գեղանկարած է 80-է աւելի պատանուներ: Աշխատակցած է հայ մամուլին եւ հրատարակած է երկու գրքոյկ եւ մէկ հատոր. «Քերթնածներ մօր սիրոյ մասին» (1998), «Հայ լեզուի հատրնտիր հաւաքածոյ» (1999) եւ «Անցեալս ինծի հետ» (2009):

Միութենական եւ ազգային երկարամեայ ծառայութեան առ ի գնահատանք, եղբ. Անմահունի պարգեւատրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան միութեան 50-ամեակի շքանշանով (1968), Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանով (2003), Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով (2001), ինչպէս նաեւ՝ Կիպրոսի յաջորդական նախագահներու (Մակարիոս Արք., Կիպրիանոս, Լիլիտիա) եւ սկաուտական շարժումի տասնեակ մը շքանշաններով:

Եղբ. Յարութիւն Անմահունի Հայաստանի վերանկախացումէն քաջաբերուած՝ նիւթական իր մասնակցութիւնը բերած է հայկական բանակի օժանդակութեան գործին: Առայդ, ան արժանացած է «Անդրանիկ Օզանեան» գերատեսչական շքանշանին (2009):

Հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ական մը ըլլալու կողքին, Յարութիւն Անմահունի երգուեալ Դաշնակցական մըն էր:

Եղբ. Յարութիւն Անմահունի մահացաւ 91 տարեկանին, յետ կարճատեւ հիւանդութեան: Յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ 24 Հոկտեմբեր 2018-ին, Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ: Այս առիթով Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի սկաուտները պատուի կանգնեցան Անմահունիի դագաղին շուրջ: Դամբանական խօսքերէ առաջ ընթերցուեցան Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին եւ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Յաթէյ Չարչօղլեանի ցաւակցազիրները:


Դամբանական խօսքեր արտասանեցին Կաթողիկոսական Փոխանորդ Խորէն Արք. Տողրամաճեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի անունով եղբ. Յակոբ Գազանճեան եւ Կիպրոսի սկաուտական ֆետերասիոնին ներկայացուցիչը:

Գերեզմանատան մէջ, թաղման արարողութենէն ետք, յունարէնով խօսք առաւ կիպրահայ համայնքի մասին հետազօտող Ալէքսանտրոս Հաճիլիրաս, իսկ Հ.Յ.Դ. Կիպրոսի կոմիտէին անունով հրաժեշտի խօսք փոխանցեց Արթօ Դաւիթեան, որմէ ետք՝ ներկաներու «Վէրքերով լի...» երգով եղբոր յոգնատանջ մարմինը յանձնուեցաւ Կիպրոսի հողին:



# ԵՂԲ. ՅԱՐՈՒԹԻԻՆ ՊԱՐՍԱՄԵԱՆԻ ԱՆԹ-ԱՌ-ԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Արմեն Բեռլանց  
ՀԱԼԷՊ



**Հ**ՄԼՄ-ի ազգանուէր գործունէութեան մէջ, անմնացորդ ծառայութիւն մատուցողներու յառաջատար եւ ընտրանի հոյիին կը պատկանի եղբ. Յարութիւն Պարսամեան, որ անխոնջ ու բազմաշխատ նուիրեալ մը եղաւ: ՀՄԼՄ-ականները իրեն համար եղած էին իսկական հարազատ եղբայրներ, որոնց նկատմամբ ան անսահման սէր եւ գուրգուրանք կը տածէր սեփական անձէն աւելի: Համբերութեամբ կը լուծէր բոլոր հարցերը: Ատելութիւն բացարձակապէս չունէր: Փնտռուած անձնակազմները մըն էր թէ՛ պետական եւ թէ՛ միութենական շրջանակներէ ներս: Ահա թէ ինչո՞ւ, աւելի քան 60 տարի ան անհաշիւն դրօշին ծառայեց ՀՄԼՄ-ին, հաւատարմով անոր ազգանպաստ եւ հայաստանէր գործունէութեան:

Եղբ. Յարութիւն ծնած է Խարբերդ, 1926-ին, ապա ծնողքին հետ հաստատուած է Հալէպ: Յաճախած է Կրթասիրաց վարժարան, որմէ ետք ուսումը շարունակած է Ֆրանսական «Փրեմ Փարթի Լայք» դպրոցը եւ տիրացած՝ երկրորդական վկայականի: Հետագային, ան մոտեք գործած է գործի ասպարէզ:

1940-ին անդամագրուած է ՀՄԼՄ-ի շարքերուն: Իսկ 1975-էն սկսեալ մաս կազմած է ՀՄԼՄ-ի յաջորդական վարչութիւններուն: 1978-ին, յետ պաշտօնական քուէարկութեան, ան անդամ դարձած է Հայկ պի նահանգապետական խորհուրդին եւ այս պաշտօնը վարած է 12 տարի: 1996-2000 ստանձնած է ՀՄԼՄ-ի Հալէպի մասնաճիւղի վարչութեան ատենապետութիւնը: 1993-ին, իր երկարամեայ ծառայութեան համար, ՀՄԼՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը զայն պարգեւատրած է «Ծառայութեան» շքանշանով: Ան պարգեւատրուած է նաեւ Սուրիոյ մարզական ֆետերասիոնին կողմէ՝ մասնակցութիւն վկայականով եւ շքանշանով:

Եղբ. Յարութիւն Պարսամեան մեծ ներդրում ունեցած է Պոսթան Փաշայի ՀՄԼՄ-ի մարզաւանի հողաչերտի ապահովման եւ շինարարական աշխատանքներուն:

Ան եղած է Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Գաւառական Ժողովի անդամ, ինչպէս նաեւ մաս կազմած է Ազգային Վարչութեան կալուածոց հոգաբարձութեան: Երկար տարիներ եղած է Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանի խնամակալութեան անդամ:

Իրեւ զանազան մարզախաղերու պատուիրակութիւններու պատասխանատու, ան այցելած է Հայաստան, Յրանսա, Յորդանան եւ Եգիպտոս:

Եղբ. Պարսամեանի համար ՀՄԼՄ-ին անդամակցիլ կը նշանակէր ըլլալ եւ գործել մաքրամաքուր միջնորդութիւն մէջ: Իրեն համար ՀՄԼՄ-ը ո՛չ միայն մարզական միութիւն էր, այլեւ՝ հոգեւործարան, ուր պատանին կը կոփուի, կը զարգանայ եւ կը թրծուի ազգային արժէքներով ու գաղափարաբանութեամբ:

Եղբ. Յարութ ստանձնեց կուռ, պարկեշտ եւ վստահելի նկարագիր պահանջող դժուար ու պատասխանատու պարտականութիւններ: Շահեցաւ օրուան ազգային

թէ միութենական ղեկավարութեանց անվերապահ վստահութիւնը: Միշտ գործեց անխոնջ կերպով, ու որքան գործեց՝ այնքան իր մէջ արմատացաւ եւ զօրացաւ աւելի նուիրուելու վսեմ զգացողութիւնը: Ան անմասն չմնաց իր պաշտած միութեան յաղթանակներէն, միաժամանակ ապրեցաւ քաղաքական փոթորիկի դժուարին պահեր:

Իր օրերուն, ՀՄԼՄ-ի ֆուլթայլի խումբը զարթօնքի շրջան մը ապրեցաւ: ՀՄԼՄ-ի պետական գործերը, իր անսակարկ ջանքերով, հեզասահ ընթացք մը ունեցան եւ յաջողութեամբ պսակուեցան:

Եղբ. Յարութ Պարսամեան մնաց միշտ լաւագոյնին ձգտող, վեհանձն ու տիպար ՀՄԼՄ-ականը, «Բարձրացի՛ր բարձրացուր»-ի հաւատարիմ պատգամախօսը:

Հայկ պահպանութիւնը եւ ՀՄԼՄ-ի մեծ ընտանիքը իր յաւելտ մեկնումովը կորսնցուցին վստակաշատ, բազմատաղանդ, անձնուէր եւ կորովի ազգային մը:

## ԳՈՅԺ

Հ.Ս.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը սրտի խոր կսկիծով կը գուժէ Հ.Ս.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանակիր, վստակաշատ ըսկաուտ խմբապետ՝

## ԵՂԲ. ՄԻՅՐԱՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Շաբաթ 9 Մարտ 2019-ին, Հալէպի մէջ:



# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ...

Շարունակուած Բ. կողքէն

Կեդրոնական Վարչութիւնը իր գոհունակութիւնը փոխանցեց Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւններուն կազմակերպած 100-ամեակի հանդիսաւոր եւ արժանավայել ձեռնարկներուն ուղղութեամբ, որոնք միացան ամբողջացնելու Կեդրոնական Վարչութեան կազմակերպած հանդիսութիւններն ու նախաձեռնութիւնները:

Կեդրոնական Վարչութիւնը որդիական ու երախտագիտական զգացումներով անդրադարձաւ նաեւ Ե.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կեհափառ Յայրապետին միութեան շնորհած կոնդակին կողքին՝ «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանին յատուկ պարգեւատրման, որ յաւելեալ կշիռ տուաւ 100-ամեակի ձեռնարկներուն եզրափակման:

Քննարկուեցան նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիռ շրջաններու ներկայ իրավիճակն ու նորաստեղծ մասնաճիւղերու կարելիութիւնները, մանաւանդ Սոսկուայի եւ շրջակայքի մէջ գործադրուող աշխատանքները:

Կեդրոնական Վարչութիւնը ծանրացաւ յաջորդող օրերուն Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի մասնաճիւղի հիմնադրութեան գործընթացին ու մանրամասնութիւններուն վրայ, շեշտելով այս մասնաճիւղին գոյութեան անհրաժեշտութիւնն ու հրամայականը:

Լիազումարը քննարկեց եւ ճշդեց երիտասարդական Ա. Համագումարի մանրամասնութիւններն ու ուղղութիւնը, որուն հիման վրայ ընթացան համագումարին աշխատանքները: Երիտասարդական Ա. Համագումարը իր աւարտին ընտրեց երեք անդամներ, որոնք որպէս հրաւիրեալ պիտի մասնակցին Պատգամաւորական 12-րդ ժողովին եւ համագումարի մտահոգութիւններն ու առաջարկները պիտի փոխանցեն:

Կեդրոնական Վարչութիւնը դրական ձեւով անդրադարձաւ Եւրոպայի մէջ ընթացք առած փոխադարձ գործակցութեան եւ միջ-մասնաճիւղային ձեռնարկներու նախաձեռնութիւններուն, որոնք արդիւնքն են Կեդրոնական Վարչութեան կազմակերպած Եւրոպայի ատենապետներու ժողովներուն: Ար-



ծարծուեցան նաեւ վերջին շաբաթներուն Լոս Անճելըսի մէջ գումարուած Ամերիկեան ցամաքամասի ատենապետներու ժողովին դրական անդրադարձն ու արդիւնքները:

Կեդրոնական Վարչութիւնը քննարկեց նաեւ Հոկտեմբեր 2019-ին գումարելի Պատգամաւորական 12-րդ ժողովին կապուած առաջարկներ, միութեան յառաջիկայ աշխատանքներու բարելաման հեռանկարով:

Քննարկուեցան նաեւ սկաուտական գիրքերու այժմեականացման վերջին հանգրուանի աշխատանքները, որոնք պիտի իրագործուին «Սիիրան Շիմշիրեան Սկաուտական Ֆոնտ»-ի միջոցով: Քննարկուեցան նաեւ մարզիկներու եւ մարզիչներու դաստիարակչական սեմինարներու անհրաժեշտութիւնն ու գործադրման մանրամասնութիւնները: Արծարծուեցան նաեւ «Մարզիկ» պաշտօնաթերթի, արհեստագիտական տեղեկատուութեանց, Հ.Մ.Ը.Մ.ի իրերու առցանց վաճառքի (online shop), Հ.Մ.Ը.Մ.ի թանգարանին եւ հրատարակութիւններուն կապուած մանրամասնութիւնները:

Կեդրոնական Վարչութիւնը քննարկեց նաեւ 100-ամեակին առիթով հաստատուած «Հ.Մ.Ը.Մ.ի եկամտաբեր հիմնադրամ»-ի (Endowment Fund) մանրամասնութիւնները եւ եզրակացուց Կեդրոնական Վարչութեան կողմէ 100-ամեակի կնքահայր եղբայրներուն անունով յաւելեալ 50.000 ամ. տոլարով օժանդակել այս աշխատանքին յաջողութեան, ընդհանուր գումարը բարձրացնելով 100.000 ամ. տոլարի, ինչպէս նաեւ հետապնդել այս հիմնադրամը բարգաւաճեցնելու կարելիութիւնները:

Կեդրոնական Վարչութիւնը իր Դ. Լիազումարի աւարտին կը հաստատէ, որ այս քառամեակը, որ կը զուգահիշէ միութեան հիմնադրութեան պատմական նշանակութիւն ունեցող 100-ամեակին, նշուեցաւ փառաշուք եւ արժանավայել ձեւով, վեր առնելով միութեան հետապնդած արժէքներն ու արժանիքները եւ շեշտելով անոր ունեցած եւ շարունակուող անուրանալի եւ կենսական դերակատարութիւնը:



